ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) Թիվ-12 (1694) Դեկտեմբեր 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Ամուր հավատով և հանձնառությամբ մուտք գործենք 2025 թվական (էջ 1-2)

2- Քաղաքական

Անի Մելքոնյան
2024 թվական. քաղաքական ամփոփում (էջ 3-7)

3- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Հայ մարդու և հասարակական շահի ընկալումների մասին (էջ 8-10)

4- Բնապահպանություն

Արմեն Վարդանյան
2024 թվականը հայրենի բնաշխարհի համար հերթական կորսված տարի (էջ 11-14)

5- Պատմության լուսարձակ

Հայկազուն Ալվրցյան
Համշենահայության ինքնապաշտպանական մարտերը 1915-1923 թթ. (1916-17 թվականներ) մաս երկրորդ (էջ 15-20)

Խաչատուր Ստեփանյան
Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը Հունաստանում (1890-ականներից մինչև 1924 թվականը) (էջ 21-28)

6- Դեմքեր և դեպքեր

Արմեն Կարապետյան
Հայաստանը պետք է խոսի (Թումանյանը և Անդրանիկը հայրենիքի համար ճակատագրական պահերին) (էջ 29-31)

Արտաշես Շահբազյան
Սերգեյ Փարաջանովն ու իր կինոն (էջ 32-36)

Մովսէս Ծիրանի
Սարգիս Փարաջանեան «Մեր ժամանակի ամենահանճարեղ բեմադրիչը...» (էջ 37-40)

Սերգեյ Փարաջանով
Ես գրեցի սցենարը, ես ջանացի նկարել այն... (էջ 41)

Գնահատականներ և կարծիքներ Փարաջանովի մասին (էջ 42)

7- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Պիտակաւորումներէն անդին (էջ 43)

Պարգեւ Աւագեան
Գողցան (էջ 44)

Ամուր հավատով և հանձնառությամբ մուտք գործենք 2025 թվական

Հայությունը ճանապարհում է ևս մեկ մղձավանջային, եթե չասենք ողբերգական, տարի: Ունեցանք խաղաղ ճանապարհով տարածքների, դիրքերի հերթական զիջումները: Ապրեցինք այն տագնապով, որ կորուստները կարող էին ավելի մեծ և ավելի ճակատագրական լինել, չհաշված պատերազմի մշտական սպառնալիքը: Ադրբեջանաթուրքական տանդեմը խուսափեց ավելի կոշտ մեթոդներից երբ փափուկ ճնշմամբ անգամ Հայաստանի իշխանությանը հնարավոր էր պարտադրել նորանոր զիջումներ: Մյուս կողմից կայունության պահպանման գործում դեր խաղաց արտաքին ուժերի ու ատյանների ազդեցությունը, ինչպես նաև տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական գործոնների անուղղակի ներգործությունը:

Այս ընթացքում աշխարհը փոթորկող քաղաքական մեծ ու փոքր գործընթացներից դուրս քշված Հայաստանի իշխանությունը դոնեդուռ ընկած փորձեց խաղաղություն մուրալ անգամ... թուրքերից, հավատալով կամ իրեն դեռ հավատացողներին շարունակելով խաբել, թե «Խաղաղության պայմանագիրը» կբերի կայուն և վերջնական խաղաղություն: Ետ նայելով անցած տարիներին ու տասնամյակներին՝ ակնհայտ է դառնում, որ ոչ մի պայմանագիր կամ պայմանավորվածություն արգելք չէ Ադրբեջանի համար նպաստավոր պահին այն ոտնահարելու համար և խարդավանքի, կեղծիքի, ուժի սպառնալիքի և դրա գործադրման ճանապարհով հասնելու իր ուզածին: Եթե դատենք աղետաբեր խմբակի իշխանության գալու ժամանակահատվածից, երբ Հայաստանը ռազմաքաղաքական հաղթանակների և առավելությունների դիրքից գլորվեց մինչև խայտառակ պարտությունները, ունեցած ռազմական և քաղաքական դիրքերի կորուստը, կտեսնենք, որ Ադրբեջանի նվաճումներն ու ձեռքբերումներն անմիջականորեն պայմանավորված են եղել նիկոլփաշինյանական ձախողումների, զիջումների, կորուստների և հետագա նահանջների պատրաստակամության հետ: Կարելի է 2018 թվականի սահմանագծից սկսած անդրադառնալ, թե ադրբեջանական կողմի պահանջները ինչ են եղել և մինչև ուր են հասել հիմա դրանք: Անգամ 2020 թվականի կանխատեսելի պարտությունից հետո թշնամի հարևանը չէր պատկերացնում, թե հնարավոր է դառնալու Արցախի ամբողջական զավթումը: Հիշենք, որ Ադրբեջանն այդ շրջանում ձգտում էր Լաչինի միջանցքի եղած կարգավիճակի դիմաց հասնելու նման կարգավիճակի, այսպես ասած, Զանգեզուրի միջանցքի պարագայում: Որքան էլ Փաշինյանը փորձի խույս տալ Արցախը հանձնելու պատասխանատվությունից, մինչ նրա «զրոյական կետից սկսած դիվանագիտությունը» Ադրբեջանի համար անգամ ակնհայտ էր, միջազգայնորեն Արցախի ինքնորոշման իրավունքը ընդունելու փաստը և բանակցություններն ընթանում էին ազատագրված մյուս տարածքների շուրջ: Հակառակորդի մտքով իսկ չէր անցնում, թե հնարավոր կդառնա ոչ միայն երկարատև պաշարման մեջ պահել անօրինական պատերազմով կիսված Արցախը, այլև

զավթել այն վերջնականապես՝ արցախցիներին դուրս մղելով իրենց պատմական հայրենիքից:

Ավելին, Ադրբեջանի զորքը մխրճվեց Հայաստանի սահմաններից ներս, գրավեց ռազմավարական առումով կարևոր դիրքեր ու ճանապարհներ, քանի որ Հայաստանի իշխանությունը ոչ միայն հակադարձող քայլեր չձեռնարկեց, այլև հանդուրժեց ու լռեց բոլոր ցեղասպանական գործողությունների մասին ու, ավելին, սկսեց արդարացնել թշնամու ակնհայտ հանցագործությունները: ՀՀ իշխանությունը 44-օրյա պատերազմից հետո, փաստացի պաշտպանելով հակառակորդի գործողությունները, ծպտուն չհանեց այն մասին, որ այդ ագրեսիան ղեկավարվել է թուրքական գլխավոր շտաբի կողմից, զինվորական մասնագետների, կռվող ուժի ու ռազմական տեխնիկայի տրամադրման հետ միասին: Հայաստանի իշխանությունը փաստացի քողարկեց ու պաշտպանեց Պակիստանի և Իսրայելի մասնակցությունը՝ 44-օրյա պատերազմին լռելով ռազմական ագրեսիային նրանց ունեցած զգալի օժանդակության մասին: Հայաստանի իշխանության կողմից Արցախը Ադրբեջանի մաս ճանաչելու փաստն ամենամեծ և ժամանակին արված աջակցությունն էր թշնամի երկրի իշխանություններին օրինականացնելու համար կատարած ագրեսիան, ինչպես և ձեռնարկելու տեղի հայության ամբողջական պաշարումը, նոր պատերազմը և հայաթափման ոճրագործությունները: Ասվածի խոսուն հաստատումն է նաև այն իրողությունը, որ 2023 թ. սեպտեմբերի 18-ի հարձակումից հետո, արցախահայությանը բնաջնջման կամ արտագաղթի ցեղասպանական այլընտրանքի առջև կանգնեցնելու պահին ՀՀ վարչապետը շտապեց հայտարարել, թե Արցախի հայության ֆիզիկական գոյությանը ոչինչ չի սպառնում: Հայության շահերի՞ց է բխում, թե՞ թշնամու, երբ Փաշինյանի իշխանությունը Հայաստանում ընդդիմանում է իրենց բնական իրավունքների մասին բարձրաձայնելու արցախահայության փորձերին, խոչընդոտում է 120 հազար բռնագաղթածների մայր հայրենիքում, որպես գործոն և հայ հավաքականություն ինքնադրսևորվելու հնարավորությանը: Ավելին, նրանց նկատմամբ ճնշումները, իրավական և այլ սահմանափակումներն

ու հալածանքը պատճառ դարձան, որ արդեն մի քանի տասնյակ հազար արցախցի իր համար ապահով հանգրվան չտեսնի Հայաստանը և երկրորդ անգամ արտագաղթի հայրենիքից: Իսկ նրանք, ովքեր մնացել են երկրում, ապրում են իրենց հետագա ճակատագրի անորոշության, հեռանկարի բացակայության պայմաններում: Ո՞ւմ շահերից է բխում Արցախի գերեվարված ռազմաքաղաքական ղեկավարության իրավունքների պաշտպանության հարցում Հայաստանի իշխանության բացարձակ անգործությունը: Եվ սա արդեն այնքան ակնհայտ համաձայնության ու աջակցության կեցվածք է Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ, որ վերջիններն ուղղակի թքում են Հայաստանի իշխանության երեսին՝ հրապարակայնորեն առաջարկելով միասին իրականացնել հայ բանտարկյալների դեմ հարուցված քրեական գործի քննությունը:

Կարելի՞ է որևէ պետություն, կամ իշխանություն պատկերացնել, որը, թշնամու պահանջին ենթարկվելով, խաղաղ ձևով երկրի ամենապաշտպանված սահմանները զիջում է նրան, թույլ տալով մտնելու բնակավայրեր, երբ չկա ընդհանուր մոտեցում ողջ սահմանի սահմանազատման ու սահմանագծման վերաբերյալ, և դեռ սա ամենամեծ հանցագործությունն ու աբսուրդը չէ: Երկրի իշխանությունն ենթարկվելով ագրեսիվ թշնամու պահանջին՝ տարածքներ է զիջում այն պայմաններում, երբ այդ նույն թշնամու զորքը գրավել է իր երկրի տարածքները, ճանապարհներն ու սահմանները և վերադարձնելու ոչ մի մտադրություն չունի:

Ինչպե՞ս պետք է արձագանքի մի պետության ղեկավարությունը ագրեսիվ հարևանին, երբ վերջինը նրա երկիրը հայտարարում է իր երկրի Արևմտյան հատվածը: Աշխարհի ցանկացած իշխանություն ինչպե՞ս կարձագանքեր այս զավթողական հավակնություններին: Իսկ Հայաստանի իշխանությունն արդարացնում է Ադրբեջանին, նրա կեղծիքը հավասարեցնելով Արևմտյան Հայաստանի մասին հայ ժողովրդի հիշողության հետ: Հայաստանի իշխանությունը ոչ միայն արդարացնում, այլև ներդաշնակ ձևով արձագանքում է թշնամու պահանջներին, խոսելով Սահմանադրության փոփոխության, Ատոմակայանի փակման, միջազգային ատյաններում Հայաստանի բողոքներից հրաժարվելու, ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարմանը համաձայնելու և բազմաթիվ այլ թուրք-ադրբեջանական պահանջների հետ:

2009 թվականին պատերազմում պարտված և տարածքներ կորցրած Վրաստանի նախագահին Նիկոլ Փաշինյանը նամակով հորդորում է որպես պարտված ու անզոր ղեկավար կամավորապես հեռանալ իշխանությունից, որպեսզի այլ ղեկավարներ երկիրը դուրս բերեն ճգնաժամից: Ի՞նչ է անում այսօր նույն Փաշինյանը, երբ երկիր է կորցրել, ունակ չէ պաշտպանելու Հայաստանի սահմանները, փլուզման է հասցրել բանակը: Հայաստանի ղեկավարը հեծանիվ է քշում, երկրում և երկրից դուրս զբաղված է հաճելի գործերով, ինչպես և նախապատրաստվում է արտահերթ ընտրությունների: Իշխանությունը պահելու հարցը գլխավորն ու հիմնականն է նրա համար, իսկ երկրի ճակատագիրը, արտաքին հարաբերություններն ու քաղաքական կողմնորոշումների հարցերը իր փոխարեն որոշում են ուրիշները: Եվ որովհետև արտաքին շահագրգիռ ուժերն են որոշում Հայաստանի իշխանության անելիքը, այդ անելիքը չի բխում հայոց պետականության և հայ ժողովրդի շահերից: Իշխանության պահանջով սահմաններից դուրս են գալիս տասնամյակներով այն պաշտպանած դաշնակից երկրի զինված ուժերը, ինչպես և ծրագրված է դուրս գալը ռազմական հզոր դաշինքից: Հայաստանի իշխանությունը խոսում է Եվրասիական տնտեսական միությունից դուրս գալու մասին, երբ այս ուղղության վրա է կողմնորոշված իր հիմնական առևտուրը, այստեղից է Հայաստանը ստանում իր էներգակիրները, հիմնական մթերքը, ֆինանսական հսկայական տրանսֆերտները և այլն: Արտաքին հայտնի ուժերին իհարկե չի հուզում, թե ինչ կկատարվի հայ ժողովրդի հետ եթե Հայաստանի ոչ բարեկամական քայլերին իր դաշնակիցները պատասխանեն համարժեքորեն, իսկ Փաշինյանը պատկերացնո՞ւմ է այդ հետևանքները, թե հրահանգողներին նրա կարծիքը չի հետաքրքրում: Իշխանությունների տերերը երկիրը մղում են կործանման Անդրկովկասը ռուսական ազդեցությունից դուրս բերելու և թուրք-ադրբեջանական ենթակայության տակ դնելու համար: Հայաստանի իշխանությունը կարելին անում է այս ծրագրում իրեն վերապահված դերակատարությունն իրականացնելու համար, միայն թե մնա իշխանության ղեկին, անկախ նրանից, թե ինչպիսի Հայաստան կմնա: Իշխանությունն ու նրա առաջնորդը բոլորից լավ գիտեն, թե որքան պետական հանցագործություններ են կատարել և անասնական վախ ունեն իշխանափոխությունից: Բայց աշխարհը փոխվում է և ոչ միշտ՝ ի օգուտ քաղաքական դրածոների, ու անորոշ հեռանկարը վերջիններիս զցում է հիստերիկայի մեջ: Այս իմաստով 2025 թվականը կարող է դառնալ ճակատագրական փոփոխությունների տարի: Իսկ ո՞րն է հայրենի պետականությունը ճակատագրական փորձություններից փրկելու հարցում ազգային ուժերի դերը: Ակնհայտ է, որ մեր գլխավոր խնդիրը մենք ենք՝ հայ ժողովուրդը, որը, կամ հետևելով նիկոլփաշինյանական հավաքական անպատասխանատվության քարոզին երկրի հետ կգնա կործանման, կամ ճիգ կանի փրկելու իրեն ու երկիրը:

ՀՅԴ Բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը հաճախ տագնապով կրկնում էր հետևյալ միտքը. «Համատարած անկումի այս ընթացքով կարող ենք հասնել անվերադարձության կետին, որտեղից ետ գալ այլևս հնարավոր չի լինի»: Հայ ժողովուրդը, ազգային ուժերի առաջնորդությամբ կկարողանա՞ արդյոք անդունդից ետ վերադարձնել երկիրը: Իսկ ազգային ուժերը կներկայացնե՞ն արդյոք պայքարի ճանապարհային քարտեզ և վերափոխման ծրագիր, ինչը վերջապես կհամոզի ժողովրդին գնալու նրանց ետևից:

Հավատանք սեփական ուժերին, հավատանք որ պայքարը լինում է և՛ ծանր, և՛ երկարատև ու չի սահմանափակվում հրապարակներում գոռալով, և որ պայքարի ծրագրված ընթացքը կուրվագծի հաղթանակի ճանապարհը:

Հավատանք ինքներս մեզ, ամուր հավատով և պատասխանատվության հանձնառությամբ մուտք գործենք 2025 թվական: ■

2024 թվական. քաղաքական ամփոփում

Անի Մելքոնյան
Պատմաբան

2024 թ. դիմավորեցինք նույնպիսի ծանր զգացումով, ինչպես 2020-ին հաջորդած բոլոր տարիները, և չնայած Հայաստանի Հանրապետության հրապարակում իշխող վերնախավի համար հրավառություն ու խրախճանք էր, հայ ժողովուրդը ուրախանալու պատճառ ու սիրտ չուներ՝ 2024-ը դիմավորում էր հայաթափված Արցախով ու 120.000-ից ավելի հայրենազրկված արցախցիներով:

Իհարկե, անակնկալներ մատուցելու սովոր Հայաստանի իշխանությունը դեկտեմբերի 31-ի լույս հունվարի 1-ի գիշերը հերթական անակնկալը հրամցրեց հայությանը՝ արգելելով Ամենայն Հայոց կաթողիկոսի ամանորյա ուղերձի հեռարձակումը Հանրային հեռուստաընկերությամբ:

Մայր Աթոռից այդ մասին հայտնել էին. «Ցավոք, Ամանորի այս երեկո ստիպված պիտի լինենք անդրադառնալ տհաճ մի միջադեպի: Անկախության պատմության ողջ ընթացքում, դեռևս Վազգեն Ա Հայրապետի ժամանակաշրջանից, ավանդաբար Հանրային հեռուստաընկերության եթերով Ամանորի գիշերը երկրի ղեկավարի ուղերձից անմիջապես առաջ հեռարձակվում էր Ազգիս Վեհափառ Հայրապետի ուղերձը: Այս տարի Հանրային հեռուստաընկերությունը, վերջին պահին, առանց որևէ պատճառաբանության տեղեկացրեց, որ Վեհափառ Հայրապետի ամանորյա ուղերձը եթեր չի հեռարձակվի կեսգիշերից առաջ, ինչպես և ավանդաբար ընդունված էր: Փոխարենը առաջարկվեց Ամենայն Հայոց Հայրապետի ուղերձը ներկայացնել Լուրերի երեկոյան թողարկման ընթացքում, ինչը Մայր Աթոռի կողմից պատշաճ չնկատվեց և մերժվեց: Մնացած բոլոր մեղադրանքներն ու վերագրումները հերյուրանք են, իսկ նման որոշման պատճառների վերաբերյալ հարկ է դիմել Հանրային հեռուստաընկերությանը[1]»:

Սա իհարկե նախադեպը չունեցող խայտառակություն էր անկախ Հայաստանի պատմության մեջ: Ընդդիմադիր լրատվականները իհարկե հեռարձակեցին Վեհափառ Հայրապետի ուղերձը, որից մի հատված տեղադրում ենք, հասկանալու համար թե ինչու էր Հայաստանի ոչ բարով իշխանությունը վախենում այդ ուղերձից. «Փրկչական 2024 թվականը դիմավորում ենք խոր մտահոգություններով, դիմավորում ենք ահռելի կորուստների անամոքելի ցավը մեր սրտում: Ծանր տարի ապրեցինք, սակայն Տիրոջն ապավինած՝ հույսով ու լավատեսությամբ ենք նայում մեր ազգի ապագային: Արցախի բռնազավթման և հայաթափման, Հայաստանի շուրջ ստեղծված լրջագույն իրավիճակով և առկա հիմնախնդիրներով հանդերձ՝ հաստատակամ պիտի հաղթահարենք դժվարությունները՝ ամուր պահելով նվիրումն ու սերը առ հայրենին եւ հավատը առ մեր Ամենակալ Տերը:

….Մենք ժառանգներն ենք մի ազգի, որ տառապել ու չարչարվել է, բայց չի հանձնվել, ցեղասպանվել է, բայց չի կործանվել, սրատվել է, բայց չի մահացել:

Արդարև, չի կարող ընդհատվել պատմությունը մի ժողովրդի, որի տարեգրությունը զարդարված է աստվածապաշտության և հայրենասիրության հրաշալի վկայություններով, ապրելու և արարելու անընդմիջելի տենչանքով:

….Գիտակցենք, որ հայրենիքը այն միակ սրբազան վայրն է, որտեղ ամբարված են բոլոր ժամանակների հայ սերունդների աղոթքներն ու երազները, որտեղ շարունակ պիտի կերտվի հայոց ինքնությունը, և որի սրբազան հողից է հավետ ուժ առնելու հայ ժողովուրդը: Հոգածու սիրով շրջապատենք Արցախից բռնի տեղահանված մեր քույրերին ու եղբայրներին, նրանց մեջ առատացնենք հույսը, որ երբեք չմարի հայրենի Արցախ վերադարձի տեսիլքը, և զորեղ մնա հավատն առ Աստված: Աջակից լինենք կարիքավորներին ու նեղյալներին և Բարձրյալի օգնականությունը հայցենք անհետ կորած և գերյալ մեր զավակներին ու նրանց ընտանիքներին[2]»:

Կարծում ենք պարզ է, իր ուղերձում Վեհափառը խոսում էր հայոց ցեղասպանության մասին, որը իշխող ՔՊ-ն հանել է ՀՀ արտաքին քաղաքական օրակարգի առաջնահերթություններից, Վեհափառը հիշատակում է Արցախը և այնտեղ վերադառնա-

լու հույսը, ինչը, բնականաբար, Արցախը հանձնած և Արցախի հայաթափման ու ցեղասպանության գործում իր հանցակցությունն ունեցած իշխանության սրտով լինել չէր կարող:

Թվում է, միայն այսքանը բավական է, 2024 թ. քաղաքական իրադարձություններն ու «արժեհամակարգը» բնութագրելու համար, բայց ինչպես ասում են, սա դեռ ամենը չէր:

Հունվարի 10-ի կարևոր լուրն այն էր, որ Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանը Արցախի լուծարման հրամանագիրը չեղարկել է, «Չնայած Նիկոլ Փաշինյանի և իշխող վարչակարգի այլ ներկայացուցիչների սպառնալիքներին՝ Արցախի Հանրապետության վերջին նախագահ Սամվել Շահրամանյանը, մեր տեղեկություններով, Արցախի լուծարման հրամանագիրը չեղարկելու որոշում է ստորագրել, որի մասին հաշված թվով մարդիկ գիտեն: Որոշումը ստորագրվել է դեկտեմբերի 10-ին, իսկ պատճենն ուղարկվել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին …[3]»: Արցախի հետ պիղատոսաբար վարված և Արցախի ժողովրդի վտարանդի կառավարություն ունենալու իրավունքը ոտնահարող փաշինյանական վարչակազմն, իհարկե, Արցախի նախագահի սույն հրամանագրի մասին չպետք է խոսեր, փոխարենը գերադասելով Փաշինյան-Ալիև պայմանավորվածությամբ բռնի կերպով ու ցեղասպանական գործողություններով Արցախի «ադրբեջանականացումը» փաթաթել մե՛րթ նախագահ Շահրամանյանի, մե՛րթ ռուսների, մե՛րթ Հայաստանի նախկին իշխանությունների, մե՛րթ դաշնակցականների, մե՛րթ Աստծու վզին՝ շարունակելով Հայաստանի պետականության վերացման իր քաղաքականությունը:

Իհարկե, իր դավաճանությունն ու արցախատյացությունը Նիկոլ Փաշինյանը և նրան ձայնակցող ՔՊական խմբակը փորձում են քողարկել «ինքնիշխանություն» և «տարածքային ամբողջականություն» թեզերի ետևում, այն դեպքում, երբ 2023 թ. «…. դեկտեմբերի վերջերին Ադրբեջանի Միլլի մեջլիսը (խորհրդարանը) հայտարարություն տարածեց, այսպես ասած, «արևմտյան ադրբեջանցիների՝ իրենց պատմական հայրենիք վերադարձի վերաբերյալ»: Իսկ «արևմտյան ադրբեջանցիների պատմական հայրենիք» ասելով, նկատի ունի Հայաստանի տարածքը: Ադրբեջանի օրենսդիր մարմնի կողմից հայտարարության ընդունումը Հայաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ հավակնությունների հերթական դրսևորումն է, որը մնաց անպատասխան….[4]»: Ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության մասին ճամարտակող Հայաստանի վայ իշխանությունն իհարկե չհամարձակվեց ու մինչ օրս չի համարձակվում Ադրբեջանին հիշեցնել Հայաստանի տարածքային ամբողջականության, բռնազավթված Արծվաշենի ու բռնի տեղահանված արցախցիների վերադարձի իրավունքի մասին, փոխարենը, ամիսներ անց Ադրբեջանին նվիրեց Տավուշի մարզի Կիրանց, Բերքաբեր, Բաղանիս, Վերին Ոսկեպար գյուղերի մի մասն ու Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը:

Հունվարի 31-ին Ադրբեջանից Նիկոլին հերթական հանձնարարական-հրամանը իջեցրին, այս անգամ Հայաստանի Սահմանադրությունը փոխելու պահանջով. «Ադրբեջանի ԱԳՆ-ում կրկին Հայաստանի Սահմանադրությունը փոխելու պահանջ են հնչեցրել:

… Ե՞րբ Հայաստանն իր Սահմանադրությամբ և օրենսդրությամբ կվերացնի տարածքային պահանջները իր հարևանների նկատմամբ:

Ադրբեջանը վերջերս դիվերսիֆիկացրել է իր տարածքային պահանջները Հայաստանի նկատմամբ և ներկայացրել իրավական բնույթի պահանջներ՝ փոխել Սահմանադրությունն ու զինանշանը: Բաքուն «համեստորեն» լռում է սեփական օրենսդրության տարածքային պահանջների մասին[5]»:

Կարճ ժամանակ անց պետք է սկսվեին Բաքվի «արտակարգ և լիազոր դեսպան» Փաշինյանի լիրիկական ճամարտակությունները Հայաստանի Սահմանադրության, Անկախության Հռչակագրի, Զինանշանի, Արարատ լեռան ու «Պատմական Հայաստանի» դեմ:

Չէ, ի՞նչ եք ասում, իհարկե շատ «հայրենասեր» ու «ինքնիշխան» Փաշինյանը Բաքվի ու Անկարայի հրամանները չի կատարում, պարզապես «զուգադիպությամբ» նրա, Էրդողանի ու Ալիևի մտքերը՝ թուրքական շահերի ու Հայաստանի չգոյության վերաբերյալ նույնանում են….

Փետրվարի 1-ին հայոց և բանակ բառերից կենսաբանական վախ ունեցող Հայաստանի, այսպես կոչված, վարչապետը, «անհասկանալի» մտքեր արտահայտեց.

«…. Մենք բոլորս չենք ասում Հայաստանի Հանրապետության բանակ, մենք ասում ենք Հայոց բանակ: Ու մենք չենք նկատում դա, հասկանում ենք, որ դա մեզ համար այնքան սովորական բան է:

Բայց եկեք կողքից նայենք, ասենք, մի րոպե՝ Հայաստանի Հանրապետությունն ինչի՞ իր բանակը չի անվանում Հայաստանի Հանրապետության բանակ, այլ Հայոց բանակ, հայերի բանակ: Բայց, կներեք, հայեր կան ամեն տեղ. հայեր կան Թուրքիայում, հայեր կան Իրանում, հայեր կան Վրաստանում, ամեն տեղ: Այսինքն՝ մի րոպե, այս բանակն այն հայերի բա-

նակն է, այն հայերի ինչի՞ն է պետք բանակը: Պատկերացրի՞ք: Լավ, ամենահեռու երկրի անունը տամ, որ բան չլինի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայերին բանակն ինչի՞ համար է պետք….[6]»: Արի ու բանակում, երբեք չծառայած, ազգային արժեհամակարգից գաղափար չունեցող, բանակաշինություն ու ազգային բանակ բառերի իմաստն այդպես էլ չընկալած, Հայոց պատմությունից բոբիկ սույն արարածին բացատրիր, թե ինչ է նշանակում հայոց բանակ: Ի դեպ, իրեն գերագույն գլխավոր հրամանատար հռչակած դասալիք կոլաբորացիոնիստը չմոռացավ նաև զինվորականներին հասկացնել, որ իրենց կարիքն ամենևին չունի, հետևաբար նրանք բարձր աշխատավարձ չեն ստանալու. «…. Եթե պետական բյուջեում եկամուտ չկա՝ չես կարող զինվորականի և որևէ մեկի աշխատավարձը բարձրացնել, չես կարող զենք, զինամթերք ձեռք բերել, չես կարող կրթությունը ֆինանսավորել, որպեսզի զինվորականը, սպան պատշաճ կրթություն ունենա, բժիշկը, մեկը, մյուսը[7]»: Այստեղ հարց է ծագում, եթե բյուջեում զենք գնելու, զինվորականի, բժշկի, մանկավարժի, թոշակառուների համար փող չկա, ապա ինչպե՞ս է բարձրանում նախարարների, և ոստիկանական համակարգի աշխատողների աշխատավարձերը՝ ո՞ւմ հաշվին, ինչպե՞ս, որտեղի՞ց և ո՞ւմ դեմ են մինչև ատամները զինվում ոստիկանությունն ու ներքին զորքերը՝ խաղաղ ցուցարարների՞…., եթե փող չկա, ինչպե՞ս են հարստանում ՔՊ-ական նախարարներն ու նրանց թոշակառու մայրիկ-հայրիկները….

Նույն օրը, գերագույն գլխավոր կոլաբորացիոնիստն անդրադարձավ նաև Ադրբեջանի «Արևմտյան Ադրբեջանի» վերաբերյալ հայտարարություններին, և, ո՜վ «հրաշք», պարզվեց, որ դրա մեղավորը մենք ենք, ոչ թե Ադրբեջանը, չէ՞որ Ալիևը «կիրթ ու դրական» է, իսկ մե՞նք «….Ադրբեջանն ասում է «Արևմտյան Ադրբեջան», «Զանգեզուրի միջանցք», «Երևանը ադրբեջանական քաղաք» և այլն: Այո, ես տեսել եմ և հասկանալիորեն, դա մեր օրակարգի անբաժանելի մաս է, բայց ես ասում եմ՝ եկեք մենք խոսենք մեզ հետ և մեր մասին, որովհետև երբ մենք մեզ հետ և մեր մասին խոսակցությունը կարողանանք ճիշտ հունի մեջ դնել, մեր այդ սպառնալիքները կառավարելու ընդունակությունն ու գործիքներն ավելի կմեծանա[8]….» Այս հատվածը կթողնենք առանց մեկնաբանության, որովհետև կարծում ենք, որ ժողովուրդն ինքը պետք է փորձի հասկանալ, թե իրեն ի՞նչ նոտա է հղում, ժողովրդի վարչապետ հռչակված պետական դավաճանը:

Փետրվարի 9-ին Բաքվից իրենց կամակատարին փոխանցեցին, որ իրենց խնդիրը միայն Հայաստանի Անկախության Հռչակագիրն ու Սահմանադրությունը չեն, կան այլ փաստաթղթեր, որ Բաքվի սուլթանիկի սրտով չեն. «Այո, բազմաթիվ անգամներ մենք հայկական կողմի ուշադրությունն ենք հրավիրել այդ փաստերին՝ մեր դեմ առ դեմ հանդիպումներում, ինչպես նաև փաստաթղթերի փոխանակման ժամանակ…

Օրինակ՝ այն վերապահումները, որ Հայաստանի խորհրդարանն ընդունել է Ալմա-Աթայի հռչակագիրը վավերացնելիս[9]»: Ալմա Աթայի հռչակագիրը, իր դավաճանությունները քողարկելու շղարշ դարձրած Փաշինյանին Բաքվից հիշեցրել են, որ «*1992 թվականին Գերագույն խորհուրդը 10 վերապահում էր ընդունել: Օրինակ դրանցից մեկով, առաջարկել էր միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին հոդվածը վերաշարադրել և տեքստում ամրագրել նաև ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը:* Ավելի քան 30 տարի առաջ ընդունված այս փաստաթղթից բացի Բաքվի համար վիճահարույց է նաև Հայաստանի արտգործնախարարության պաշտոնական կայքը, որտեղ Ղարաբաղյան խնդրին նվիրված հատվածում ասվում է, թե Արցախը պատմական Հայաստանի անբաժանելի մասն է: Ամիրբեկովը որպես խնդրահարույց օրինակ նշել է նաև Հայաստանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված վերջին հայցերը, պնդելով, թե դրանցում էլ են եղել տարածքային նկրտումներ[10]»: Ինքնիշխանությունից ճառող Փաշինյանը մոռացե՞լ է *ազգերի ինքնորոշման սկզբունքի* մասին թե՞ պարզապես դեմ է այն ամենին, ինչը չի բխում թուրքական շահերից….



Արցախի անկախության օրվա առթիվ ՀՅԴ ԳՄ կազմակերպած միջոցառումը

Իսկ Բաքվի սույն պահանջներին ի՞նչ պատասխանեցին Երևանից, իհարկե ՀՀ ԱԳՆ-ն ենթարկվեց ընտրություններում հաղթանակ տարած Ալիևի հրամանին, և որպես ընտրություններում տարած հաղթանակի նվեր, իր կայքից հեռացրեց Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ հատվածը….

Մարտին «ընտրյալ վարչապետը» մի կողմից ժողովրդին վախեցնում էր պատերազմով «Մենք հիմա կարանք տեղից դուրս գանք, գնանք՝ ասենք չէ, չկա, էն էլ չկա, էս էլ չկա, դա նշանակում է, որ շաբաթվա վերջ պատերազմ է սկսվելու: Հետո, ես գիտեմ, թե վերջում ինչ է լինելու, հետո որ մի տեղ Երևանում իրար տեսնենք, դուք ասելու եք՝ մենք գյուղացի ժողովուրդ ենք, էդքան ինֆորմացիա չունեինք, բա մենք շատ էլ որ ասում էինք, դու էդքան տեղեկություն ունեիր, բա դու ի՞նչ էիր ասում[11]»: «Ժողովրդի» վարչապետը փորձում էր Բաղանիս, Վերին Ոսկեպար, Կիրանց, Բերքաբեր գյուղերի բնակիչներին համոզել, որ հանուն «անվտանգության» ու «բարեկեցության» նրանց գյուղերը կիսելու է ու տա թուրքին. «Մենք դա անում



ենք Ոսկեպար, Կիրանց գյուղերի համար, որպեսզի ապահովենք այդ գյուղերի անվտանգությունը[12]»: Իհարկե ուրիշ որտե՞ղ հայ գյուղացիները կարող են ավելի «ապահով» լինել, եթե ոչ թուրքից 50 մետր հեռավորության վրա, չէ՞ որ Փաշինյանի համար երջանկություն է, որ Հայաստանից 50 մետր այն կողմ կարող է Ադրբեջան լինել, հենց Հայաստանից զավթած տարածքներում: Սա մեր մեկնաբանությունը չէ, այլ ինքն էր ապրիլին այդպես համոզում Կիրանցի բնակիչներին. «Մեր մտածածն էնա, որ ոչ թե դուք ասեք՝ վայ, 50 մետր էն կողմ Ադրբեջանն ա, այլ ասեք՝ վայ, ինչ լավ ա, որ 50 մետր էն կողմ Ադրբեջանն է, մենք այնտեղ առևտուր կանենք, մենք էնտեղ տնտեսություն կկառուցենք, կարո՞ղ է՝ մի հատ էլ անցակետ կառուցենք, ավտոներ գնան-գան, վճարեն Հայաստանի Հանրապետությանը[13]», իսկ եթե, այնուամենայնիվ, նշանառության տակ գտնվող դպրոցի վրա «բարեկամ» ադրբեջանցիները կրակեն, դրա դեմ էլ պայքարի միջոց կա, ըստ «հանճարեղ» «ժողվարչապետի» 2024 թ. մայիսի 1-ի հայտարարության «Կիրանցի դպրոցն այսօր էլ նշանառության տակ է: Եթե երևալու խնդիր է, ես ասել եմ՝ կարող ենք ծառ տնկել, կարող ենք պատ կառուցել, եթե երևալու խնդիրն է[14]»: Փաստորեն աշխարհի ռազմական փորձագետներից, զորավարներից ու առաջնորդներից ոչ մեկի մտքով երբեք չէր անցել, որ կարելի է թշնամուց պաշտպանվել ծառ տնկելով, և մարդիկ «անիմաստ» միլիոններ են ծախսել զենք արտադրելու կամ ձեռք բերելու վրա….

Իսկ ապրիլին Հայաստանի վարչապետի աթոռը զբաղեցնողը ալաքներն ուղղեց պատմական Հայաստանի դեմ, հայտարարելով «պատմական ու իրական Հայաստանը համատեղելի չեն և նույնիսկ լրջագույն սպառնալիքներ են ստեղծում մեկը մյուսի համար[15]»:

Տավուշի չորս գյուղերի հանձնմանը զուգահեռ, այդ գյուղերի բնակիչների կողմից, և Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի առաջնորդությամբ ապրիլի 19-ից Կիրանց գյուղի տարածքում տեղի էին ունենում բողոքի ակցիաներ, միակողմանի զիջումների և ադրբեջանի շահերից բխող «սահմանազատման» դեմ:

Մայիսի 4-ին մեկնարկելով Տավուշից, «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասնակիցները մայիսի 9-ին քայլերթով հասան Երևան, ու Հանրապետության հրապարակում տեղի ունեցավ մեծ հանրահավաք, որտեղ շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանը ներկայացրեց Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջը. «Առաջին անգամ եմ իր անունը տալիս՝ Նիկոլ Փաշինյան, մեկ ժամ ժամանակ ունես հրաժարական ներկայացնելու: Ես պատրաստ եմ այս մեկ ժամվա ընթացքում հանդիպել և քննարկել բոլոր պայմանները՝ հեռանալու մասին: Դուք այլևս ՀՀ-ում որևէ ձևի իշխանություն չունենք և Ձեր հրաժարականով կվերադարձնեք այս ժողովրդի Եռատոնը[16]»:

Ցույցերն ու բողոքի գործողությունները տևեցին մինչև հունիսի 12-ը, երբ Հայաստանի վարչապետի աթոռին գտնվողի հրամանով ոստիկանները կրակեցին ու պայթուցիկ նյութեր նետեցին խաղաղ գործողություններ իրականացնողների վրա, բռնապետական «ժողովրդավարության բաստիոնում» վիրավորվեցին, ձերբակալվեցին կամ հաշմանդամ դարձան իրենց սահմանադրական իրավունքն իրացնող հարյուրավոր ՀՀ քաղաքացիներ, ինչից հետո շարժումը մտավ վերադասավորման փուլ:

Հուլիսին, կոալիցիոնիստ վարչախմբի ղեկավարն ու նրա նախարարը որոշեցին, որ թուրքի և իրենց քիմքին հաճո չէ «Հայոց պատմությունը», և այն պետք է վերանվանվի «Հայաստանի պատմություն»: Իսկ մեկնաբանությունն ավելի քան զավեշտալի էր «Հայաստանի պատմությունը պետության գոյության զարգացման պատմությունն է, պետության չգոյության դրվագներով, իսկ հայոց պատմությունը՝ պետության չգոյության պատմությունն է պետության գոյության դրվագներով[17]»:

Այս անհեթեթ գաղափարի վտանգավորության մասին խոսեց ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնը.

«1. *Ամբիոնն իր տարակուսանքը և խոր մտահոգությունն է հայտնում, որ ԿԳՄՍ նախարարությունը և նրան ենթակա կառույցները, առանց գիտական ու կրթական հանրության շրջանում լուրջ քննարկումների, կրթական նոր չափորոշիչներից և «Հայոց պատմության» 7-րդ դասարանի աղմկահարույց դասագրքի հրատարակությունից հետո, հերթական չմտածված և բնավ չնախապատրաստված քայլն են կատարում՝ շրջանառության մեջ մտցնելով մի նախագիծ, որը ոչ միայն չի բխում ազգային-կրթական և ազգային-պետական շահերից, այլև ակնհայտ քաղաքական ենթատեքստ ունի, ժամանակավրեպ է, և որի հետևանքները մնասակար ու վտանգավոր են լինելու ոչ միայն կրթական համակարգի, այլև՝ ընդհանրապես Հայաստանի ու ողջ հայության համար:*

2. ԿԳՄՍ-ն որդեգրել է մի գործելակերպ, որն ի սկզբանե կազմակերպական առումով բացասական տպավորություն է թողնում: Ինչ-որ անանուն պատմաբանների դիմումի հիման վրա (որևէ փաստ չկա, որ այդ պատմաբաններն իրականում կան) անմիջապես ի հայտ է գալիս փոփոխությունների նախագիծ և դրվում

քննարկման: Պարզ փրամաբանությունը հուշում է, որ առաջարկին պետք է հաջորդեր դրա հեղինակների կողմից իրենց առաջարկի հիմնավորումների հրապարակումը: Դրան էլ պիտի հաջորդեր համապատասխան մասնագիտական կառույցների կարծիքների ճշտումը, և դրական կարծիքների դեպքում նոր միայն կազմվեր պատշաճ հիմնավորված փաստաթուղթ, որը կարող էր ներկայացվել հանրային քննարկման: Այսինքն՝ հարցին պետք է ցուցաբերվեր պետական-ինստիտուցիոնալ մոտեցում, ինչը չի կատարվել: Դա խոսում է գիտակրթական հաստատությունների նկատմամբ անթաքույց անվստահության մասին և թողնում է դավադրական գործողությունների տպավորություն, ինչը բնավ չի բխում Հայաստանի Հանրապետության և, ընդհանրապես, հայության շահերից:

3. Հայոց պատմություն, թե՞ Հայաստանի պատմություն հարցադրումը և երկրորդն առաջինին հակադրելը ամբիոնի կարծիքով արհեստական է և բացատրվում է նախագիծը նախաձեռնողների՝ որոշ իրողությունների չիմացությամբ կամ զուտ քաղաքական ինչ-ինչ նկատառումներով[18]»- այս մասին, առավել մանրամասն կխոսենք հետագա հոդվածներում:

Ամառը հայաստանյան քաղաքական կյանքում անցավ, գերագույն գլխավոր կոլաբորանտի հեծանվերթին հետևելով, իսկ քաղաքական կյանքը որոշակի ակտիվացավ սեպտեմբերի 2-ին՝ Արցախի անկախության օրը, ՀՅԴ-ի կողմից կազմակերպված «Վերադարձ» խորագիրը կրող միջոցառմամբ. «Սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի կազմակերպած «Վերադարձ» խորագրով միջոցառումը՝ նվիրված Արցախի Հանրապետության անկախության 33-ամյակին: Այն նպատակ ուներ ստեղծված ծանրագույն իրավիճակում արժևորել պատմական օրվա խորհուրդը, նաև ներկայացնել մոտեցումներ և առաջարկներ՝ Արցախի հիմնախնդրի մարտահրավերների և քաղաքական լուծումների, համազգային հանձնառությունների և Արցախահայության անօտարելի իրավունքների իրացման վերաբերյալ: Ներկա էին Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը, ՀՀ ԱԺ ընդդիմադիր պատգամավորները, «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ սրբազանը, ՀՀ պետական և քաղաքական գործիչներ, հոգևոր և հանրային տարբեր շրջանակների ներկայացուցիչներ[19]»:

Հոկտեմբերն ու նոյեմբերն անցան խորհրդարանական ելույթների ու լարվածությունների համապատկերի վրա, և փաշինյանական «խաղաղության դարաշրջանն» անգամ կես քայլ չմոտեցավ ժողովրդին: Դեկտեմբերը դեռևս չի ավարտվել, բայց աշխարհում տեղի են ունենում մի շարք բախտորոշ իրադարձություններ՝ Վրաստանի հակակառավարական ցույցերը, ուղղորդված Հայաստանում «թավշյա» իշխանազավթումը կազմակերպած կենտրոններից, և Սիրիայում անակնկալ թվացող իշխանափոխությունն ու Ասադի փախուստը[20], որոնք խոսում են ուժերի նոր դասավորվածության ու տարածաշրջանային իրավիճակի փոփոխության մասին, ինչը Հայաստանին կարող է լավ կամ վատ վիճակում դնել, կախված նրանից, թե որքա՞ն շուտ Հայաստանը կազատվի թուրքական շահերը սպասարկող վարչակազմից:

Հայաստանի շուրջ օղակը սեղմվում է, և եթե նույնիսկ դեկտեմբերը առանց միջադեպերի անցնի, 2025-ին Հայաստանի ժողովուրդը կանգնելու է, ***վահանով կամ վահանի վրա*** ընտրության առաջ:

Ծանոթագրություններ

1. https://hetq.am/hy/article/163204
2. https://www.aliqmedia.am/2024/01/01/148750/
3. https://yerkir.am/hy/article/2024/01/10/23425
4. Նույն տեղում
5. https://news.am/arm/news/804980.html
6. https://news.am/arm/news/805233.html
7.Նույն տեղում
8.Նույն տեղում
9. https://www.azatutyun.am/a/32812606.html?fbclid=IwAR02-nH1yb1-V805-1UDuNZ5HYSI-eztfONXcTr2nWo3kbi4HARwXc4P53s
10. Նույն տեղում
11. https://www.aravot.am/2024/03/19/1406584/
12. https://news.am/arm/news/812974.html
13.https://www.aysor.am/am/news/2024/04/18/%D5%93%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/2261566
14. https://yerkir.am/hy/article/2024/05/01/29567
15. https://www.panarmenian.net/arm/news/313374/
16 https://168.am/2024/05/09/2041940.html
17. https://168.am/2024/07/11/2070771.html
18. https://www.7or.am/am/news/view/265644/
19. https://yerkir.am/hy/article/2024/09/03/35792
20. https://hy.armradio.am/archives/618250

Օգտագործված գրականության ցանկ

1. https://hetq.am/hy/article/163204
2. https://www.aliqmedia.am/2024/01/01/148750/
3. https://yerkir.am/hy/article/2024/01/10/23425
4. https://news.am/arm/news/804980.html
5. https://news.am/arm/news/805233.html
6. https://www.azatutyun.am/a/32812606.html?fbclid=IwAR02-nH1yb1-V805-1UDuNZ5HYSI-eztfONXcTr2nWo3kbi4HARwXc4P53s
7. https://www.aravot.am/2024/03/19/1406584/
8. https://news.am/arm/news/812974.html
9. https://www.aysor.am/am/news/2024/04/18/%D5%93%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/2261566
10. https://yerkir.am/hy/article/2024/05/01/29567
11. https://www.panarmenian.net/arm/news/313374/
12.https://168.am/2024/05/09/2041940.html
13. https://168.am/2024/07/11/2070771.html
14. https://www.7or.am/am/news/view/265644/
15. https://yerkir.am/hy/article/2024/09/03/35792
16. https://hy.armradio.am/archives/618250

Հայ մարդու և հասարակական շահի ընկալումների մասին

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Շահ հասկացությունը առաջին պահին վերացական թվացող, միևնույն ժամանակ՝ շատ կոնկրետ երևույթ է: Այն վերացական եզրույթ է մինչև այն պահը, քանի դեռ չի մարմնավորվել իբրև կոնկրետություն և արտացոլվել իրական հանգամանքներում: Շահը շատ նման է հեղուկի, որը ձև չունի, քանի դեռ չի լցվել տարայի մեջ: Անհնար է մատնացույց անել գեթ մեկ բան, որն աշխարհում ուղղակի կամ միջնորդավորված չարտացոլի կոնկրետ մարդու, կոնկրետ հասարակության, պետության, ազգի շահերը: Դեռ Օմար Խայամն էր ասում. **«Դու մտերիմներ և ընկերներ չունես, նրանք բոլորն էլ իրենց ձգտումների և շահերի ընկերներն են»:** Այսքան անողոք է կյանքը և պետք չէ զբաղվել ինքնախաբեությամբ: Առաջին հայացքից հնարավոր է տեսանելի չլինի, որ տվյալ փաստն ու երևույթը հենց շահերի խնդիր է: Գրված գիրքն ու երգը, ստեղծված կտավը, տրված լրատվությունը, լավ հեռուստանախագիծը, որակյալ դպրոցը, կառուցված շենքն ու պուրակը, փողոցի մաքրությունը, կառավարության որոշումը և այսպես ամեն-ամեն բան բխում է ազգային ու պետական շահերից և, միևնույն ժամանակ, հանգում այդ շահերին: Իհարկե, շահերի պաշտպանության և սպասարկման գլխավոր գեներատորն ու լոկոմոտիվը միշտ եղել և մնում են քաղաքական համակարգը, իշխանական ու ընդդիմադիր ընտրախավը և պետական ինստիտուտները: Անչափ դժվար է ասել, թե ազգերի ու ժողովուրդների մոտ ինչպես են ձևավորվում ազգային ու պետական շահերի ընկալումները, պատմական հանգամանքների ի՞նչ գործոններ են այս հարցերում էական կամ ճակատագրական նշանակություն ունենում, բայց փաստ է, որ ինչքան ուժեղ ու կենսունակ է պետությունը, ինչքան շատ են տվյալ ազգի ձեռքբերումները, այնքան ճիշտ ձևերով է մշակվում և հոկվում ազգի ու պետության շահերի գիտակցումը: Ի դեպ, սա այն դեպքը չէ, երբ հանրությունը տեղը տեղին գիտի, թե որն է դա: Հաճախ այն աշխատում է ենթագիտակցական մակարդակներում:

Չինացիների մասին պատմող մի ֆիլմ մտաբերեցի: Ճապոնացիների հետ պատերազմի շրջանն է: Ֆիլմի հերոսը մտնում է ընկերոջ պանդոկը ճաշելու, տեսնում է, որ գներն անասելի ցածր են: Հարցին՝ ինչպե՞ս է նա պահում պանդոկը նման ցածր գներով, վերջինս պատասխանում է. «Ծանր տարիներ են մեր երկրի ու ժողովրդի համար, մարդիկ աղքատ են, հետևաբար ես ևս պետք է մտնեմ մարդկանց դրության մեջ, չբարձրացնեմ գները»:

Շահերի ձևակերպման խնդիրը հասարակ մարդկանց հոգսը չէ: Դրա համար կան իշխանություններ,

ինստիտուտներ, քաղաքական և մտավոր էլիտա, կշիռ ունեցող առաջնորդներ և այլն: Լուրջ համակարգերում այն շատ նման է գորգի: Ցանկացած գույն, գիծ, նախշ լավագույնս արտացոլված են ընդհանուր պատկերի մեջ և ունեն իրենց կոնկրետ իմաստն ու նշանակությունը: Շատերը կարող են կողքից չտեսնել, բայց այն ներքին հյուսվածք է: Օրինակ, ոչ Գերմանիայում ու Չինաստանում, ԱՄՆ-ում ու Ռուսաստանում, ինչպես ասում են. «խորքային պետություններում», չենք հանդիպի «պետական մտածողության, ազգային շահերի» և նմանատիպ բաների մասին ճոռոմախոս զրույցների: Մարդիկ այդ ամենի մեջ են ապրում, հետևաբար՝ ո՞ւմ են պետք նման բաները: Միջպետական շահերի խնդիրն ամենակարևոր բանն է ցանկացած պետության համար, մանավանդ, երբ սրվում են հարաբերությունները հարևանների և մրցակիցների հետ: Եվ առաջին հերթին դա ցանկացած նորմալ երկրի անվտանգության խնդիրն է՝ իրենց քաղաքական, ռազմական, տնտեսական, կրթական, մշակութային, սոցիալական և մյուս բոլոր բաղադրիչներով: Բոլոր տեսակի ճոխ հայտարարություններն ընդամենը, ժողովրդական լեզվով ասած, «լոլոներ» են սեփական շահերի և անվտանգության պաշտպանության համեմատ: Ավելի ստույգ, դրանք գունեղ փաթեթավորումներ են, որոնք ևս բխում են սեփա-

կան շահերի գերակայությունից: Շահի ամենաբնորոշ հատկանիշներից մեկը նրա հավերժ փոփոխական լինելն է: Բերենք վերջին շրջանից մի քանի հանրահայտ օրինակներ, որոնք բոլորիս աչքի առջև են: Մինչև վերջերս, արևմտյան տերությունների համար իբրև թե արգահատելի արաբ ահաբեկչական զինյալ խմբերն այսօր արդեն Արևմուտքի աչքի լույսն են և կարող են ասպատակել Սիրիային, քանի որ նախագահ Ասադի կառավարությունը տապալելու և Իրանին ու Ռուսաստանին վնասելու խնդիր կար. դա է նրանց օրվա շահը: «Ալ քաիդա» ահաբեկչական խմբավորման առաջնորդներից մեկը, որի համար ԱՄՆ-ը 10 միլիոն դոլար գլխագին էր սահմանել, այլևս դարձել է «չափավորական իսլամիստ» և իրենց համար «նախընտրելի տղա»: Մինչև ականջները կոռուպցիայի մեջ թաղված Ուկրաինան մի առավոտ դարձավ «ռուսական զարհուրելի կայսերության զոհը և արևմտյան դեմոկրատիայի ջահակիրն ու պատնեշը»: Վրացական կառավարությունն այլևս դեմոկրատական չէ, քանի որ համառորեն չի ցանկանում խաղալիք դառնալ Արևմուտքի ձեռքին: Ռուսաստանին բարեկամ և դաշնակից Հայաստանը կորցրեց իր գրավչությունը, երբ պարզ դարձավ, որ ռուսական նավթն ու գազը պիտի հոսեն Ադրբեջանով: Հայոց Ցեղասպանության փաստով Թուրքիայի քթին խփող, նրա մուտքը դեպի Եվրամիություն արգելափակող Արևմուտքը ծպտուն չի հանում թուրքական այլանդակությունների հարցում: Նիկոլի ոստիկանները լավն են և ընդդիմության ցույցերը ջարդում են օրենքի տառին համաձայն: Կրկնվենք՝ սրանք հանրահայտ բաներ են և միայն հաստատում են շահերի փոփոխական լինելու իրողությունը: 2018 թ. սորոսականների «հեղափոխությունը» և դրան հաջորդած իրադարձությունները՝ 2020 թ. պատերազմը և Արցախի հանձնումը, 2021 թ. ընտրությունները վկայեցին, որ հայ իրականության մեջ շահի ընկալում կամ չկա, կամ էլ՝ հիմնովին ոչնչանալու շեմին է: Ուզո՞ւմ ենք սա ընդունել, թե՞ ոչ, բայց ակնհայտ է, որ ազգի ընդհանրական շահի ընկալումը կաղում է և այն էլ՝ երկու ոտքով: Քաղաքական շահի մասին հայ հասարակության պատկերացումները այդպես էլ «**ալարկոտ ռոմանտիզմից**» այն կողմ չեն անցնում: Ասել է թե. «**Եկեք մենք չընդվզենք, Ադրբեջանի ատամներին խփելու նույնիսկ փորձ չանենք, բայց սպասենք, որ մեր շահերին տիրություն անի Ռուսաստանը ու հետն էլ, Արևմուտքին դուր գալու համար նրա դեմ հոխորտանք»:** Սա մանկամտություն չի, ոչ էլ սովորական տհաստություն: Սա լավ հաշվարկված և հեռուն գնացող ծրագիր է, որը կարելի էր իրականացնել պետական և ազգային շահերին անհաղորդ, բթամիտ մարդկանց ձեռքերով: Մեր հանրության մեծ մասն այդպես էլ չի ուզում հասկանալ, որ դաշնակիցն էլ իր շահերն ունի, որոնք կարող են շատ հարցերում չհամընկնել մեր նպատակներին ու շահերին: Այստեղ արդեն ջանքերը պետք է հարյուրապատիկ ավելին լինեն՝ նախ, դաշնակիցներին չկորցնելու և ապա՝ նորերին ձեռք բերելու գործում: Ցավալիորեն, պատմական որևէ հանգրվանում, բացառությամբ մի քանի դրվագների, մեր ազգային հանրույթն այդպես էլ չկարողացավ ցուցաբերել շահի ընդհանրական գիտակցություն: Այստեղ կա զարմանալի պարադոքս. հայն անասելի ուժեղ գիտակցում է իր էթնիկական պատկանելիությունը, իր հայ լինելը, բայց այդպես էլ չի փորձում հավաքականորեն իր ազգային տեսակի պահպանության հուսալի ձևեր գտնել, ասես, չի ձգտում ձևակերպել իր ազգային շահը, երկու ոտքով հենվել դրա վրա: Եթե ուշադիր լինենք, կնկատենք, որ հայությունը անձուլելի և անտարրալուծելի է: Ցույց տվեք մի ուրիշ ազգ, որը կարողանար հրեշավոր Ցեղասպանությունից և հայրենազրկումից հետո օտարության մեջ ստեղծել վիթխարի Սփյուռք՝ այդքան դպրոցներ, վարժարաններ, տպարաններ, թերթեր ու ամսագրեր, հիմնել բարեսիրական, մարզական ու կրթամշակութային հաստատություններ, Հայ դատի գրասենյակներ և այլն: Սա իհարկե, կատարվեց մասնավորապես ՀՅ Դաշնակցության տիտանական ջանքերի շնորհիվ: Ի՞նչի մասին է սա վկայում: Միայն ազգային տեսակի պատկանելության գիտակցության ուժով էր դա հնարավոր: Եվ պատահական չէ, որ օտարներից շատերն են հիացել հայի կենսունակությամբ: Այստեղ է պարադոքսը. լինել այսչափ կենսունակ, բայց այդպես էլ չունենալ շահի ընդհանրական ընկալում, որը թույլ կտար տեր կանգնել ստեղծածին: Միշտ տալ, փոքրանալ ու նվիրվել այլոց, սակայն անպատասխանատու լինել սեփական հողի, հայրենիքի ու պետության հանդեպ: Երևի ընդհանրական նպատակների և շահերի արանքում կանգնած հայի անձնական «ես»-ը կարողացել է ավելի զորեղ գտնվել և տրոհել երկփեղկել նրան:

Մի տարօրինակ բան ենք նկատում. երբ հայ մարդուն ասում ես. **«ի՞նչի ես կաշառք վերցնում»,**-ասում է, **«ո՞նց չվերցնեմ, տուն եմ պահում»:** Բայց երբ ասում ես՝ քո կաշառք վերցնելով թուրքերի օգտին ես աշխատում, որովհետև հակաօրինական արարքներով թուլացնում ես մեր երկիրն ու պետությունը, նա ասես մի պահ կարկամում է, սակայն դա դեռ չի նշանակում, թե նա գիտակցեց իր արարքը ու կհրաժարվի **«ընտանիք պահողի վեհ առաքելությունից»:** Անձնական շահը մեր ժողովրդի մի մեծ հատվածի համար մի այլ կարգի գերակա մղիչ ուժ է, որն, ասես,

արմունկներով այս ու այն կողմ հրելով մյուս հարցերը, տեղ է բացում միայն իր համար՝ լինեն դրանք տեղական կամ համապետական ընտրություններ, ընտանիքի բարեկեցություն, թե մեկ այլ բան: Հո պատահական չէ, որ մեզանում օլիգարխները և իշխանավորներն այդքան հեշտ լպիրշանում են: Նրանք տեսնում են չէ՞, որ անթիվ անհամար մարդիկ պատրաստ են վաճառվելու:

Մի քսան տարի առաջ ամերիկյան մի կազմակերպության հետ իրավական թեմաներով ծրագիր էինք իրականացնում: Մի հարմար պահի դիմեցի նրանց ներկայացուցիչին՝ խնդրելով հայտնել իր անկեղծ տպավորությունները հայերի մասին: Համակրելի, ժպտերես մարդ էր: Բնական է, սկսեց հերթապահ գովասանքներ շռայլել մեր լավ ազգ լինելու, հինավուրց մշակույթ ունենալու և վերջապես, հայկական համեղ ուտեստների մասին: Ասացի. **«Հանցավ, եկել ես իմ տուն, իմ կենացն ես խմում, ուզում եմ անաչառ ու անկեղծ կարծիք լսել...»:** Տեսավ, որ օձիքը բաց չեմ թողնում, մի պահ մռայլվեց ու ասաց. **«Արդեն քանի տարի է՝ ձեր երկրում եմ, ու այդպես էլ ինձ չի հաջողվում լիարժեք օրինավոր մարդկանց տեսնել: Մարդկանց մեծ մասն անձնական շահի որսորդներ են, նկատի ունեմ ձեր չինովնիկներին, իսկ մի մասն էլ՝ պարզապես «գրպանահատներ»: Եթե քո երկրում մի 30-40 ժուժկալ, անանձնական մարդ գտնվի, որոնք կդառնան կառավարություն, դուք ապագա կունենաք...»:**

Սա արդեն օտարի հայացք է, վիճելը գրեթե անիմաստ էր: Պա՞րզ է չէ, թե ինչպես էր երկրում կազմավորվում սորոսական ապազգային տարրը, որը հետո ծծմբաթթվի պես ներծծվեց մեր ազգային օրգանիզմի մեջ ու դարձավ նիկոլական իշխանություն: Մեր պատմաբաններից, ազգագրագետներից և գործիչներից շատերի համար սա եղել է ծանր թեմա: Նրանք իրենց գրքերում և մենագրություններում մեկը մյուսից ավելի ցավոտ բաներ են պատմում՝ հայության և կոնկրետ հայի անձնական շահամոլության և մորթապաշտության մասին: Պատմում են, որ ցարական բանակն ավելի քան 143 հրանոթներ իրենց զինամթերքով թողել էր Կարս անառիկ բերդաքաղաքում: Կրակեց ընդամենը հինգ, թե վեց հրանոթ: Բոլշևիկներն այնքան հիմնավոր էին բարոյալքել մեր բանակը, որ ասելու չի: Հայ բոլշևիկները սեփական երկրի շահերը թշնամու ոտքի տակ դնելու «փայլուն» օրինակներ թողեցին պատմության մեջ: Նախիջևանում՝ Անդրանիկի քաղցած զորքը հաց էր խնդրում տեղացիներից, սրանք էլ՝ լացուկոծ էին դրել, թե՝ **«չունենք, զորավար, Աստված սիրես, չունե՞նք...»:** Եկան թուրքերը, բացեցին պահեստները, այնտեղից հարյուրավոր պարկերով ցորեն ու ալյուր դուրս բերին: Միայն Աստծուն է հայտնի, թե ի՞նչ ջանքերի ու տառապանքների գնով էր ՀՅԴ Բյուրոն և Հրայր Մարուխյանը հայ մեծահարուստներից փող «պոկում»՝ Սփյուռքը հայ պահելու ու հետո նաև Արցախում ինքնապաշտպանություն կազմակերպելու համար: Այսօր «խոշոր կապիտալը» հորթային խանդավառությամբ շենքեր է կառուցում, այն դեպքում, երբ երկիրը բանակ չունի: Այս մեկը մյուսից տխուր փաստերը մեզ այդպես էլ չեն սթափեցնում, չեն մղում խոհեմ հետևությունների: Եթե սխալ եմ, ապա ինչպես է, որ ազգին ու երկիրը անդունդի եզր հասցրած մարդը շարունակում է քարշ գալ իշխանության ղեկի մոտ: Չունենալով ազգային և պետական շահի ամենատարրական պատկերացում՝ նա պետություն է ղեկավարում. սա ի՞նչ աբսուրդ է: Հայկական կապիտալը, խոշոր և միջին առևտրականությունը, օլիգարխները և հասարակության մի ստվար զանգված, և՛ նախկինում, և՛ հիմա այդպես էլ դեմքով չեն շրջվում դեպի ազգի ընդհանրական շահերը, երկրում չի ստեղծվում այն առողջ միջավայրը, որը թույլ կտար քաղաքական ուժերի հետ ձեռք ձեռքի տված արմատապես փոխել իրավիճակը: Չխաբենք իրար՝ հայ բուրժուազիան, մեծ հաշվով, ժամանակին այդպես էլ չֆինանսավորեց ազգային ազատագրական պայքարը, և դրա դառը պտուղները «վայելում ենք» այսօր:

Հսպասարկեցիր երկրիդ շահերը, կծառայես օտարին ու կսպասարկես թշնամուդ շահերը: Այստեղից երրորդ ճանապարհ չկա: ■

2024 թվականը հայրենի բնաշխարհի համար հերթական կորսված տարի

Արմեն Վարդանյան
Լրագրող

Արդեն կես դար է, ինչ աշխարհը տնտեսական աճի գաղափարախոսությունից անցում է կատարել կայուն զարգացման սկզբունքին: Եթե նախկինում պետությունների գերխնդիրն էր ցանկացած միջոցներով ապահովել տնտեսական աճ, իսկ այն առաջին հերթին նշանակում էր բնական ռեսուրսների անխնա օգտագործում և շրջակա միջավայրի աղտոտում, ապա կայուն զարգացումն հիմնված է բնապահպանության և ռեսուրսների չափավոր օգտագործման սկզբունքների վրա՝ բաժին թողնելով նաև գալիք սերունդներին: Մեր օրերի գաղափարախոսությունը բնական ռեսուրսների խելամիտ օգտագործումից զատ պահանջում է նաև առողջ սերունդ, ինչը կրկին ուղղակիորեն կապված է շրջակա միջավայրի վիճակի հետ:

Համամարդկային և մեր հասարակության առջև ծառացած կարևորագույն այս ոլորտի խնդիրները լուծելու համար Հայաստանի կառավարությունը 2024 թվականին պետական բյուջեից հատկացրել է ընդամենը 9 մլրդ 792 մլն դրամ, բայց տարեվերջին պարզվում է, որ ոլորտի պատասխանատու Շրջակա միջավայրի նախարարությունը նույնիսկ այդ փոքր գումարն ամբողջությամբ չի ծառայեցրել բյուջեով նախանշված ծրագրերի իրականացմանը և դրա զգալի մասը վերադարձրել է կառավարության պահուստային ֆոնդ:

Հայաստանի բնության պահպանության հիմնահարցերի լուծման համար 2024 թվականին պետական ֆինանսավորումից զատ նախատեսված էր նաև իրականացնել բազմաթիվ դրամաշնորհային ծրագրեր: Դրանք բյուջեում ամրագրվում են «օրենքով չարգելվող այլ միջոցներ» տողերի տակ: Այլ կերպ ասած՝ հայրենի բնությունը պահպանելու և մեր սերունդներին փոխանցելու համար մեզ հետ հավասար վճարում է աշխարհը, համապատասխան բնապահպանական և ֆինանսական կառույցների ու պետությունների միջոցով: Սովորաբար բյուջեով նախանշված դրամաշնորհային միջոցների տրամադրման և նպատակային օգտագործման արդյունքները հստակեցվում են հաջորդ տարվա սկզբին, սակայն նախորդ տարիների փորձը հիմք է տալիս պնդելու, որ այդտեղ նույնպես լինում են էական թերֆինանսավորումներ և թերի կատարված ծրագրեր, ինչը մի կողմից պայմանավորված է ֆինանսավորող կողմի գործողություններով, բայց հիմնականում Հայաստանի գործադիր մարմնի ոլորտային պատասխանատու գերատեսչությունների դանդաղկոտությամբ և թերի աշխատանքի հետևանքով:

Սևանա լիճ

Կառավարության 2024 թվականի նոյեմբերի 7-ի նիստում կայացրած որոշումից պարզ դարձավ, որ

Շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) չի ծախսել և բյուջե է վերադարձրել մոտ 149 մլն դրամ, որը նախատեսված էր Բնական ռեսուրսների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համար: Այդ գումարը նախատեսված էր Սևանա լճի ափամերձ և ջրածածկ հատվածները ծառերից և կոճղերից մաքրելու ծրագրի համար, որն այս տարի գրեթե 75 տոկոսով թերակատարվեց:

Նախագծի հիմնավորումից պարզվում է, որ բյուջեով «Սևան» ազգային պարկին՝ լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման համար հատկացվել է 128.1 մլն. դրամ, որի դիմաց նախատեսված էր մաքրել 191.6 հա տարածք, սակայն մինչև տարեվերջ Արտանիշ տեղամասում կկարողանան մաքրել ընդամենը 47.81 հա տարածք: Նույն նպատակի համար 2024 թ. մեկ այլ՝ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» միջոցառման մասով նախատեսվել է 98.1 մլն. դրամ գումար, որի դիմաց նախատեսված 5 տեղամասերում պետք է մաքրվեր 203.4 հա տարածք: Սակայն մինչև տարեվերջ, համաձայն մրցույթի արդյունքների, կապալառու կազմակերպությունը կկարողանա մաքրել Նորատուս և Վարդենիս տեղամասերի ընդամենը 66.74 հա տարածքը: Մնացած 3 տեղամասերի մաքրման նպատակով հայտարարված

Սիգի որսագողություն

մրցույթին մասնակից չի եղել: Ստացվում է, որ Սևանա լճի ջրածածկ և ափամերձ հատվածներում նախատեսված է եղել մաքրել 395 հա տարածք, սակայն մաքրվել է ընդամենը 114 հեկտարը:

ՇՄՆ-ն գրեթե ամեն տարի չի կարողանում ապահովել լճի մաքրման ծրագիրը, ինչի հետևանքով ծառերի և բույսերի մնացորդները պատճառ են դառնում լճի էկոհամակարգի էական խախտմանը: Ծառերը և բուսական մնացորդներն են նաև պատճառը, որ ամեն տարի Սևանա լճում տեղի է ունենում կապտականաչ թունավոր ջրիմուռների բազմացում, ինչը լճի ճահճացում է նշանակում: Հիշեցնենք, որ խոսքը տարածաշրջանում քաղցրահամ ջրի ամենամեծ ռազմավարական բնական պահուստի մասին է՝ այն դեպքում, երբ աշխարհում ծավալվել են ջրի համար պատերազմները, որոնք առաջիկայում, կլիմայական փոփոխություններով պայմանավորված, է՛լ ավելի են սաստկանալու:

Հերթական տարում ՇՄՆ-ը չի ապահովում լճի ափամերձ տարածքների մաքրումը, սա այն դեպքում, երբ ընթացիկ տարվա տեղումների առատությունն ապահովեց, որպեսզի լճի մակարդակը մոտ 20-25 սմ-ով բարձր լինի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակից, իսկ մակարդակի պարտադիր բարձրացման դրական արդյունքների ապահովման դրույթն ամրագրված է «Սևանա լճի մասին» օրենքում, քանի որ լճի փրկության նախանշված հիմնական թիրախի համաձայն նրա մակարդակը պետք է հասցվի նվազագույնը ծովի մակարդակից 1901.5 մ նիշի, որի դեպքում միայն կարող է ձևավորվել լճի հատակի սառը շերտը՝ հիպոլիմնիոնը, որը վնասվել է նախորդ դարի 60-ականներից՝ ոռոգման և էլեկտրաէներգիա արտադրելու համար ջրի բացթողնման հետևանքով, ինչն էլ իր հերթին բերել է ջրի տաքացմանը և ճահճացմանը:

Անցնող տարվա պետական բյուջեով նաև զգալի միջոցներ են հատկացվել լճի ձկան պաշարների պահպանման և ավելացման համար: Ըստ նախարարության հրապարակած տվյալների, Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամին 2022 թվականի բյուջեից հատկացվել էր 300 մլն դրամ, իսկ 2023 և 2024 թթ. 493 մլն դրամ, և դրա դիմաց այս տարի Սևան է բաց թողնվել 7-10 գրամանոց 380 հազար իշխանի մանրաձուկ՝ 700 հազարն էլ աճեցրել են: ՇՄՆ-ն 2025 թվականին էլ խոստանում է Սևան բաց թողնել 520 հազար մանրաձուկ և աճեցնել 1 մլն 250 հազար հատ: Սակայն սա խնդրի լուծում չի կարող լինել, քանի որ շարունակում են բացակայել իշխանի բնական բազմացման հնարավորությունները՝ ներեստի համար ավանդական գետերի վրա արգելապատնեշների և հուների աղտոտվածության պատճառով: Լիճ բաց թողնված իշխանի չնչին մասն է հասնում հասունության տարիքի, իսկ հասնելու դեպում էլ ձվադրման ժամանակ ձկնագողերը նրանց որսում են փոքր գետերի լայնքով ցանցեր տեղադրելու միջոցով:

Սևանում շարունակում է օրախնդիր մնալ սիգի որսագողությունը: Չնայած նրան, որ կառավարությունը սկսել է սահմանել արդյունագործական որսի սահմանաչափ, սակայն պարզվեց, որ ձկնորսները ձեռք են բերում կառավարության սահմանած 600 տոննա սիգի որսի թույլտվության միայն կեսի կտրոնները: Մյուս կողմից էլ հայտնի իրողություն է, որ որսի իրական ծավալները մի քանի անգամ մեծ են այդ թվից: Տարբեր հաշվարկներով ամեն տարի Սևանա լճից 1000-1500 տոննա սիգ է դուրս բերվում: Աբսուրդային այդ իրավիճակին կառավարության նիստերից մեկում ստիպված էր անդրադառնալ նաև Նիկոլ Փաշինյանը:

Դրանից հետո ՇՄՆ-ն զգուշավոր քայլերի գնաց: Այս տարվա սկզբին, մինչև սեպտեմբերի 1-ը, նա Սևանա լճում արդյունագործական որսի իրականացման համար սահմանեց 257 տոննա չափաքանակ, որի դեպքում ձկնորսներին ստիպեց կնքել 9 պայմանագիր՝ 256.9 տոննա որս իրականացնելու համար, իսկ ահա աշնանային արդյունագործական որսի համար ևս 422 տոննա չափաքանակ սահմանեց: Կոոռուպցիոն ռիսկերը, սակայն, այստեղ էլ չեն վերացել, կամ կառավարությունում գտել են, որ ձկնագողության հետևանքով ձևավորվող մեծ ստվերային գումարները «արդարացի» չեն բաշխվել իշխանական վերնախավում:

Բոլոր դեպքերում, կառավարությունը որոշել է նախարարության ձեռքից վերցնել սիգի որսի չափաքանակները սահմանելու լիազորությունը: ՇՄՆ-ի առաջարկով ԱԺ-ի դեկտեմբերի 5-ին գումարած արտահերթ նիստում երկրորդ ընթերցմամբ քննարկման ներկայացվեց և ընդունվեց ««Սևանա լճի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվեց հանել Սևանա լճում ձկան և խեցգետնի չափաքանակները տարեկան ծրագրով սահմանելու պահանջը և դրա փոխարեն այդ լիազորությունը վերապահել Կառավարությանը, որն էլ, իր հերթին, որոշմամբ կսահմանի արդյունագործական որսի չափաքանակները: Այս խմբագրումը չի կարող կանխել որսագողությունը, այլ ընդամենը նպաստելու է ստվերային շրջանառության վերաբաշխմանը: Կա-

ռավարությանը չի հաջողվում նաև սիգի ձվադրման շրջանում դադարեցնել ձկնագողությունը: Չնայած ջրային պարեկների և էկոպարեկների համակարգերի ներդրմանը, հանրապետության շուկաներում հայտնաբերվում է հարյուրավոր կիլոգրամների հասնող ապօրինի որսած սիգ:

Նախարարությունից՝ նախարարի միջոցով արդեն հավաստիացրել են, որ այս տարի Սևանի կողակի վերականգնմանն ուղղված աշխատանքներում հաջողություն ունեն, թե արդեն կա աճեցված մայրական կազմ, որի թիվը հասնում է 2 հազարի: Այս ձկնատեսակը համարվում է լճի սանիտարը, քանի որ սնվում է ջրի հատակին կուտակվող օրգանական նյութերով, որոնց ավելցուկը բերում է ճահճացման: Ձկնագողության հետևանքով է, որ կողակը Սևանա լճից գրեթե վերացել է:

Հայաստանի անտառները

2024 թվականին բյուջեով անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների համար հատկացվել է մոտ 840 մլն դրամ, որի դիմաց կատարվել է 130 հեկտար անտառվերականգնում: Այստեղ պետք է արձանագրել, որ այն ամբողջովին ծառատնկում չէ, այլ մի զգալի մասով անտառների կոճղաշիվային վերականգնմանը նպաստելու աշխատանքներ: Իսկ ահա 2025 թվականին նախատեսված է անտառվերականգնման ծրագիր իրականացնել արդեն 170 հա տարածքի վրա: Գործող կառավարությունն արդեն չի հիշատակում իր հավակնոտ ծրագիրը 10 մլն ծառ տնկելու վերաբերյալ: Դրա փոխարեն 2024 թվականին նախաձեռնել է, այսպես կոչված, «Էլեկտրոնային ծառատունկ» ծրագիրը, որի միջոցով յուրաքանչյուր ոք կամ կազմակերպություն էլեկտրոնային հարթակում կարող է ընտրել տարածքը, ծառատեսակը, ծառերի թիվը և ծառ տնկելու համար համապատասխան գումար փոխանցել համապատասխան հաշվին, ինչը, սակայն, ըստ մասնագետների, իրատեսական ծրագիր չէ և դժվար թե էական արդյունքներ ապահովի:

Մյուս կողմից էլ հայրենի գործադիր մարմինը որոշել է, որ անտառի պահպանությամբ զբաղվող կառույցը պետք է անտառի հաշվին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվի, այսինքն՝ սակավանտառ Հայաստանում փայտանյութի վաճառքով զբաղվի: ՇՄՆ նախարարն էլ, որպես ձեռքբերում, նոյեմբերին ԱԺ-ում հայտարարեց. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում 2024 թվականին արդեն բյուջե է մուտքագրվել 866.5 մլն դրամ և մինչև տարեվերջ նախատեսվում է այն հասցնել 2 միլիարդի: Նախորդ տարիներին ՊՈԱԿ-ն առավելագույնը տարեկան մթերում էր 50 հազար մ/խ փայտ: Այսօր վառելափայտի մեկ խորանարդ մետրն արժե 15-20 հազար դրամ: Ստացվում է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը տարեկան վաճառում է մոտ 130 հազար խ/մ փայտ: Այսինքն, անտառի պահպանությամբ զբաղվող կառույցը մոտ երեք անգամ իր կողմից ավելացրել է ծառերի հատումները, մյուս կողմից էլ ապօրինի ծառահատումների ծավալներն էականորեն չեն նվազել, ինչի մասին փաստում են իրավապահների բացահայտումները:

Մյուս կողմից էլ ՊՈԱԿ-ի դեպքում խոսքը 5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք փայտանյութի մթերման մասին է, իսկ ընդամենը մի քանի տարի առաջ Բնապահպանության նախարարներից մեկը հայտարարում էր, որ ապօրինի փայտի բիզնեսի շրջանառությունը տարեկան 30-35 մլն ԱՄՆ դոլար է: Սա նշանակում է, որ ոչ միայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ն է սկսել անհամեմատ ավելի շատ անտառ հատել, այլև ստվերը չեն կարողացել կրճատել: Եթե նախկինում հատումներից հետո մնացած անտառային թափուկն անտառամերձ բնակավայրերի բնակիչներին թույլատրվում էր մթերել, ապա այսօր այդ իրավունքը միայն սոցիալապես անապահովների ընտանիքներին է վերաբերվում, իսկ մյուսներին վաճառում են 1խ/մ-ը 15 հազար դրամով՝ ստիպելով գնալ ապօրինի ծառահատումների:

Պատկերն ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է արձանագրել, որ Հայաստանի անտառային պետական ֆոնդը շատ փոքր է, լավագույն հաշվարկներով կազմում է երկրի տարածքի 11.7%-ը՝ մոտ 407 հազար հեկտար, որից 11.2% -ը կամ 334.1 հազար հեկտարն է անտառածածկ տարածք: Անտառային ֆոնդի մոտ 50 հազար հեկտարն արհեստական անտառներն են, բայց արդեն եղած տարածքներում էլ ապօրինի հատումների հետևանքով այնքան են անտառները նոսրացել, որ մեծ վերապահումով դրանք կարելի է համարել դասական անտառային էկոհամակարգով տարածքներ:

Ջրային ռեսուրսները

Ջրային ռեսուրսների ոլորտում անցնող տարին համեմատաբար բարվոք էր 2023 թ. համեմատ՝ պայմանավորված տեղումների մեծ քանակով, այն հնարավորություն տվեց ջրամբարներում կուտակել բավականին մեծ պաշարներ և 2024 թվականին Արփա-Սևան թունելային ջրատարով Սևանա լիճ տեղափոխել մոտ 200 մլն խորանարդ մետր ջուր:

Ոռոգման նպատակով Հրազդանի հունով Սևանա լճից հունիս-սեպտեմբերին բաց է թողնվել 131 միլիոն 38 հազար խորանարդ մետր ջուր: Սա այն դեպքում, երբ «Սևանա լճի մասին» օրենքով նախատեսված է առավելագույնը 170 մլն խ/մ ջրի բացթողում և, սովորաբար, նախորդ տարիներին կառավարությունը

Օդի աղտոտվածություն

օրենքի նախագծով մտնում էր Ազգային ժողով և այդ չափաքանակից ավելի էր վերցնում:

Անցնող տարում ևս օրախնդիր մնացին Արարատյան դաշտի խորքային հորերի և Հայաստանի գետերի հիմնահարցերը: 2023 թվականի վերջին ՇՄ նախարարը հայտարարեց, թե 2024 թ. հունվարի 1-ից ստորգետնյա ջրերի օգտագործումը պետք է փակ շրջանառության համակարգով իրականացվի: Նրա խոսքով, հունվարի 1-ից նաև բոլոր ջրօգտագործողները պետք է առցանց էլեկտրական ջրաչափերով աշխատեին, ինչպես նաև տնտեսվարողներն իրենց ջրառի կետերում պետք է առցանց համակարգով ջրաչափեր ունենային, իսկ նախարարությունը համաժամանակյա ռեժիմով հետևեր ջրաչափերի ցուցանիշներին: Նախարար Հակոբ Սիմիդյանը նաև հայտարարեց, թե գետերի էկոթողքի կետերում նույնպես պետք է ջրաչափեր տեղադրվեն, որպեսզի հասկանալի լինի թե տնտեսական նպատակներով, հիմնականում հիդրոէլեկտրակայանների համար ջուր վերցնելուց հետո, արդյոք գետերում էկոլոգիական թողքը մնո՞ւմ է, թե՞ ոչ:

Նրա խոստման համաձայն, 2024 թվականին էկոթողքերի կետերում նույնպես պետք է տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ «ջրաչափիչ» սարքերի պարտադիր ապահովումը կյանքի կոչվեր ջրօգտագործողների համար, և այն գործելու էր փետրվարի 1-ից: Այստեղ արձանագրենք, որ խոսքը գործող մոտ 1700 ջրօգտագործման թույլտվություններով առկա շուրջ 5000 ջրառի կետերի մասին է:

Ոլորտի պատասխանատու նախարարությունը տարվա ընթացքում պետք է լուծեր այդ բարդ խնդիրը, այն դեպքում, երբ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրոնային ջրաչափեր էին տեղադրված ընդամենը 577 կետում:

Գործընթացներից պարզվում է, որ մինչև ընթացիկ տարվա նոյեմբերը լիազոր պետական մարմինը չի կարողացել առցանց համակարգը գործարկելու համար կարճ հաղորդագրությունների (sms) ուղարկման և ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ ձեռք բերել և միայն կառավարության նոյեմբերի 7-ի նիստում իր վերաբաշխված բյուջեից թույլտվություն ստացավ այդ ծառայությունների համար 8.8 մլն դրամ հատկացնել, և շատ քիչ է հավանական, որ կհաջողվի ջրառի և էկոթողքի առցանց համակարգը գործի դնել 2024 թվականի ավարտին, առավել ևս, որ չի կատարվել նաև բոլոր ջրօգտագործողների նկատմամբ էլեկտրոնային ջրաչափեր տեղադրելու նորմի պահանջը, քանի որ իրատեսական չէր մեկ տարում 4000-ից ավել ջրառի կետերում ապահովել համապատասխան ջրաչափերը: Հայաստանի հիմնական խոշոր գետերից բացի խոսքը նաև Արմավիրի մարզում գույքագրված 1353 և Արարատի մարզում 1034 խորքային հորերի մասին է, որտեղից տարեկան դուրս է հորդում 1.2-1.3 մլրդ խորանարդ մետր բարձրորակ ջուր: Այս մարզերում են անխնա վատնվում ռազմավարական նշանակության, խմելու ջրի մաքրություն ունեցող խորքային ջրերի ազգային պաշարները:

Օդ

Ըստ ոլորտի պատասխանատուի, 2024 թվականին ձեռք է բերվել օդի որակի ստուգման 40 ավտոմատ կայան, որոնք, սակայն, գործադրվելու են 2025-ին: Նաև Երևան քաղաքի համար երկու կայան է ձեռք բերել, որոնք մոնիթորինգի տվյալները ներկայացնելու են առցանց: Նկատենք, որ չնայած Երևանում տեղադրված բազմաթիվ նման կայանների գոյությանը, դրանք քաղաքապետարանի մոտ ցույց են տալիս մաքուր օդ, իսկ ՇՄ նախարարության դիտակետերով նույն մայրաքաղաքի օդն աղտոտվածության բարձր մակարդակ է արձանագրում: 2024 թվականին հայտնի դարձած այս հակասությունն այդպես էլ հրապարակային լուծում չստացավ ո՛չ նախարարության, ո՛չ քաղաքապետարանի կողմից, իսկ մայրաքաղաքի բնակիչները և հյուրերը շարունակում են շնչել փոշով և վնասակար այլ նյութերով հագեցած օդ:

2024 թվականին ոլորտի թերևս միակ ձեռքբերումն այն է, որ միջազգային մակարդակով որոշում ընդունվեց 2026 թվականին Հայաստանում անցկացնել Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը: Այդ իրավունքին հավակնում էր նաև Ադրբեջանը, սակայն երկրների մեծամասնությունը քվեարկեց Հայաստանի օգտին՝ գտնելով, որ նավթարդյունահանող երկիրը չի կարող կենսաբազմազանությունը պահպանողի առաջամարտիկ լինել: Հայրենի գործադիր մարմինն էլ շտապեց միջոցառումից երկու տարի առաջ ձևավորել կազմակերպման և անցկացման կառավարական կոմիտե և որոշումով հաստատեց դրա կազմը:

Հայաստանի գործող կառավարությունը 2025 թ. համար բնապահպանության ոլորտին հատկացրեց 13.4 մլդ դրամ, բայց պարզվում է, որ անցնող տարվա համեմատ տրված 3.7 միլիարդով ավելի գումարը ոչ թե ուղղվում է Հայաստանի հարուստ և ծայրաստիճան վտանգված կենսաբազմազանության վերականգնմանը, այլ, ընդամենը, նոր ներդրված էկոպարեկային ծառայության ֆինանսավորմանը:

Վերը ներկայացված իրողությունների պայմաններում, թերևս հայրենի հարուստ բնաշխարհի պահպանության հիմնական միջոցը մնում է շրջակա միջավայրի նկատմամբ շարքային քաղաքացու հոգատար վերաբերմունքը:

Համշենահայության ինքնապաշտպանական մարտերը 1915-1923 թթ. (1916-17 թվականներ. մաս երկրորդ)

Հայկազուն Ալվրցյան
Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր

Ինքնապաշտպանական կռիվները Օրդուի գավառակում

Օրդու քաղաքում իշխանությունների ձեռք առած միջոցների շնորհիվ դիմադրության փորձ չի արվում: Օրդեցի Ե. Անդրեասյանի[1] հուշերի համաձայն՝ զինված դիմադրություն է ցույց տալիս միայն մեկ մարդ՝ Խաչիկ Գույումջյանը: Նա աղքատ ընտանիքից էր, եղել էր նախ՝ Հնչակյան, ապա՝ Դաշնակցության անդամ: Խուսափել էր զորակոչից, իսկ տեղահանությունից փրկվել էր թաքնվելով: Երբ ոստիկանությունը հայտնաբերում է նրա թաքստոցը, շրջապատում և պահանջում է հանձնվել: Խաչիկը սպանում է ոստիկաններից մեկին, վիրավորում մյուսին, և սկսվում է անհավասար մարտը: Դեպքի վայր ժամանած գայմագամը խոստանում է խնայել նրա կյանքը, եթե հանձնվի: Վիրավորված և գրեթե արնաքամ Խաչիկը, ի վիճակի չլինելով շարունակելու մարտը, հանձնվում է, որից հետո նրան տեղափոխում են հիվանդանոց, այնուհետև՝ Սամսոն, անդամահատում են վիրավոր ոտքը: Բուժվելուց հետո նա վերադառնում է Օրդու (էջ 523):

Մեկ այլ օրդեցու[2] հուշերից տեղեկանում ենք, որ քաղաքի մի քանի երիտասարդներ (Հրանտ Կյուրինյան, Հովհաննես Էրյուքյան, Միսաք Մ. Տեր Անդրեասյան, Ջիվան Ա. Ծատուրյան Մկրտիչ. Հ. Լազյան, Գրիգոր Գ. Ճգնավորյան), որոնք խուսափել էին զորակոչից և իրենց զենքերով հեռացել լեռները, հանդիպում են գյուղացի փախստականների խմբի, որի հետ հաճախ կռիվներ են մղում իրենց հետապնդող ոստիկանների դեմ (էջ 524):

Լեռներն ու անտառներն են հեռանում հատկապես աքսորից մի կերպ ազատվածներն ու դասալիք զինվորները, Օրդուի շրջանի գյուղացիները, որոնք միանում են այդ օրերին արդեն ճանաչված խմբապետներ Կարապետ Վարդանյանի (Վաշտոնսողլու)[3] և Սեդրակ Մինասյանի (Դելի Սեդրակ կամ Մինասսողլի)[4] խմբերին: Ուշագրավ է, որ երբ քաղաքը գրեթե ամբողջությամբ պարպված էր հայերից, ոստիկանությունը եկեղեցու թաքստարանում հայտնաբերում է մոտ 40 հրացան, փամփուշտ և զինվորական համազգեստ (էջ 523):

Տարբեր վայրերում ձևավորվող խմբերի հրամանատարներից հատկապես հեղինակավոր էր թերմեցի Ջիլ Օհաննեսը (Հովհաննես Ջեյթունյան), ով արդեն հասցրել էր ճանաչում ձեռք բերել նաև որպես քաջ ու իմաստուն խմբապետ: Ծանոթանալով իրավիճակին՝ նա բոլոր խմբապետներին հրավիրում է խորհրդակցության, որը տեղի է ունենում Թերմեի գավառակի Ալեմդաղ (Էլիմ դաղ) գյուղի մերձակա անտառում[5]:



Խորհրդաժողովին մասնակցում են հետևյալ խմբապետները[6]. Սամսոնի գավառի **Թերմեի** գավառակից՝ Ջիլ Օհաննեսը[7] և Խաչիկ Կարագյոզյանը[8] (Կարա Խաչիկ), **Զարշամբայի** գավառակից՝ Հակոբ Քեհյանը (Ակոպոս)[9] և Բելուկ Բաշը (Հովհաննես), **Ֆաթսայի** գավառակից՝ Աբյոն Հակոբը, **Ունիեի** գավառակից՝ Չաքրյան Ավետիսը, Տրապիզոնի գավառի **Օրդուի** գավառակից՝ Կարապետ Վարդանյանը (Վաշտոնսողլի) և Սեդրակ Մինասյանը (Դելի Սեդրակ կամ Մինասսողլի):

Խմբապետները քննարկում են ամենահրատապ հարցերը, որոնք, ըստ էության, բոլոր գավառներում էլ գրեթե նույնն էին: Ժողովն ընդունում է հետևյալ որոշումները.

ա. Կանանց, երեխաներին, ծերերին և հիվանդներին մինչև ձմեռ հնարավորության սահմաններում դուրս բերել երկրից, իսկ ցանկացողները և զենք կրելու ունակ մարդիկ առայժմ մնան և պայքարեն (ակնհայտ էր, որ խմբապետներն այն հույսն ունեին, թե գնացողները երբևէ պետք է հնարավորություն ունենային վերադառնալու):

բ. Մնացողների համար անտառներում և լեռներում պատսպարաններ պատրաստել և ապահովել ձմեռվա պաշար:

գ. Աշխատել ամեն գնով զենք հայթայթել և զինել խմբերին: Դրա հիմնական ճանապարհը զենքը թուրքերից խլելն էր:

Միաձայն բոլոր խմբերի ընդհանուր հրամանատար է ընտրվում Ջիլ Օհաննեսը, որից հետո խմբապետները վերադառնում են իրենց շրջանները: Այս ժողովով ձևավորված միասնությունը, տարբեր շրջանների մա-

Կարապետ Վարդանյան

Արթին Արզումանյան (Քյուչուկ Արթին)

սին ստացած տեղեկություններն ու հաստատված կապերը, փոխօգնության և շատ հարցերում միասնաբար գործելու հնարավորությունները մեծ ոգևորություն են առաջացնում բոլորի մոտ:

Ժողովի առաջին արդյունքը չի ուշանում: Ջիլ Օհաննեսը, որ Տրապիզոնի նահանգում հայտնի առևտրական էր, օգտագործելով իր հնարավորությունները և երբեմնի կապերը առևտրականների հետ, հայթայթում է որոշ քանակությամբ «Մոսին» հրացաններ, փամփուշտ և նռնակներ, որոնք հավասարապես բաժանվում են խմբերին:

Ժողովից վերադառնալով՝ Կ. Վարդանյանը հավաքում է Օրդուի շրջանի խմբապետներին, նրանց տեղյակ է պահում ընդունված որոշումների մասին: Խմբապետները հստակեցնում են իրենց անելիքները: Ժողովի ավարտին շրջանի ընդհանուր հրամանատար է ընտրվում Կ. Վարդանյանը:

Առաջին մարտերը: Մինչև ցրտերն ընկնելը Կ. Վարդանյանը փախստականների մի մասին առագաստանավերով կարողանում է ուղարկել Ռուսաստան (Սոչի, Աբխազիա): Խմբերը կառուցում են ձմեռային կացարաններ, հայթայթում որոշ քանակությամբ մթերք և այլ անհրաժեշտ պարագաներ: Ջիլ Օհաննեսի հայթայթած նոր զենքերն ու զինամթերքը բարձրացնում է մարտիկների ոգին:

Շուտով Կ. Վարդանյանի 70 հոգանոց խումբը առիթ է ունենում կռվի դաշտում հանդիպելու թշնամու հետ: Թուրքերն իրենց լրտեսների միջոցով տեղեկանում են հայկական խմբերի զինվելու մասին և որոշում անմիջապես ոչնչացնել նրանց, քանի դեռ ավելի չեն մեծացել և հզորացել: Թուրքական մեծաքանակ զորամիավորումը խորանում է Սալամանա անտառի մեջ՝ վստահ իր ուժին: Կ. Վարդանյանի հրամանով Քյուչուկ Արթինը մի փոքրիկ ջոկատով դիրքավորվում է դեպի հայկական դիրքերը տանող ճանապարհին և անսպասելի հարվածով խուճապի մատնում թուրքերին, ապա որոշ դիմադրությունից հետո նահանջում է դեպի հիմնական դիրքերը, ուր թուրքերի համար ծուղակ էր պատրաստվել: Թուրքերը, ոգևորված հայերի նահանջից, սկսում են հետապնդել նրանց: Սակայն շուտով դեմ են առնում դարանակալած հայկական հիմնական ուժերին, որոնք նախ՝ կենտրոնից, որոշ ժամանակ անց, երբ թուրքերը փորձում են ուշքի գալ, նաև երկու թևերից ուժգին հարվածներով անակնկալի են բերում և մատնում ջախջախիչ պարտության թշնամուն, որը գլխապատառ փախչում է՝ թողնելով բազմաթիվ դիակներ և վիրավորներ:

Հայերը տալիս են երկու զոհ և երեք վիրավոր: Այս հաղթանակը հայերի համար ինքնավստահության և մարտական փորձի առումով կարևոր նվաճում էր, իսկ թուրքերի համար թե՛ բարոյահոգեբանական, թե՛ զուտ ռազմական տեսակետից լուրջ ձախողում էր:

1916 թ. գարնան-ամռան ամիսներին անտառներում թաքնված փախստականների վիճակը գնալով ծանրանում է: Մի կողմից՝ պարբերաբար մղվող մեծ ու փոքր կռիվներն ու ընդհարումները թուրքերի հետ, մյուս կողմից՝ օր օրի ավելացող փախստական կանանց, երեխաների, ծերերի և հիվանդների խնամքի ու անվտանգության ապահովման հոգսերը կաշկանդում էին մարտական խմբերին:

Խմբապետների հերթական ժողովը որոշում է ամեն գնով մինչև 1916 թ. ձմեռնամուտ Ռուսաստան տեղափոխել հնարավորինս շատ կանանց, երեխաների, ծերերի և հիվանդների: 1916-ին փախստականների տեղափոխման հարցն ավելի էր բարդացել, քանզի իշխանությունները գրեթե ամենուր և բոլոր նավատերերի վրա կարողացել էին հսկողություն սահմանել: Մինչև ցրտերն ընկնելը, սակայն, մեծ ջանքերի և դրամական միջոցների շնորհիվ հաջողվում է բավականաչափ թվով մարդկանց տեղափոխել Ռուսաստանի քաղաքներ, հիմնականում Սոչի և Սուխում:

Փակագծում նշենք, որ խմբերն ամենատարբեր ճա-

նապարհներով էին մարդկանց տեղափոխում Ռուսաստան, զենք հայթայթում և կապեր հաստատում միմյանց հետ, հայտնում կամ ստանում անհրաժեշտ տեղեկություններ: Կամավոր կերպով նման հանձնարարություն ստանձնած մի տրապիզոնցի երիտասարդի՝ Երվանդ Գասպարյանի մասին ուշագրավ տեղեկություն է հայտնում Հ. Հովակիմյանը. «Բնիկ տրապիզոնցի Երուանդ Գասպարեանը մեծահարուստ Մանթաշովի նաւթատար նաւին նաւապետն էր մինչև 1918: Ազատամիտ և ազգանուէր Երուանդը իր գործին բերումով մեծ ծառայութիւններ մատուցած է իր ազգին, հայրենիքին և յեղափոխական կուսակցութիւններուն: Անոր միջոցով բազմաթիւ վտանգուած մարդիկ Թուրքիայէն փախած են Ռուսաստան և այլուր. շատեր ալ գաղտնօրէն մտած են երկիր: Նաև գաղտնի նամակներ, ծրարներ և երբեմն ալ ռազմամթերք փոխադրած է ան սև ծովու քաղաքները և յատկապէս Տրապիզոն»[10]:

Այս երիտասարդը Կոստան Զարյանի հայտնի «Նավը լեռան վրա» վեպի գլխավոր հերոսի նախատիպն է, որը հետագայում դարձավ Սևանա լճի առաջին շոգենավի՝ «Աշոտ Երկաթի» նավապետը:

Օրդուի շրջանի նշանավոր խմբապետներից էր Արթին Արզումանյանը (Քյուչուկ Արթին)[11]: Թուրքերը նրա ծնողներին սպանել էին գաղթի ճանապարհին, իսկ փոքրիկ երեխային առևանգել էին: Արթինի խմբում՝ ամուսնու կողքին, զենքը ձեռքին կռվում էր նաև նրա առյուծասիրտ կինը՝ 22-ամյա Սաբերը, ով, ինչպես և Արթինը, հույսը չէր կորցնում, որ մի օր գտնելու և ազատելու են իրենց երեխային: Այս կնոջ անվեհեր կամքի և նվիրումի մասին է վկայում հետևյալ ցնցող դեպքը: 1915-ի ձմռանը, թուրք ժանդարմների դեմ հերթական կռիվներից մեկում, որին, ինչպես միշտ, մասնակցում էր նաև Սաբերը, հանկարծ սկսվում են երկունքի ցավերը, և նա ծնում է տղա երեխա:

Խմբի վիճակը բավականին ծանր էր՝ անընդհատ տեղաշարժեր, տեղափոխություններ տեղից տեղ և կռիվներ: Անտառներում վխտում էին թուրքական լրտեսներն ու ժանդարմական խմբերը: Որպեսզի տարրական խնամքից զուրկ երեխան պատահաբար իր լացի ձայնով չմատնի խմբի թաքստարանը, Սաբերը խեղդամահ է անում նրան: Այդ քայլին է դիմում մի կին, որն ամուսնու կողքին կռվում էր առևանգված երեխային գտնելու և ազատելու հույսով: Նման դեպքերը հաճախ ավելի խոսուն են պատմական ժամանակների, մարդկանց, նրանց բաժին հասած ողբերգության և, միևնույն ժամանակ, հերոսականության մասին:

Բազմաթիվ կռիվներում կռփված, մոտ 20 անգամ ձերբակալված և փախուստի դիմած Քյուչուկ Արթինը հայտնի է նաև տեղահանությունից մազապուրծ և անտառներում ու լեռներում պատսպարված հայրենակիցներին Ռուսաստան տեղափոխելու գործում: Նա և նրա զինակիցները երբեք չհավատացին թուրքական իշխանություններին: Անգամ 1918 թ. զինադադար հայտարարելուց հետո նրանք զենքը վայր չդրեցին և լեռներից չիջան: Զենքերը թաքցրած՝ երբեմն Քյուչուկ Արթինի հետ քաղաք էին իջնում մթերք գնելու և աքսորից վերադարձած հայրենակիցներին հանդիպելու համար: Կառավարությունն ամեն խոստում տալիս էր՝ նրանց իրենց հողերի վրա տեղավորելու համար, բայց՝ ապարդյուն: Իսկ երբ քեմալական Թուրքիան ուժեղանում է, նրանք առագաստանավերով տեղափոխվում են Սուխում[12]:

Զմռան ամիսները խմբերի համար համեմատաբար հանգիստ շրջան էր, իսկ 1916 թ գարնանը՝ ապրիլի կեսերին, ռուսական նավատորմը մտնում է Տրապիզոնի նավահանգիստ:

Սամսոնի լեռներում

Սամսոն գավառի վարչական միավորներն էին Զարշամբայի, Թերմեի, Ֆաթսայի, Ունիեի, Սամսոնի և Բաֆրայի գավառակները:

Գավառի ինքնապաշտպանական մարտերի պատմության մեջ յուրահատուկ է Ունիեի գավառակը, որի վարչական միավորներից էր Քյոքլուքի (Քյոքլուղ) գյուղախումբը կամ վիճակը՝ որի վարչական կենտրոնն էր զուտ հայաբնակ Քյոքլուք գյուղը: Վիճակի մյուս հայկական գյուղերն էին (կամ թաղերը) Օզանը, Յոմուրջան, Էյրուբելը, Թեքեթամը, Դյուզթարլան, Խաչդուռը, Յուսուֆլարը, Սեյլեն, Գյոզդերեն և Մանաստրը: Քյոքլուքը բարձրլեռնային գյուղ է, «…որտեղից մինչև Ունիե լեռնային արահետներով 5 ժամվա ճանապարհ է, իսկ խճուղով՝ 8 ժամվա: Ունիեն գավառակի ամենահամախմբված և բազմամարդ հայաբնակ գյուղն էր»[13]: Շրջապատված էր լեռներով և ամառանոցային արոտավայրերով (յայլաներ), որոնք հայ մարտիկների համար կատարել են բնական ամրությունների դեր:

Քյոքլուքի բնակչությունն առանձնահատուկ հոգատարություն էր դրսևորում երեխաների ուսման հարցում: Ուներ յոթնամյա դպրոց, որն առաջադիմությամբ ավարտողներին ուղարկում էին Օրդուի կամ Սամսոնի ոչ լրիվ միջնակարգ դպրոցները, ոմանց էլ՝ Մարզվանի Ամերիկյան քոլեջը: Այս սերնդի ներկայացուցիչների շնորհիվ հարևան հայկական գյուղերում նույնպես բացվում են դպրոցներ, ուր ուսուցչություն են անում Քյոքլուքի այս ուսյալ երիտասարդները: Գյուղն ստանում է նոր կյանք ու բովանդակություն, երբ «Մանաւանդ Հ.Յ. Դաշնակցութիւնը առաջին անգամ ըլլալով մտաւ այս գիւղերը և տարաւ քաղաքական մեծ աշխատանք, նաև ինքնապաշտպանութեան գետնին վրայ: Երիտասարդութիւնը ունէր ամէն գնով զինուելու փափաք մը և ամէն դժուարութիւն ու նեղութիւն յանձն կ՚առներ լաւ զէնք ձեռք բերելու համար»[14]: Եվ պատահական չէ, որ այս և շրջակա գյուղերի երիտասարդությունն է դառնում ինքնապաշտպանության հիմնական կազմակերպիչներից մեկը և իր անհավանական խիզախությամբ ու արյամբ գրում նահանգի հայության հերոսամարտի փայլուն էջերից մեկը:

Քյոքլուք գյուղի խմբերի հերոսական կռիվների մասին տեղեկություններ ենք քաղում Հ. Հովակիմյանի գրքից, որն էլ իր հերթին դրանք ստացել է դեպքերի մասնակից խմբապետներից: Ահա թե ինչ է գրում նա այդ մասին. «Սերոբ Գարաքէհեան և Գալուստ Քէօսեան Ունիէի գաւառակի Քէօքլուք գիւղէն են: 1915ին Սերոբ 16 և Գալուստ 15 տարեկանին լեռ կը բարձրանան և իրենց առաջնորդներու ձեռքին տակ կը թրծուին փոթորկոտ տարիներու և ահեղ կռիւներուն մէջ և ի վերջոյ իրենց կը վիճակի փոխարինել այն խմբապետները, որոնք հերոսաբար նահատակուած

էին և կամ զոհ գացած նենգ որոգայթներուն: Խմբապետ Սերոբ և օգնականը Գալուստ կազմեցին իրենց ութ տարիներու փախստական կեանքին օրագիրը և Փարիզէն ղրկեցին մեզի: Հերոսական դրուագներով հարուստ այդ օրագիրը ամփոփելով կուտանք այս էջերուն վրայ»[15]:

Այդ դրվագներն ընդգրկում են Հ. Հովակիմյանի գրքի 725-763 էջերը՝ «Գոյամարտ Ճանիկի լեռներուն մէջ (1915-1923)» վերնագրով[16]:

Թեև, ինչպես արդեն ասվեց, ինքնապաշտպանական հարցի մասին գյուղացիները հոգ էին տարել տարիների ընթացքում, բայց այդ խնդրի առաջ են կանգնում այն ժամանակից սկսյալ, երբ Ունիեից և գյուղերից 25 մտավորականներ և ազգային-քաղաքական գործիչներ հրավիրվում են գավառապետի հետ հանդիպման և այլևս չեն վերադառնում իրենց տները: Տագնապի մատնված մարդիկ սպասում են աղետի, որը չի ուշանում: Հունիսի վերջերին հայտարարվում է տեղահանության մասին: Գյուղի ունևոր և ազդեցիկ մարդիկ առաջարկում են համակերպվել և կատարել կառավարության հրամանը: Այս տեսակետին հակադրվում է հեղափոխական անցյալով հայտնի ծերունի քահանա տեր Միքայելը, ով կոչ է անում համագյուղացիներին «մեռնիլ հայրենի հողին վրայ» (էջ 727):

Շատերը ենթարկվում են հրամանին և միանում տարագրվող քարավաններին: Քահանա տեր Միքայելի հորդորին հետևողները վերցնում են զենքերը և բարձրանում լեռները: Գյուղում մնում են ծերերը, հիվանդները և արիասիրտ քահանան:

Թազ դաղ լեռը բարձրացածների թիվն աստիճանաբար աճում է, որոնց մեջ քիչ չէին նաև կանայք ու երեխաները: Գործը դյուրացնելու համար զինված տղամարդիկ բաժանվում են չորս խմբի: Խմբապետներ են ընտրվում Ավետիս Չաքրյանը, Կարապետ Թահմազյանը, Գևորգ Քյոսյանը, Տիգրան Զեյթունջյանը:

Խմբերի առաջնահերթ խնդիրն է դառնում զենքի և զինամթերքի հայթայթումը, տարբեր վայրերից լեռներում և անտառներում ապաստանած հայերին հայտնաբերելը և միավորելը իրենց հետ, այլ զինյալ խմբերի հետ կապեր հաստատելը: Լինելով խիստ լեռնային և Թեմե քաղաքից բավականաչափ հեռավորության վրա գտնվող գյուղ՝ Քյոքլուքի խմբապետները չեն մասնակցել Ալեմդաղի ժողովին, կապ չեն ունեցել Զիլ Օհաննեսի և մյուս խմբապետների հետ: Սակայն շուտով դրա անհրաժեշտությունը զգացվում է: Խմբերը բարեհաջող կերպով կատարում են իրենց պարտականությունները. «Մեր Ղեկավարներուն առաջին գործը եղաւ զէնք և սնունդ ճարել և միաժամանակ, որքան կարելի էր, Ճանիկի լեռները ապաստանած հայերը գտնել և կապ հաստատել անոնց հետ» (ՕՐ., էջ 728):

Այդ որոնումների ժամանակ Տիգրան Զեյթունջյանի և Կարապետ Թահմազյանի խմբերը անակնկալ կերպով կռվի են բռնվում ժանդարմաների հետ և շրջապատվում: Կռվի թեժ պահին օգնության է հասնում Խաչիկ Կարագյոզյանի (Կարա Խաչիկ) 25 հոգանոց խումբը, ինչը որոշում է կռվի ելքը հոգուտ հայերի:

Կապեր են հաստատվում Խաչիկ Կարագյոզյանի 25 հոգիանոց խմբի, Ունիեից՝ Զիլ Օհաննեսի 30 հոգիանոց խմբի, Չարշամբայից՝ Աբրահամ Խաչատուրյանի, Սարգիս Թաթուլյանի, Փափազ Կալենջյանի և Խաչիկ Թուլումջյանի հետ, որոնց հրամանատարության տակ գտնվում էին մոտ 80 զինյալներ, Արութ Կրբաշյանի՝ 30 զինյալներ ունեցող խմբի հետ:

Խմբապետներն օգոստոս ամսին որոշում են մի փոքրիկ խմբով իջնել Քյոքլուք՝ գյուղում մնացած հարազատներին տեսնելու և նրանց օգնություն ցույց տալու համար: Սակայն այստեղ հանդիպում են ժանդարմական ջոկատի հետ և հարձակվում նրանց վրա: Կատաղի կռվում պարտության են մատնում թուրքական գերազանցող ուժերին, որոնք, թողնելով յոթ դիակ և բազմաթիվ վիրավորներ, դիմում են փախուստի:

Օրեցօր ավելացող փախստականներին զինելու համար խմբերն անակնկալ հարձակումներ են գործում թուրքական ժանդարմական ջոկատների վրա և նրանցից խլված զենքով զինում երիտասարդներին և նորագիրներին:

Բավականին վստահություն և փորձ ձեռք բերելուց հետո որոշում են հարաբերություններ հաստատել Օրդուի, Կիրասոնի, Ֆաթսայի և այլ շրջանների խմբերի հետ: Այս արշավներն անցնում են թուրքական զինվորական ջոկատների և ժանդարմական խմբերի հետ մեծ ու փոքր ընդհարումներով, որոնցում հայ զինյալները հաղթող են դուրս գալիս (ՕՐ., էջ 28-29):

Հատկապես նշելի է անհավասար ու հաղթական կռիվը հայրենի Քյոքլուք գյուղում: Խմբերին լուր են բերում, որ հարյուրավոր թուրք զինվորներ մտել են գյուղ, եկեղեցում հավաքել գյուղում մնացած մոտ 50 ծերունիների և լուսաբացին որոշել են նրանց այրել հենց եկեղեցում: Խմբապետների առաջնորդությամբ առավել փորձառու 35 մարտիկ, ողջ գիշերը քայլելով, կտրում են 20 կմ ճանապարհ և լուսաբացին հասնում իրենց գյուղի դիմացի անտառ, որտեղից բացվում է զարհուրելի տեսարան: Եկեղեցու շուրջ կուտակված էին հարդի դեզեր, որոնցից մեկի վրա կանգնած էր 85-ամյա տեր Միքայելը, որ, ձեռքերը երկինք կարկառած, աղոթում էր: Թուրք սպայի հրամանով դեզերն այրում են, և նույն պահին հայ մարտիկները խոյանում են դեպի բոցերը: Արիասիրտ քահանան տեսնում է քաջասիրտ համագյուղացիների գրոհը, վերջին օրհնությունը տալիս նրանց և կորչում բոցերի լեզուների մեջ:

Կռիվը տևում է ամբողջ օրը: Երեկոյան կողմ բազմաթիվ զոհեր տված թուրքերը դիմում են փախուստի՝ թողնելով նաև գերիներ: Հայ զինվորները հավաքում են տեր Միքայելի ոսկորները և թաղում այրված եկեղեցու պատի տակ: Ականատեսը պատմում է. «Այդ օրը մերինները անխնա սպաննեցին ու կոտորեցին հանդիպած Թուրքերը, ծեր, կին ու երեխայ: Անմարդկային ոճիրի զարհուրանքէն բոլորը խելագարուած էին ու վրէժէն զատ ուրիշ զգացում չունէին» (ՃՐ., էջ 730 731):

Մինչև ձմեռ, խմբերը ևս մի քանի հաղթական կռիվներ են մղում թուրք զինվորների դեմ և նախապատրաստվում ձմռանը: Թուրքական առևտրական քարավաններից խլելով բավարար պաշար՝ բարձրանում են Քել Թեփե կոչված լեռան անձավները, որտեղ

նախօրոք պատրաստություններ էին տեսել ձմեռելու համար: Զինյալների խնամքի տակ էին ավելի քան 150 ծերեր, կանայք և երեխաներ:

Նախորդ տարվա կռիվների փորձառությամբ զինված՝ 1916-ի ձմռան ավարտին խմբապետները միջոցներ են ձեռք առնում՝ առաջիկա կռիվներին նախապատրաստվելու համար: Նախ որոշում են համալրել սպառվող պարենը և զինամթերքը: Խմբապետ Ավետիս Չաքրյանը մի խմբով իջնում է լեռներից և դիրքեր զբաղեցնում Յունիե-Նեքսար խճուղու վրա, որը Տրապիզոնի լեռներից անցնող միակ ռազմական ճանապարհն էր: Այդ շրջանում հայերը հույների, չերքեզների և թուրքերի հետ ունեին բարեկամական հարաբերություններ, որոնք երբեք չխախտվեցին: Խմբին հաջողվում է գերել մի սուրհանդակի, որի մոտ եղած գաղտնի նամակից իմանում են, որ մի քանի օրից այդ ճանապարհով Ունիե պետք է հասնի մի մեծ քարավան, որը բանակի համար տեղափոխում է պարեն և զենք-զինամթերք: Քարավանի տեղ հասնելուց հետո թուրքական մեծաթիվ մի զորամիավորում հարձակվելու է լեռան վրա ապաստանած հայկական խմբերի վրա՝ նրանց վերջնականապես ոչնչացնելու նպատակով:

Դարանակալած հայկական խումբը մի քանի օր սպասում է քարավանին, ոչնչացնում ուղեկցող զորաջոկատին և հսկայական պաշարով վերադառնում Թազ դաղ: Մասնակիցները վերոնշյալ օրագրում գրում են. «Մեկ անգամէ ապահովուած էինք սնունդով և ռազմամթերքով: Մենք ունեցանք 150ի չափ զինեալ ոյժ մը և առաջին անգամ ըլլալով ձեռնառումբեր…» (ՕՐ., էջ 734):

Հաջորդ քայլը լինում է նամակի բովանդակության մասին տեղեկացնելը Կարա Խաչիկին, որն էլ իր հերթին լուրն ուղարկում է մյուս խմբապետներին: Թուրքերի հարձակման նախօրեին տարբեր շրջաններից խմբերը շարժվում են դեպի Թազ դաղ:

Փետրվարի 23-ի առավոտյան թուրքական մի քանի հազարանոց զորամիավորում հայտնվում է լեռան ստորոտում, որի վրա մարտական դիրքեր էին բռնել ոչ միայն 150 զինյալ հայդուկները, այլև նրանց խնամքի տակ եղած կանայք և երեխաները:

Ճակատամարտի առաջին օրը կողմերից որևէ մեկն առավելության չի հասնում: Երկրորդ օրը թուրքերը, տալով բազմաթիվ զոհեր, կարողանում են օղակի մեջ վերցնել հայկական դիրքերը և աստիճանաբար մեծացնել ճնշումը: Մի պահ բոլորին թվում է, թե հանգուցալուծումը մոտ է, բայց այդ օրհասական պահին օգնության հասած խմբերը հարվածում են թիկունքից և փոխում ճակատամարտի ելքը: Երրորդ օրն օգնության են հասնում նոր ուժեր. Սևաջըք լեռան կողմերից հասնում են Ուրումյանի խումբը, Ֆաթսայի երեք խմբերը՝ Յազջյանի, Մինասյանի և Համալյանի գլխավորությամբ, Չարշամբայից՝ Սարգիս Թաթուլյանի խումբը:

Երրորդ օրը՝ փետրվարի 25-ին, հարձակումը համառորեն շարունակող թուրքերը, ի վերջո չդիմանալով հայերի հակահարվածներին, տալիս են բազմաթիվ զոհեր և խուճապահար փախչում՝ մարտադաշտում թողնելով զոհերի դիերը, վիրավորներին և մեծ քանակությամբ պարեն, զենք և զինամթերք: Անգամ թուրքերի հրամանատարը չի կարողանում փախուստով փրկվել:

Հայերը տալիս են 12 զոհ, որոնց թվում՝ մեկ պատանի՝ Հակոբիկ անունով, մեկ կին և երեք տարեկան մեկ երեխա: Զոհվել էր նաև քաջարի խմբապետ Տիգրան Զեյթունցյանը:

Մի քանի հազարանոց զորամիավորման այս խայտառակ պարտությունը 350 քաջարի[17] հայերից ահ ու սարսափ տարածեց ողջ շրջանում:

Նահատակների հուղարկավորության ժամանակ, քանի որ քահանա չկար, դամբանական խոսք ասաց խմբապետ Ավետիս Չաքրյանը. «Այսօր Թազ տաղի լեռնակատարին հողին կը յանձնենք 12 նահատակներ, երբ անդին, աքսորի ճամբաներուն վրայ թուրք բորենիէն ջարդուած մեր հարազատները թաղող մը չունին: Մի՛ լաք, քոյրեր, եղբայրներ և զինակիցներ, անոնք հպարտ են որ զէնքերը իրենց ձեռքերուն մէջ կռուեցան և զոհուեցան: Լացի ու արցունքի փոխարէն պայքարի ու վրէժի մարտակոչը միայն թող հնչէ մեր հոգիներուն մէջ, որպէսզի բարձրաբերձ սարերու այս հպարտ ու ազատ կատարներուն վրայ առ յաւէտ հանգիստ ըլլան անոնց ոսկորները» (ՕՐ., էջ 730):

1916 թվականի գարուն. նոր իրադրություն

1916-ի գարնանը նոր իրավիճակ է ստեղծվում. ռուսական ռազմական նավատորմն ապրիլի կեսերին գրավում է Տրապիզոնը, ինչը ահ ու սարսափ է տարածում թուրքերի մեջ և նոր հույսեր ծնում հայերի հոգիներում: 1916-1917 թթ. Հայկական կամավորական 7-րդ գնդի հրամանատար իշխան Արղության Երկայնաբազուկը, որը ռուսական զորքի հետ մտնում է Տրապիզոն, հանգամանալից տեղեկագիր է կազմել այդ օրերի Տրապիզոնի վերաբերյալ[18]: Երբեմնի հայաշատ քաղաքի մասին նա հետևյալն է վկայում. «Երբ ռուսերը Տրապիզոն մտան, միայն 15.000 բնակիչ մնացած էր, գրեթէ բոլորը յոյն: Թուրքերը փախած էին բանակին հետ: Ինչ կը վերաբերի հայերուն, ջարդուած էին գրեթէ բոլորը թուրքերու կողմէ, կամ խեղդամահ եղած ծովուն մէջ: Սարսափելի այս սպանդէն վերապրած էին միայն քանի մը հարիւր երեխաներ եւ 100-120 ազատամարտիկներ, որոնք ջարդերէն ազատելու համար փարթիզանական կռիւ կը մղէին»[19]:

Հատորը կազմող և խմբագիր Ե. Փամբուկյանը տեղեկագրի մասին տալիս է հետևյալ ծանոթագրությունը. ««Դրօշակի կողմէ եւրոպական մամուլին յղուած ուրիշ փաստաթուղթ մը, - Ռուսական բանակի բարձրաստիճան զինուորականներէն Իշխան Արղութեան Երկայնաբազուկի տեղեկագիրը Տրապիզոնի ջարդերուն մասին: Հեղինակը անձամբ մասնակցած է Տրապիզոնի գրաման, ականատես եղած շրջանին մէջ թուրքերուն գործած սարսափներուն, մանրամասն տեղեկութիւններ քաղած սակաւաթիւ վերապրողներէն ու, մանաւանդ, օտար հաւաստի աղբիւրներէ»[20]:

Իշխան Արղությանը նաև հիշատակում է այն մարդկանց, ումից քաղել է իր տեղեկությունները հայերի բռնագաղթի և կոտորածների վերաբերյալ. «Այն գա-

զանութիւնները՝ որոնց զոհ գացին այս շրջանի հայերը, իրենց ահաւորութեամբ կը գերազանցեն այլուր կատարուածները: Յոյներու, ամերիկացի միսիոնարիին, քաղաքի մէկ պանդոկատէր զուիցերուհիի մը, կարգ մը ռուսահպատակներու, կաթողիկէ երկու հայերու, Տրապիզոնի անկումը լսելով լեռներէն վար իջած [հայ] արձակազէններու յայտարարութիւններէն, հետեւեալ ձեւով կը պատկերացուին այդ սոսկալի ջարդերը»[21]: Եվ այնուհետ ամենայն բարեխղճությամբ տեղեկագրում շարադրում է այն ամենը, ինչ տեսնում է և լսում[22]:

Ուշագրավ է, որ քաղաքը լքած թուրքերն իրենց հետ գրեթե ոչինչ չեն տանում: Տեղեկագրում կարդում ենք. «Մենք քաղաքը գրաւեցինք առանց դժուարութեան, եւ անվթար վիճակի մէջ գտանք՝ շքեղ պալատները, ապրանքներով լեցուն վաճառատուները, կամուրջները, ճամբաները, զօրանոցները, ջրանցքը, ռազմագիտական դիրքերը, ինչպէս նաեւ հսկայական մթերք: [Թուրքերը] ոչինչ քանդած էին, համոզուած հաստատապէս որ շուտով պիտի վերագրաւեն զայն: «Պիտի չքանդենք, կ'ըսէին անոնք, այս հարստութիւնները, որոնք վերստին մեր ձեռքը պիտի անցնին անյապաղ»»[23]: ■

Հղումներ

1 Ե. Անդրեասյանի հուշերը տպագրված են Հ. Հովակիմյանի գրքում՝ էջ 519-523 և 526-528:

2 Հայկազ Պ. Ծատուրյան, նրա մի քանի վկայություն տպվել է Հ. Հովակիմյանի գրքում՝ էջ 523-525:

3 Կարապետ Վարդանյանը ծնվել է 1888 թ. Օրդուի գավառակի Փամբուկլուղ (Փամուքլուք) գյուղում, 1915-1923 թթ. շրջանի խմբերի գլխավոր հրամանատարն էր: Նա համշենահայության հերոսամարտի ամենափառավոր անուններից մեկն էր, թերևս երկրորդը՝ Զիլ Օհաննեսից հետո: Մինչև 1915 թ. ամառը եղել է առևտրական, մեծ հեղինակություն է ունեցել թե՛ հայերի և մյուս քրիստոնյաների, թե՛ մուսուլմանների մեջ: Նրան Վաշտոնօղլի անվանում էին թուրքերը: 1923 թ. տեղափոխվել է Աբխազիա, ուր և մահացել է 1950 թ.: Հուղարկավորված է Գանթիադի ավանի մերձակա գերեզմանատանը:

4 Օրդուի շրջանի հայտնի խմբապետներից մեկն էր, Կ. Վարդանյանի մտերիմ ընկերը: Նա դեռևս տեղահանությունից առաջ, չհանդուրժելով իշխանությունների վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ, զենք է վերցնում և հեռանում անտառները: Մասնակցել է բազմաթիվ կռիվների: Քաջ և հնարամիտ ռազմիկ էր: Սպանվում է դարանակալած թուրքի ձեռքով Ասարի քար կոչված վայրում:

5 Այս խորհրդաժողովի մասին «Մահապարտների պարը» վեպում (Երևան, 2006, էջ 80-84) տեղեկություններ է հաղորդում համշենահայ գրող Զորիկ Քեշիշյանը, որը նաև համշենցի նշանավոր խմբապետների մասին «Զանկիրիշցիների երգը» (Երևան, 1997) վիպակի, պատմվածքների և մի շարք հոդվածների հեղինակ է: Զ. Քեշիշյանը ծանոթ է եղել խմբապետներից մի քանիսի հետ, որոնք ապաստան են գտել Աբխազիայում, ուր նրանց հարևանությամբ ինքն ապրել է: Գրի է առել նրանց հուշերը, որոնց մի մասն օգտագործել է գեղարվեստական ստեղծագործություններում, մի մասը՝ նրանց նվիրված հոդվածներում, որոնք հրատարակվել են «Ֆիդայիներ» գրքում (Երևան, 2014), «Զայն համշենական» ժողովածուի 3-րդ, 4-րդ, 5-րդ գրքերում: Ցավոք հեղինակը չհասցրեց հրատարակել խմբապետների բոլոր հուշերը:

6 Խմբապետների մասին տեղեկությունները քաղված են Զ. Քեշիշյանի «Ֆիդայիներ» գրքից (Երևան, 2014), «Զայն համշենական» ժողովածուի 3-րդ, 4-րդ, 5-րդ գրքերից՝ հրատարակված Երևանում համապատասխանաբար 1969, 1999 և 2006 թթ., Հ. Հովակիմյանի «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՆՏՈՍԻ» գրքի՝ Օրդուին նվիրված բաժիններից, Մ. Գ. Минасян-ի «Армяне причерноморя» (Երևան, 1990) գրքի 68-83 էջերից:

7 Զիլ Օհաննեսը (Հովհաննես Զեյթունյան) ծնվել է Թերմեում, եղել է նահանգում հայտնի առևտրական: Ամենահեղինակավոր խմբապետն էր, առ այսօր նրա մասին համշենահայերի մեջ խոսում են ակնածանքով: Եղել է նահանգի հայդուկապետը, բազմաթիվ կռիվներում փայլել իր խիզախությամբ և հրամանատարական տաղանդով: Թուրքերը ջանք չեն խնայում նրան սպանելու համար, և ի վերջո 1917 թ. թուրքերի ահ ու սարսափ հայդուկապետը զոհ է գնում նրանց կազմակերպած դավադրությանը Թեք Քիրեզ կամ Դեպե Քիրեզ գյուղում:

8 Խաչիկ Կարագյոզյանը (Կարա Խաչիկ) ծնվել է Թերմեի գավառակի Հոյլոն գյուղում (ծննդյան թվականը հայտնի չէ): Զիլ Օհաննեսի ամենամտերիմ ընկերն էր: Մղել է բազմաթիվ կռիվներ, որոնցից մեկը կարելի է համարել կենաց-մահու գոտեմարտ. 1917 թ. պարտության է մատնում կանոնավոր բանակի մեծաթիվ մի զորամասի և ստիպում հանձնվել: Բոլոր սպաներին գլխատում է, իսկ հասարակ զինվորներին ուղարկում Սամսոն՝ ներկայանալու հրամանատարությանը և զեկույց ներկայացնելու կատարվածի մասին: Նրա մեջ կենդանի էր Սամիկոնյանների ասպետական ոգին: Զիլ Օհաննեսի սպանությունից հետո ստանձնում է Թերմեի շրջանի խմբերի հրամանատարությունը: 1922 թ. հրավիրվում է Գոջաման գյուղ՝ հույն խմբապետ Սարու Յանիի հետ խորհրդակցության և դավադրաբար սպանվում:

9 Հակոբ Քեհյանը (Ակոպոս) ծնվել է 1889 թ. Զարշամբայի գավառակի Զախմախ գյուղում՝ հասարակ գյուղացու ընտանիքում, խուսափել է թե՛ զորակոչից, թե՛ տեղահանությունից և միացել զինված խմբերին: Շուտով ընտրվում է խմբապետ: 1916-ին բազմաթիվ անօգնական հայերի նավով հասցնում է Աբխազիա, որտեղից մի խումբ ընկերների հետ գնում է Հայաստան և միանում Անդրանիկի բանակին: Իսկ 1919-ին, երբ Անդրանիկը հեռանում է հայրենիքից, նա վերադառնում է Զարշամբա և ստանձնում շրջանի խմբերի հրամանատարությունը: 1923-ին, դարձյալ հավաքելով բազմաթիվ կանանց և երեխաների, ստիպված ընդմիշտ հեռանում է հայրենիքից և բնակություն հաստատում Աբխազիայում՝ Աֆոնի մերձակա Անուխվա գյուղում, ուր մահանում է 1952 թ.:

10 Յովակիմեան Յ. (Արշակունի), էջ 808:

11 Արթին Արզումանյանը (Քյուչուկ Արթին) ծնվել է 1881 թ. Օրդուի գավառակի Բաշ Զարդախ գյուղում: Մասնակցել է բազմաթիվ կռիվների: Աբխազիա տեղափոխվելուց հետո բնակություն է հաստատել Գագրայի շրջանի Լեսելիձե գյուղում, որտեղ էլ մահացել է 1969 թ.:

12 Յովհաննիսեան Յ. (Արշակունի), էջ 528-529:

13 Թոռոլաքյան Բ., Հայ ազգագրություն և բանահյուսություն, հտ. 13, Համշենահայերի ազգագրությունը, Երևան, 1981, էջ 87:

14 Յովակիմեան Յ. (Արշակունի), նշվ. աշխ, էջ 719-720:

15 Յովակիմեան Յ. (Արշակունի), նշվ. աշխ. էջ 725:

16 Ստորև հղումները կտանք այդ էջերից՝ մեջբերման վերջում փակագծի մեջ նշելով ՕՐ. էջերը:

17 Օգնության հասածների թիվը 200 էր:

18 Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2016, հտ. ԺԲ, էջ 195-199:

19 Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2016, հտ. ԺԲ, էջ 195-199, ՀՅԴ արխիվի թիվ 65-41 փաստաթուղթ: Բնագիրը ֆրանսերէն է, թարգմանութիւնը՝ հատորի կազմողների:

20 Նույն տեղում, էջ 195:

21 Նույն տեղում, 195-196:

22 Մանրամասները տես տեղեկագրում: Նաև՝ Ալվրցեան Հ. Տրապիզոնի նահանգի հայութեան ցեղասպանութիւնը, «Էջմիածին» ամսագիր, 2024, թիւ Դ, էջ 75-95:

23 Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2016, հտ. ԺԲ, էջ 195, ՀՅԴ արխիվի թիվ 65-41 փաստաթուղթ:

Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը Հունաստանում (1890-ականներից մինչև 1924 թվականը)[1]

Խաչատուր Ստեփանյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

Ներածություն

1880-ական թթ. կեսերից հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ասպարեզ մտան հայ քաղաքական կուսակցությունները և իրենց ձեռքը վերցրին ազատագրական շարժման ղեկավարումը: 1890 թ. ստեղծվում է Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը (ՀՅԴ): 1892 թ. ընդունված կուսակցության առաջին ծրագիրը նպատակ էր դնում ապստամբության միջոցով Արևմտահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն: Դաշնակցության խնդիրն էր գաղափարապես, ռազմականապես և կազմակերպորեն զորեղանալ, ինչպես նաև զինված պայքար մղել թուրքական կառավարության և ամեն կարգի հարստահարիչների դեմ, պաշտպանել ժողովրդին ավազակային հարձակումներից: Սկզբնական շրջանում ՀՅԴ-ն թուրքական բռնապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի նպատակահարմար և հիմնական ձև էր ընդունում ֆիդայական-պարտիզանական պատերազմը: Արևմտյան Հայաստանում նրա տարածումից հետո հնարավոր էր համարվում նաև ընդհանուր ապստամբությունը:

1890-ական թթ. երկրորդ կեսից Դաշնակցությունը դարձավ հայ ազգային-ազատագրական շարժման առաջատար, ամենաազդեցիկ ուժը: Կուսակցությունն իր մասնաճյուղերը ստեղծեց ոչ միայն Արևելյան Հայաստանում, Կովկասում, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ հայաբնակ վայրերում, այլև Բալկաններում, Արևմտյան Եվրոպայում, Հյուսիսային Կովկասում, Եգիպտոսում, Պարսկաստանում, ԱՄՆ-ում և այլուր: Սրան զուգահեռ, ՀՅԴ-ն մնաց հայաստանակենտրոն կուսակցություն, և թերևս նաև դրանով պայմանավորվեց ՀՅԴ հզորության ֆենոմենը:

Բալկանյան թերակղզին իր աշխարհագրական դիրքով ՀՅԴ գործունեության համար յուրատեսակ կարևոր հենակետ է հանդիսացել: Գտնվելով Կ. Պոլսին կից, Երկրին մոտիկ և, միաժամանակ, Եվրոպայում՝ նրա դիրքը բացառիկ էր հեղափոխական աշխատանքների համար: Կարևոր էին նաև Բալկանյան նավահանգիստների (Կոնստանցա, Վառնա, Աթենք) ծովային հաղորդակցության հնարավորությունները փոքրասիական նավահանգիստների հետ: Բարենպաստ պայմանները պայմանավորված էին նաև բալկանյան ժողովուրդների քաղաքական իղձերով և թուրքերի հանդեպ ունեցած հակակրանքի տրամադրություններով:

Աշխարհագրական և քաղաքական պայմանները պատճառ են հանդիսացել, որ ՀՅԴ-ն շատ վաղուց արմատներ նետեր Բալկաններում: ՀՅԴ-ն կազմակերպորեն նախ հաստատվեց Բուլղարիայում[2], Ռումինիայում, և հետո Հունաստանում:

Նախընթաց շրջանում Հունաստանում թուրքերի վարած հալածական քաղաքականությունը փաստորեն նպաստել էր, որ հույներն, ընդհանուր առմամբ, բարյացակամ վերաբերվեին հայ հեղափոխական շարժմանը:

Պետք է արձանագրել նաև, որ մինչև Հայ Յեղափոխական Դաշնակցության հաստատվելը, 1892 թ. օգոստոսից Հնչակյան կուսակցության կենտրոնատեղին Ժնևից[3] տեղափոխվել էր Աթենք[4]: Այստեղ էին եկել Հնչակյան կուսակցության հիմնադիրներ ու փաստացի ղեկավարներ Նազարբեկյան ամուսինները[5]: Բայց Աթենքն ավելի շուտ ընտրված էր Երկրին մոտ լինելու պատճառով: Հնչակյանները բուն Հունաստանում գործունեություն առանձնապես չէին ծավալում:

ՀՅԴ գործունեությունը Հունաստանում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին

19-րդ դարի վերջին Հունաստանի սահմաններն ավելի փոքր էին քան այսօրվանը: Մասնավորապես Երկրի հյուսիսային շրջանը՝ Սալոնիկ քաղաքով, դեռ գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Այս վերջին հանգամանքի բերումով Հյուսիսային Հունաստանը, ըստ էության, նպաստավոր չէր ՀՅԴ գործունեության համար:

Ինչ վերաբերում է Հարավային Հունաստանին, ապա այստեղ էլ ՀՅԴ տարածումը, ի տարբերություն Բուլղարիայի և Ռումինիայի, ուշ սկսվեց:

Հունաստան

Արդեն նշեցինք, որ հայ ազգային կուսակցություններից Հնչակյանների կենտրոնատեղին թեև տեղափոխվել էր Աթենք, այդուհանդերձ 1890-ականներին Հունաստանում հայ հեղափոխականները լայնածավալ գործողություններ չէին իրականացնում:

Հնչակյանների կենտրոնը 1892 թ. Աթենք տեղափոխելուց հետո այստեղ գտնվող դաշնակցականները փորձել են բանակցություններ վարել հնչակյանների հետ միություն կազմելու համար[6]: Այդ մասին տեղեկանում ենք Աթենքի դաշնակցականների Ժնև ուղարկած մի նամակից[7]: Պետք է նշել, որ Ավետիս և Մարո Նազարբեկյան ամուսինների ունեցած կոշտ դիրքորոշման պատճառով այդ միությունը չի կայանում:

1890-ականներին Հարավային Հունաստանում թեև ՀՅԴ կազմակերպական կառույց չէր գործում, բայց դաշնակցական տարբեր գործիչներ հայտնվում էին Աթենքում: Օրինակ, 1897 թ. հունվարին Պիրեյից գրում են «Դրօշակին», որ այն բաժանվում է Աթենքում, Պիրեյում, Վոլոյում, և անհրաժեշտ է ավելացնել Հունաստան ուղարկվող թերթի քանակը[8]:

Նույն ընթացքում Աթենքի դաշնակցականները հոգացել են այստեղ ժամանած «հիվանդ ընկերների հարցերը», մի մասին փորձել են պահել տեղում, մի մասին էլ ուղարկել են Եգիպտոս՝ Ալեքսանդրիա[9]:

1897 թ. օգոստոսին Աթենքում են գտնվել Օտտոմանյան բանկի գործողությանը[10] մասնակից հինգ դաշնակցականներ[11]:

Փաստորեն, 1890-ականներին թեև Աթենքում ՀՅԴ կազմակերպություն չի գործել, բայց այստեղ հայտնված դաշնակցական անհատ գործիչները հայության շրջանում փորձել են համապատասխան քարոզչություն իրականացնել: Միաժամանակ Աթենքը նպաստավոր ժամանակավոր խարսխակայան էր Օսմանյան կայսրությունից և հատկապես Արևմտյան Հայաստանից արտասահման գնացող և հակառակ ուղղությամբ մեկնող կուսակցական գործիչների համար:

Աթենքի տարանցիկ կետ հանդիսանալու, ինչպես նաև տեղում «Դրօշակի» միջոցով քարոզչություն իրականացնելու մասին վկայությունները վերաբերում են նաև 1900-ականների սկզբին[12]: Աթենքից և դեպի Աթենք գրված դաշնակցականների նամակներից պարզ է դառնում, որ հատկապես կարևոր է եղել կապը Զմյուռնիայի, Կիլիկիայի և Եգիպտոսի հետ: Հավանաբար ծովային հաղորդակցության ընձեռած դյուրություններն են նպաստել դրան:

1903 թ. սկզբին Հարավային Հունաստանում արդեն գործել են դաշնակցական խմբեր, որոնց գործունեության համար կուսակցական այլ կոմիտեներից գումար են խնդրել[13]: Գումարվել են կանոնավոր ժողովներ: Նամակներից մեկում նշվում է, որ Վոլոյում «Արշակունյաց» անունով նոր խումբ է բացվել, և անհրաժեշտ է այնտեղ թերթ ուղարկել[14]:

Աթենքում գործող «Կիլիկիա» դաշնակցական խմբի 1903 թ. մեկամյա տեղեկագրից պարզ է դառնում, որ այդ խմբի հիմնական նպատակը կուսակցական քարոզչություն իրականացնելն է, կարիքի մեջ գտնվող հայրենակիցների համար գումար հավաքելը[15]:

Հատկանշական է նաև այն փաստը, որ ազգային-ազատագրական պայքարի քարոզչության առու-

մով դաշնակցականները «Դրօշակի» տարածումից զատ, նախկին ավանդույթից ելնելով, փորձել են նաև «Հնչակ» պարբերականը տարածել[16]:

Ինչպես նշեցինք, Աթենքը հարմար խարսխակայան էր արտասահման մեկնող հայության տարագրության համար: Տեղի դաշնակցականներն անհանգստություն են հայտնում այս սարսափելի երևույթի համար[17]: Բացի այս ամենից, նույնիսկ նախաձեռնում են դրամ ուղարկել Զմյուռնիայի բանտում գտնվողներին[18]:

Ինչպես տեսնում ենք, 1900-ականների սկզբին արդեն բավական ակտիվություն է նկատվում Հարավային Հունաստանում ՀՅԴ գործունեության մեջ:

Աթենքի դաշնակցական կառույցը զբաղվել է նաև Արևմտյան Հայաստան և հատկապես Կիլիկիա զենք տեղափոխելու խնդրով: Փորձ է արվել տեղում զենք ձեռք բերել[19]: Հունաստանում հաստատված Սարհատ[20] կեղծանունով գործչի՝ ՀՅԴ Արևմտյան Բյուրոյին գրած նամակում խոսվում է Լեռնավայր՝ Կիլիկիա զենք տեղափոխելու մասին[21]: 1904 թ. աշնանը Կիլիկիայի համար զենք գնելու նպատակով գումար է փոխանցվում Աթենք՝ Սարհատին[22]: Նա մշտական կապի մեջ էր Սիմոն Զավարյանի հետ, որն այդ ժամանակ Կիլիկիայում էր: Վերջինիս հետ քննարկվել է նաև զինավարժություններին հունահայերի մասնակցության հարցը, որի անցկացման հարմար վայրը համարվել է Բուլղարիան[23]:

Փաստորեն, Հունաստանում գործող դաշնակցական կառույցը ոչ միայն ներգրավված է եղել ազատագրական պայքարին զենք հասցնելու գործում, այլև փորձել է այդ պայքարին մասնակցող մարտիկներ պատրաստել:

ՀՅԴ զինական գործի ասպարեզում Աթենքի ունեցած տեղն առավել արժևորվում է 1904 թ. ՀՅԴ Սոֆիայի 3-րդ ընդհանուր Ժողովից հետո: 1904 թ. հուլիսից Աթենքում գումարվում են ՀՅԴ Ցուցական Պատասխանատու Մարմնի նիստերը՝ որոշելու «իր ձեռնարկների բնույթը»[24]: Այստեղ որոշվում է բռնի հանգանակության ձեռնարկ կազմակերպել և ցուցական գործողություններ իրականացնել[25]: Աթենքը յուրատեսակ խարիսխ է դարձել Ցուցական Պատասխանատու Մարմնի համար:

1907 թ. հունիսին ՀՅԴ Արևմտյան Բյուրոն հատուկ գործիչ է ուղարկում Աթենք զենքի գործը համադրելու համար[26]: Արևմտյան Բյուրոյի տեղեկագրում խոսվում է Աթենքում զինական պահեստի գոյության մասին[27]:

Ըստ էության, Հունաստանը ՀՅԴ մարտական գործի համար կարևոր հենակետի է վերածվում: Երկրի աշխարհագրական դիրքն ու ընձեռած որոշակի բարենպաստ քաղաքական պայմանները հնարավորություն են տալիս այստեղից զինական աջակցություն կազմակերպել արևմտահայ ազատագրական պայքարին:

Բայց միշտ չէ, որ հունական հասարակությունը կամ պետությունը ըմբռնումով էին մոտենում Հունաստանում ՀՅԴ գործունեությանը: 1905 թ. հունական թերթերը թուրքական կառավարության հրահրմամբ հակահայկական հոդվածներ են հրապարակում, սադրում հույներին հայերի դեմ, ոստիկանությունը երբեմն թուրքերից ավելի դաժան է գտնվել հայերի նկատմամբ: Կուսակցությունը ստիպված էր նաև այս երևույթների դեմ պայքարել[28]: Բանը հասնում է նրան, որ նույնիսկ բանտարկություններ են տեղի ունենում: Ընդ որում, ձերբակալություններ էին լինում նույնիսկ թերթերի տարածման համար[29]: Տեղի կուսակցական մարմիններն էլ ստիպված էին նաև այդ հարցերով զբաղվել[30]: Միաժամանակ փորձում էին լեզու գտնել հունական թերթերի խմբագիրների հետ, որ վերջիններս հայամետ նյութեր հրապարակեն[31]:

Մի կողմից հունական իշխանությունների հարուցած խոչընդոտները, մյուս կողմից, ավելի ուշ, 1908 թ. վրա հասած Երիտթուրքական հեղաշրջումը և ընձեռված համեմատական ազատությունները Օսմանյան կայսրությունում թուլացրին Աթենքի դերը ՀՅԴ գործունեության տեսանկյունից:

Հարավային Հունաստանում ՀՅԴ գործունեությունը համեմատաբար ակտիվ դարձավ Ցեղասպանության տարիներին, երբ Կ.Պոլսից ՀՅԴ գործիչները երբեմն անցնում էին նաև Աթենք[32]: Ընդհանուր առմամբ, Ցեղասպանության տարիներին Աթենքում ՀՅԴ կառույցի հիմնական խնդիրը եղել է տարագիրներին ընդունելն ու դեպի Արևմուտք կամ Եգիպտոս ճանապարհելը:

Հյուսիսային Հունաստանում՝ Արևմտյան Թրակիայում և Մակեդոնիայում ՀՅԴ ամենահին կազմը հիշատակվում է 1908 թվականին (Դեդեաղաջում), որը ստեղծվել էր Արիս Իսրայելյանի կողմից: Այս կազմը գործում է մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը՝ ըստ էության վերածվելով Թրակիայի և Մակեդոնիայի կազմակերպության կորիզի:

Հյուսիսային Հունաստանի Կյումուլճինա (Կոմոտինա) քաղաքում ՀՅԴ կազմակերպությունը սկսում է գործել 1915 թվականից հետո, Ադրիանապոլսից այստեղ տեղափոխված Մանվել և Մկրտիչ Ինքսերճյան եղբայրների և Երվանդ Պարոնյանի ակտիվ մասնակցությամբ[33]:

Այս տարածաշրջանի գլխավոր քաղաքում՝ Սալոնիկում ՀՅԴ կառույց հիմնադրվում է 1921 թ. Սարգիս Սարունիի (Պարտիզակցի) կազմակերպմամբ[34]:

Այսպիսով, ՀՅԴ հիմնադրումից հետո տարիների ընթացքում Հունաստանում կուսակցության կազմակերպական արմատավորումը հասավ որոշակի հանգրվանի: Դա նպաստեց, որ հատկապես փոքրասիական ողբերգությունից հետո հույն եղբայրների հետ հյուրընկալ Հունաստանում ապաստանած տասնյակ հազարավոր հայ գաղթականների, հատկապես որբերի խնամքի համար կազմակերպչական աշխատանք տանելու որոշակի հիմքեր ստեղծվեին: Ճիշտ է, ինչպես ներքևում կտեսնենք, Հունաստանում ՀՅԴ կառույցի անհամեմատ ուժեղացմանը նպաստեցին հատկապես Պոլսից, Զմյուռնիայից և այլ վայրերից այստեղ հանգրվանած գաղթական դաշնակցական գործիչները, բայց տեղում կուսակցական կառույցի գործունեության փորձառությունը ևս նպաստավոր էր հետագա արդյունավետ աշխատանքների համար: Դաշնակցությունը, իբրև կազմա-



Մակեդոնիա

կերպված կուսակցություն, գործելով Հունաստանի առավելապես խոշոր քաղաքներում, հետագայում նաև հայ որբերով բնակեցված գյուղերում, անվիճելի կնիք թողեց հունահայ ազգային կյանքում:

ՀՅԴ գործունեությունը Հունաստանում 1920-ականների առաջին կեսին

Ինչպես արդեն ակնարկեցինք, Հունաստանում ՀՅԴ ներկայությունն առավել ակնառու դարձավ 1920-ականների սկզբին տեղի ունեցած զանգվածային գաղթից հետո:

Հայերի զանգվածային ներգաղթը Հունաստան տեղի ունեցավ երեք փուլով:

Առաջին փուլը տեղի ունեցավ 1921 թ. Կիլիկիայի հայության հերթական տեղահանությունից հետո: Կիլիկիահայության մի մասի (շուրջ 5.000)[35] և Նիկոմեդիայի (Իզմիթ) շուրջ 4.000 հայ գաղթականությունը ապաստանեց Հունաստանում:

Երկրորդ և ամենամարդաշատ փուլն անմիջապես կապված է 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմում հունական բանակների կրած պարտության և իբրև դրա հետևանք փոքրասիական ողբերգության հետ: Զմյուռնիայից, Կ.Պոլսից, և Էգեյանի փոքրասիական առափնյա բնակավայրերից հույների հետ հազարավոր հայեր ևս տեղահանվեցին և հաստատվեցին Հունաստանում: Միայն Զմյուռնիայից մոտ 65.000 հայեր ապաստան գտան Հունաստանում[36]:

Հայության՝ դեպի Հունաստան ներգաղթի երրորդ փուլը Թրակիայի շրջանի պարպումից հետո էր:

1923 թ. հուլիսի 24-ին Լոզանում կնքված հաշտության պայմանագրի համաձայն ամբողջ Արևելյան Թրակիան, որը 1920 թ. Սևրի պայմանագրով տրվել էր Հունաստանին, նորից վերադարձվեց Թուրքիային: Քեմալականների պահանջով պայմանագիրը նախատեսում էր ազգաբնակչության փոխանակումը Թուրքիայի և Հունաստանի միջև: Հարյուր-հազարավոր հույն բնակչության հետ միասին Արևելյան Թրակիայից դեպի Մակեդոնիա և Արևմտյան Թրակիա փոխադրվեցին տասնյակ հազարավոր հայ գաղթականներ[37]:

Ըստ 1928 թ. պաշտոնական մարդահամարի տվյալների՝ 1918-1923 թթ. Թուրքիայի վարած ցեղասպանական քաղաքականության հետևանքով Հունաստանում է հաստատվել 1.221.849 գաղթական, որից 980.000-ը հույներ են եղել, իսկ մնացած 241.849-ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ, որոնց մի կարևոր մասը կազմում էին հայերը[38]:

Հունաստանի արտաքին գործերի նախարարության ընդհանուր քարտուղար Բ. Ագիրոպուլոսը «Հելեն կառավարությունը և հայ գաղթականները» խորագրով հոդվածում, հենվելով Ֆ. Նանսենի կազմած տեղեկագրի տվյալների վրա, հայ գաղթականների թիվը հասցնում է 120.000-ի[39]:

Հիշատակված 120.000-ից 50.000-ն ապրում էր Հին (հարավային) Հունաստանում և կղզիներում, մնացածը՝ Նոր (հյուսիսային) Հունաստանում՝ Մակեդոնիայում և Արևմտյան Թրակիայում[40]:

Այսպիսով, 1921-1923 թթ. միջին հաշվով շուրջ 100.000 հայեր փրկվելով ցեղասպանությունից ապաստան գտան Հունաստանի հյուրընկալ հողում: Չնայած մինչ այդ Հունաստանում հայեր կային, և նրանց մի մասի նախնիները այնտեղ էին հաստատվել հարյուրամյակներ առաջ, հայ համայնքային կյանքը սկսեց ձևավորվել միայն 1922-1923 թվականներին:

Զմյուռնիայի և Կիլիկիայի գաղթերից հետո՝ 1922 թ. նոյեմբերին Հունաստանում կազմվում է ՀՅԴ նոր կոմիտե՝ Գաբրիել Լազյան, Մկրտիչ, Տիգրան, Հակոբ Տեր-Ներսիսյան, Արամ, Հովհաննես կազմով[41]:

Տեղում գործում էր նաև ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործակատարը, որը փորձում էր Աթենքում և Բիրեայում հավաքված գաղթականությանն օգնել[42]: Վերջին գաղթերից հետո Սալոնիկը դառնում է Հունաստանի ՀՅԴ կազմակերպության կենտրոնը: Սկզբում Մեկուսի կոմիտե էր գործում, որը 1926 թվականից վերածվեց Կենտրոնական կոմիտեի[43]: Դրանից որոշ ժամանակ անց ՀՅԴ Հունաստանի Կենտրոնական Կոմիտեի կենտրոնատեղին տեղափոխվում է Աթենք:

Պետք է արձանագրել, որ Հունաստանում 1920-ական թվականների սկզբին բավական թվով ակնառու և ներկայացուցչական հանգամանք ունեցող դաշնակցականներ հաստատվեցին՝ Հրաչ Փափազյանը, Հակոբ Սիմոնին, Մատթեոս Էպլիղաթյանը, Կարո Գևորգյանը, Գաբրիել Լազյանը, Անտոն Գազելը, Արամ Կայծակը և ուրիշներ:

1923 թ. հունիսին ընտրվում է ՀՅԴ Հունաստանի Մեկուսի կոմիտե: Քաղաքներում եղել են կոմիտեություններ՝ 250 կուսակցականներով: Ծրագրում են 5-6 ամսում թիվը հասցնել 7-800-ի: Շրջանի պատասխանատուն Հրաչ Փափազյանն էր[44]:

1924 թ. հուլիսին Բ Շրջանային ժողովն ընտրում է նոր Մեկուսի կոմիտե՝ Գաբրիել Լազյան, Արամ Շիրինյան՝ Աթենքից, Ահարոն Թեհլիրյան, Կարպիս Գազանճյան, Լևոն Մոզյան, Միհրան Փափազյան, Տոքթ. Աբրահամեան՝ Սալոնիկից[45]:

Հունաստանում հաստատվեց նաև ՀՅԴ մամուլը[46]: Մինչև տեղական կուսակցական մամուլի ձևավորումը, այստեղ ստանում էին Պոլսի «Ճակատամարտը»՝ օրական 50 օրինակ[47]: 1923 թ. սկզբին թերթի հրատարակության համար ՀՅԴ Հունաստանի կոմիտեն գումար է խնդրում Եգիպտոսի ՀՅԴ կազմակերպությունից[48]:

1923 թ. սկսում են հրատարակվել ՀՅԴ միանգամից երկու պաշտոնաթերթեր՝ «Նոր օր»-ը՝ Աթենքում[49] և «Ալիք»-ը Սալոնիկում[50]: Վերջինիս հիմնադիրը Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ի խմբագիրներից Լևոն Մոզյանն էր[51]: Աթենքի «Նոր օր»-ի հիմնադիրներն էին Գաբրիել Լազյանը, Անտոն Գազելը, Արամ Շիրինյանը և Պողոս Սվաճյանը: 1924 թ. հունվարի 1-ից սկսած շաբաթաթերթը դարձավ երկօրյա և 20 տարի անխափան հրատարակվեց մինչև 1944 թ. սեպտեմբերին գերմանացիների նահանջն ու համայնավարների ապստամբությունը: «Նոր օր»-ը կարևոր դեր է ունեցել հունահայ հասարակական-քաղաքական կյանքում: Թերթը բարձր է պահել հունահայ գաղութի վարկը հույն ժողովրդի և պետության կյանքում[52]:

Աթենքում Հակոբ Սիմոնիի խմբագրությամբ սկսում է հրատարակվել նաև ՀՅԴ Պատանեկան Միության «Լուսաղբյուր» պաշտոնաթերթը[53]:

Ինչպես տեսնում ենք, ՀՅԴ Հունաստանի կառույցը 1920-ականների առաջին կեսին նկատելիորեն կերպափոխվում է՝ դառնալով ավելի ընդգրկուն:

1923 թ., երբ Հունաստանը գտնվում էր ռազմական կառավարության ներքո, հայ գաղթականությանն առաջարկվեց Հունաստանի քաղաքացիություն ընդունել: Սակայն հատկապես Փոքր Ասիայից եկածները տարակուսանքով մոտեցան հունական կառավարության առաջարկությանը: Հույս փայփայելով, որ պահպանելով թրքական քաղաքացիությունը, մի օր հեշտությամբ կվերադառնան և կվերատիրանան իրենց տներին ու կալվածքներին, նրանք հրաժարվեցին Հունաստանի կառավարության առաջարկից:

1923 թ. ապրիլի 20-ին ՀՅԴ Արտասահմանի Պատասխանատու մարմնին գրած ՀՅԴ Հունաստանի մեկուսի կոմիտեի նամակում ասվում է, որ Հունաստանում վիճակը բարդանում է, հայ գաղթականության քաղաքացիության հարցերը կարգավորելու խնդիր կա[54]:

Հունաստանի քաղաքացի դառնալը մի կողմից ձեռնտու էր հունահայությանը, քանի որ որոշակի իրավունքներ էին ստանում, մյուս կողմից էլ ակնկալում էին, որ ՀՀ և Ազգային պատվիրակությունները որոշակի հաջողություններ կունենան արևմտահայության իրավունքների առումով[55]: Հունական քաղաքացիության զանգվածային ընդունումը նշանակում էր հրաժարում պահանջատիրությունից, ինչը ոչ ոք չի ցանկանում:

Ելնելով այս մտահոգությունից ՀՅԴ Հունաստանի մեկուսի կոմիտեն դեմ էր զանգվածային քաղաքացիություն (հպատակություն) ընդունելուն, միաժամանակ առանձին դեպքերում արգելք չէին հանդիսանում անհատական քաղաքացիության դեպքերին: Այս տեսակետը ներկայացվել է նաև պետական շրջանակներին, թյուրիմացություններից խուսափելու համար[56]:

Հունական կառավարությունը ցանկանում էր հայ և հույն ստվար բնակչությամբ ապահովել Արևմտյան Թրակիայի և Մակեդոնիայի անվտանգությունը: Սակայն երբ հայերը հրաժարվում են հունական քաղաքացիություն ընդունելուց, հունական կառավարությունը որոշում է նորեկ գաղթականությանը դուրս հանել երկրից: Ցավոք, չնայած գործադրած ջանքերին, Հունաստանում գործող հայկական ազգային կուսակցությունները և հատկապես Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, չկարողացան կանխել հունահայերի մի մասի տեղափոխումը[57]:

Հունաստանի կառավարությունը պաշտոնապես դիմում է Ազգերի լիգային և պահանջում համապատասխան տեղ որոշել հայ գաղթականությանը Հունաստանից դուրս բերելու և տեղավորելու համար: Որպես բնակավայր Ազգերի լիգայի հատուկ հանձնաժողովն առաջարկում է Խորհրդային Հայաստանը, Կովկասը, Ֆրանսիան, Թուրքիան, Հարավային Ամերիկան[58]: Հունահայ գաղթականների մեծ մասի համար նախընտրելի է համարվել հայրենիք տեղափոխվելը, հատկապես որ որոշ սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակներ հանձն են առել դեպի Հայաստան հունահայ գաղթականների ճանապարհածախսը[59]: Թերևս այս դեպքերից հետո էլ սկսվեց հունահայության արտագաղթը՝ հատկապես դեպի Խորհրդային Հայաստան և Արգենտինա:

1923 թ. հունիսին տեղի ունեցած ՀՅԴ Հունաստանի Ա Շրջանային ժողովը որոշում է գաղութի համար խնդիրներ չունենալու նպատակով հնարավորինս ջերմ հարաբերություններ ստեղծել հույն ժողովրդի հետ, խուսափել Հունաստանի ներքաղաքական կյանքում կողմ դառնալուց: Միաժամանակ խնդիր դրվեց օգնել հայ գաղթականությանը գործ գտնելու, նյութապես ապահով զգալու համար, գաղթականությանը համախմբված պահել, հատկապես նպաստավոր շրջաններում, ինչպես նաև գաղթականության մեջ վառ պահել ազգային ոգին ու նկարագիրը, աշխատանքներ տանել գաղթականների երեխաներին համապատասխան մտավոր, բարոյական, ֆիզիկական դաստիարակություն ապահովելու համար[60]:

Փաստորեն, ՀՅԴ-ն Հունաստանում կազմակերպորեն ամրապնդվելուն զուգահեռ, հանձն առավ նաև կարգավորելու հունական պետության և հունահայ գաղութի փոխհարաբերությունները: Ճիշտ է, հետագա տարիներին տարբեր հանգամանքների բերումով երբեմն այդ հարաբերությունները սրվում էին, երբեմն ջերմանում, բայց ընդհանուր առմամբ ՀՅԴ-ն նպաստեց հունահայ համայնքի համար հունական պետության հետ հարաբերվելու որոշակի համակարգի ձևավորմանը:

Փոքրասիական ողբերգությունից հետո Հունաստան ներգաղթած հայերը ստեղծեցին իրենց ազգային-վարչական կազմակերպությունները երկու առանձին շրջաններում՝ Հին (Հարավային) Հունաստանում և

Սալոնիկ

կղզիներում, և Նոր (Հյուսիսային) Հունաստանում՝ Աթենք և Սալոնիկ կենտրոններով: Սա աստիճանաբար կարգավորեց ստեղծված անկանոն վիճակը: Հունահայ քաղաքական շրջանակները և հատկապես ՀՅԴ Հունաստանի կազմակերպությունն ակտիվորեն ներգրավվեցին ազգային մարմինների ստեղծման գործում, սակայն այդ մարմինների ձևավորումը տեղի էր ունենում հայ առաքելական եկեղեցու շուրջ:

Դեռ 1922 թ. դեկտեմբերին Բուխարեստում գտնվող ՀՅԴ Արտասահմանի Պատասխանատու Մարմնին տեղյակ են պահում, որ Աթենքում թաղական խորհուրդ է ստեղծվել, խոսում են ազգային համակարգող մարմնի ստեղծման անհրաժեշտության մասին[61]: Այս հարցով Հունաստանի ՀՅԴ ղեկավարները բանակցություններ էին վարում տեղի ռամկավարների և հնչակյանների հետ[62]: Հարավային Հունաստանի ազգային մարմիններում ՀՅԴ-ն մեծամասնություն է կազմել շնորհիվ «Աթենքի ընկերների ճկունության և Հնչակյանների հետ ունեցած համաձայնության»[63]:

Ազգային-վարչական կազմակերպություններից ամենակարևորը Ազգային տնօրինություններն էին: Ադրիանապոլսի (Էդիրնե) և Ռոդոսթոյի (Թեքիրդաղ) ազգային տնօրինությունները վերակազմավորվեցին Սալոնիկում գտնվող Հյուսիսային Հունաստանի տնօրինության: Սալոնիկ էին տեղափոխվել Ադրիանապոլսի և Ռոդոսթոյի Ազգային առաջնորդարանները, Առաջնորդ Երվանդ Եպիսկոպոս Փէրտահճեանի հետ և ստեղծել ինքնուրույն թեմ՝ Թրակիայի և Մակեդոնիայի Առաջնորդարան[64]: Երվանդ սրբազանը հաճախ էր տարբեր առիթներով հարձակման թիրախ դառնում: Նա սադրանքներից խուսափելու համար հեռացավ Սալոնիկից, անցավ Բուլղարիա և Ֆիլիպեում ընտրվեց Բուլղարահայոց առաջնորդ՝ փոխարինելով հանգուցյալ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանին: Չնայած նման դեպքերին, Սալոնիկում թեմական կազմակերպությունները՝ ժողովները և մարմիններն ամրապնդվեցին[65]:

Եթե Սալոնիկում հնարավոր եղավ Ադրիանապոլսի և Ռոդոսթոյի միացյալ առաջնորդարանների փոխադրմամբ նոր առաջնորդարան և առաջնորդ ունենալ, ապա Աթենքում ամեն ինչ պետք էր զրոյից սկսել: Աթենք հասնող առաջին հայ բարձրաստիճան հոգևորականը Զմյուռնիայի առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանն էր: Դուրյան սրբազանը իր ստեղծած հանձնախմբի միջոցով փորձում է ձեռքում կենտրոնացնել գաղթականության գործը[66]:

Քանի որ այդ խառնիճաղանջ օրերին հնարավոր չէր արագ ազգային մարմինների ընտրություն կազմակերպել, նպատակահարմար համարվեց Զմյուռնիայի քաղաքային և գավառական ժողովների Աթենքում գտնվող անդամներով Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի նախագահությամբ և Միհրան Ազնավուրյանի ատենապետությամբ ազգային մարմին ստեղծել: Որոշ ժամանակ անց Ղևոնդ եպիսկոպոսը, ներքին խնդիրների պատճառով հրաժարվեց Թեմի առաջնորդի աթոռից[67], մեկնեց նախ՝ Անգլիա, ապա՝ Ամերիկա[68]:

1923 թ. Աթենքի թեմը դեռ պատկանում էր Պոլսի պատրիարքարանին: Աթենքի ազգային մարմնի խնդրանքով 1923 թ. սկզբներին պատրիարքարանը Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանին իբրև պատվիրակ ուղարկում է Աթենք: 1924 թ. Ա. Պատգամավորական ժողովը Հին Հունաստանի թեմի առաջնորդ է ընտրում արքեպիսկոպոս Մազլումյանին, որի թեկնածությունը հաստատում է Էջմիածինը[69]: Պետք է նշել, որ Հունաստանի դաշնակցական մարմինները պարբերաբար բողոքում էին Մազլումյանից, որ հաճախ է «խառնակչություն անում»[70]:

1924 թ. ավարտվում է ազգային մարմինների ձևավորումը: Ազգային մարմինների ստեղծումից հետո սկսվեց հունահայ համայնքի ձևավորման կարևոր ու դժվարին ուղին: Դրանով հնարավոր կլիներ շահել և՛ ընդունող երկրի վստահությունը, և՛ համայնքի խնդիրները հեշտությամբ լուծել: ՀՅԴ Հունաստանի կազմակերպությունն էլ փորձում է ազգային մարմինների գործունեությանը նպաստել գաղթականների հարցի, քաղաքացիության հարցերի կարգավորման ճանապարհով[71]: Ցավոք, Աթենքում և Սալոնիկում զանազան ազգային մարմիններ են ընտրվում և յուրատեսակ երկվություն է առաջանում: Թե՛ Աթենքում, թե՛ Մակեդոնիայում և Թրակիայում ազգային մարմիններում գերակշռողը դաշնակցականներ էին:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունից և Փոքրասիական ողբերգությունից հետո Հունաստանի հայ համայնքի թվի անհամեմատ ստվարացումը ստիպեց հայ գաղութի ներքին կյանքը կազմակերպելու, հունական կառավարության հետ ավելի արդյունավետ հարաբերվելու համար ստեղծել ազգային մարմիններ: ՀՅԴ Հունաստանի կազմակերպությունն ակտիվորեն ներգրավվեց այդ գործընթացի մեջ, ազդեցիկ դիրքեր ունեցավ ազգային մարմիններում, ինչն էլ իր հերթին նպաստելու էր ներազգային կյանքի կազմակերպմա-

նը, ինչպես նաև համայնքի դիրքերի ուժեղացմանը հույն հասարակության մեջ:

Արդեն ձևավորված ազգային մարմինների գործունեությունը հետագայում մշտապես լի էր ներազգային-քաղաքական պայքարի դրսևորումներով, որը գնալով ավելի սրվեց: Հիմնական պայքարն ընթանում էր մի կողմից ՀՅԴ, մյուս կողմից Ռամկավար-Ազատական կուսակցության, Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցության և համայնավարների միջև: Եղել են եզակի դեպքեր, երբ հանգամանքի բերումով տեղի է ունեցել Դաշնակցություն-հնչակյաններ համագործակցություն, սակայն այն եղել է դրվագային և շատ կարճ ժամանակով[72]:

ՀՅԴ Հունաստանի կազմակերպությունը, գաղթական հայության հոգեբանական ծանր վիճակը, ինչպես նաև հունական ոստիկանության երբեմն ոչ պատշաճ մոտեցումները, հաշվի առնելով 1920-ականներին հանձն էր առել նաև հունահայ գաղութի (հատկապես Աթենքի շրջանում) ներքին անվտանգության ապահովումը: Աթենքի հարևանությամբ՝ Տուղրութիում հաստատված կիլիկեցիների մեջ էր նաև հաճնցի Արամ Կայծակն իր զինակիցներով, Զաքրճըն՝ իր մարդկանցով, մի շարք չավուշներ իրենց ջոկատներով: Ստացվել էր այնպես, որ հունական ոստիկանությունը չէր միջամտում Տուղրութիի ներքին գործերին: Ոստիկանները լուրջ խնդիրների առաջ են կանգնել, երբ փորձել են պարտադրանք կիրառել այս շրջանի հայերի հանդեպ: Սակայն երկու տարվա ընթացքում ամեն ինչ իր տեղն ընկավ, և գաղթականները սկսեցին հպատակվել օրենքին[73]:

ՀՅԴ-ն մեծ նպաստ բերեց Հունաստանում հայ կրթական գործի կազմակերպմանը. այն անչափ կարևոր էր հայ սերունդներին փրկելու և հայ պահելու տեսանկյունից: 1923 թվականին սկսում է գործել Աթենքի Ազգային վարժարանը: Կրթական գործի կազմակերպման հիմնական աշխատանքներն իրականացվեցին 1924 թ. հետո[74]:

Այսպիսով, 19-րդ դարի վերջից մինչև 1920-ական թթ. կեսերը Հայ Յեղափոխական Դաշնակցությունը բավական լայնածավալ գործունեություն իրականացրեց Հունաստանում: Ստեղծված նպաստավոր պայմանները հաշվի առնելով՝ կուսակցությունն օգտագործեց բազում հնարավորություններ ուժեղացնելու համար արևմտահայ ազգային-ազատագրական պայքարը: Արևմտյան Հայաստան զենք-զինամթերք, մարտական և կազմակերպական գործիչներ տեղափոխելու առումով Հունաստանի դաշնակցական կազմակերպության դերը բավական կարևոր էր:

ՀՅԴ Հունաստանի կազմակերպությունն առավել ուժեղացավ 1920-ականների սկզբին՝ մեծ օգնություն ցուցաբերվեց ցեղասպանության և փոքրասիական ողբերգության հետևանքներով այնտեղ ապաստանած հայ գաղթականությանը: ■

Գրականություն

1. Աբրահամյան Աշոտ Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1967, 422 էջ:
2. «Ազատ օր» 1997-ի բացառիկ, Աթէնք, 1997 :
3. Գէօրգեան Կարօ, Ամէնուն տարեգիրքը, Դ տարի, Պէյրութ,1957:
4. «Երկունք», Պիրեա, 1922,17 նոյեմբեր; 1923, 18 յունուար:
5. Թէօդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1924:
6. Կիտուր Ա., Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), Ա. հատոր, Պէյրութ, «Շիրակ» տպարան, 1962, 616 էջ:
7 Կոկինոս Պետրոս, Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965, 264 էջ:
8. Հայ մամուլը Յունաստանի մէջ, Աթէնք, Հրատարակութիւն «Արմենիքա» պարբերաթերթի, 2007:
9. ՀՅԴ պատմության ԿԱ, փաստաթուղթ Ա-1080-3, Ա-1081-12, Ա-1081-15, Ա-1081-17, Ա-1084-5, Բ-1086-1, Բ-1087-21, Բ-1088-1, Բ-1088-3, Բ-1089-8, Բ-1089-12, Բ-1089-19, Բ-1089-21, Բ-1089-40, Բ-1090-1, Բ-1110-8, Բ-1110-13, թ. 1-2; Բ-1110-15, Բ-1110-16, Ե-1098-2, Ե-1098-3, Ե-1099-5, Ե-1099-6, Ե-1099-17, Ե-1099-34, Ե-1099-40, Ե-1100-25:
10. Մակարեան Ասատուր, Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու, Մելանիկ, տպագրութիւն «Հորիզոն» օրաթերթի, 1929, 640 էջ:
11. Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա. հատոր (Բ. տպագրութիւն), Պէյրութ, 1984; Ե. հատոր, Պէյրութ, 2007; Զ. հատոր, Պէյրութ, 2010; Է հատոր, Պէյրութ, 2010; ԺԲ. հատոր, Պէյրութ, 2016
12. «Նոր Ալիք», Սալոնիկ, 1924, 8 յունուարի:
13. «Նոր օր», Աթէնք, 1924, 19 դեկտեմբերի:
14. Ստեփանյան Խ., Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը Բուլղարիայում (1894-1924 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, ՀԱԱ հրատ., 2020, թիվ 2 (129), էջ 30-57:
15. Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ա. և Բ. հատորներու միացեալ հրատարակութիւն, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչութիւն, 2013, 653 էջ:
16. Տէր Խաչատուրեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան 100-ամեայ մամուլը (1890-1990), Պէյրութ, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի Հրատարակութիւն, 1990:

Հղումներ

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 24ASPU-TRANSFORM-CON-I-6C ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

2 Բուլղարիայում ՀՅԴ գործունեության առաջին 30 տարիների համառոտ պատմությունը տե՛ս Ստեփանյան Խ., Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը Բուլղարիայում (1894-1924 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, ՀԱԱ հրատ., 2020, թիվ 2 (129), էջ 30-57:

3 Հնչակյան կուսակցությունը հիմնադրվել է 1887 թ. Ժնևում հայ ուսանողների կողմից:

4 Դաշնակցական ականավոր գործիչ, գաղափարախոս և պատմաբան Միքայել Վարանդյանը գրում է, որ Ժնևից և Լոնդոնից հետո կենտրոնատեղին Աթենք տեղափոխելն անգամ չօգնեց Հնչակյան կուսակցությանը չվնասվելուց (տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ա. և Բ. հատորներու միացեալ հրատարակութիւն, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչութիւն, 2013, էջ 72): Նա նկատի ուներ այն հանգամանքը, որը հայկական կուսակցությունը պետք է խոր արմատներ ձգեր բուն Հայաստանում և ղեկավարվեր Հայաստանից:

5 Կիտուր Ա., Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), Ա. հատոր, Պէյրութ, «Շիրակ» տպարան, 1962, էջ 63:

[6] 1890-ականների սկզբներին արդեն կազմավորված Հնչակյան կուսակցության և ՀՅԴ միավորման մի շարք բանակցություններ են տեղի ունեցել տարբեր վայրերում:
[7] ՀՅԴ պատմության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ԿԱ), թղթածրար Ա-1080, փաստաթուղթ 3, թերթ 1-8:
[8] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ա-1081, փաստաթուղթ 15, թերթ 1:
[9] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ա-1081, փաստաթուղթ 17, թերթ 1:
[10] Խոսքը վերաբերում է 1897 թ. օգոստոսի 14-ին Բաբկեն Սյունիի գլխավորությամբ Օտտոմանյան բանկի գրավման գործողությանը:
[11] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ա-1081, փաստաթուղթ 12, թերթ 1:
[12] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ա-1084, փաստաթուղթ 5, թերթ 1-4; թղթածրար Բ-1086, փաստաթուղթ 1, թերթ 1:
[13] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա. հատոր (Բ. տպագրութիւն), Պէյրութ, 1984, էջ 88:
[14] Նույն տեղում, էջ 93:
[15] ՀՅԴ պատմության ԿԱ, փաստաթուղթ Բ-1087-21, թ. 1: Բ-1088-1, թ. 1; Բ-1088-3, թ. 1:
[16] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա. հատոր (Բ. տպագրութիւն), էջ 91:
[17] Նույն տեղում, էջ 91:
[18] Նույն տեղում, 94:
[19] Նույն տեղում, էջ 91:
[20] Չշփոթել Սարհատ ծածկանունով ավելի հայտնի Գևորգ Չաուշի հետ:
[21] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 8, թերթ 1-2:
[22] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Է. հատոր, Պէյրութ, 2010, էջ 21, 23:
[23] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 12, թերթ 1-2; թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 19, թերթ 1-4; թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 21, թերթ 1-2;
[24] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ե. հատոր, Պէյրութ, 2007, էջ 399:
[25] Նույն տեղում, էջ 399-402:
[26] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Է. հատոր, էջ 32:
[27] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Զ. հատոր, Պէյրութ, 2010, էջ 168:
[28] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 40, թերթ 1-7, թղթածրար Բ-1090, փաստաթուղթ 1, թերթ 1-4; թղթածրար Բ-1110, փաստաթուղթ 8, թերթ 1-4:
[29] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ե. հատոր, էջ 236:
[30] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Բ-1110, փաստաթուղթ 13, թերթ 1-2; թղթածրար Բ-1110, փաստաթուղթ 15, թերթ 1-2, թղթածրար Բ-1110, փաստաթուղթ 16, թերթ 1-3;
[31] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ե. հատոր, էջ 236:
[32] Նիութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ. հատոր, Պէյրութ, 2016, էջ 93:
[33] Մակարեան Ա., Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, տպագրութիւն «Հորիզոն» օրաթերթի, 1929, էջ 502:
[34] Մակարեան Ա., Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, տպագրութիւն «Հորիզոն» օրաթերթի, 1929, էջ 503:
[35] Թէօդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1924, էջ 224:
[36] Նույն տեղում, էջ 223
[37] «Երկունք», Պիրեա, 1922, 17 նոյեմբերի:
[38] Կոկինոս Պ., Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927), Երևան, 1965, էջ 25-26:
[39] «Նոր Ալիք», Սալոնիկ, 1924, 8 յունուարի:
[40] «Երկունք», Պիրեա, 1923, 18 յունուարի:
[41] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 1:
[42] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 2:
[43] Մակարեան Ա., նշվ. աշխ., էջ 503:
[44] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 17, թերթ 1:
[45] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1100, փաստաթուղթ 25, թերթ 1:
[46] Հունաստանի առաջին հայերեն պարբերականը 1890 թ. Աթենքում լույս տեսած «Ասպարեզ» թերթն էր: 1892-1894 թթ. Աթենքում լույս է տեսել Հնչակյանների «Հնչակ» պաշտոնաթերթը: 1922 թ. սկսում է հրատարակվել Հնչակյանների «Երկունք» (Պիրեա) պաշտոնաթերթը, որը, ցավոք, ընդամենը 7-8 ամիս է լույս տեսնում:
[47] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 3:
[48] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 5, թերթ 1:
[49] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 17, թերթ 2; Հայ մամուլը Յունաստանի մէջ, Աթէնք, Հրատարակութիւն «Արմենիքա» պարբերաթերթի, 2007, էջ 21:
[50] Տէր Խաչատուրեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան 100ամեայ մամուլը (1890-1990), Պէյրութ, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի Հրատարակութիւն, 1990, էջ 22:
[51] Գէօրգեան Կ., Ամէնուն տարեգիրքը, Դ տարի, Պէյրութ, 1957, էջ 233:
[52] Նույն տեղում, էջ 234-235:
[53] Մակարեան Ա., նշվ. աշխ., էջ 196:
[54] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 6, թերթ 1:
[55] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 34, թերթ 1:
[56] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 34, թերթ 2:
[57] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1101, փաստաթուղթ 24, թերթ 3:
[58] Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 110:
[59] «Նոր օր», Աթէնք, 1924, 19 դեկտեմբերի:
[60] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 40, թերթ 3-4:
[61] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 3, թերթ 1:
[62] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 1
[63] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1101, փաստաթուղթ 24, թերթ 3:
[64] Գէօրգեան Կ., Ամէնուն տարեգիրքը, Դ տարի, Պէյրութ, 1957, էջ 226:
[65] Նույն տեղում, էջ 227:
[66] ՀՅԴ պատմության ԿԱ, փաստաթուղթ Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 2:
[67] Կոկինոս Պ., նշվ. աշխ., էջ 90
[68] Գէօրգեան Կ., նշվ. աշխ., էջ 229:
[69] Աբրահամյան Ա. Գ., նշվ. աշխ,, էջ 125:
[70] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 17, թերթ 3-4:
[71] ՀՅԴ պատմության ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 17, թերթ 3:
[72] 1924 թ. հետո Հունաստանում ՀՅԴ գործունեությանը և հայկական ազգային կուսակցությունների միջև փոխհարաբերությունների պատմությանը մենք բազմակողմանի և քննական անդրադարձ կունենանք մեր հետագա ուսումնասիրություններում:
[73] Թէօդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1924, էջ 226
[74] 1926 թվականին բացվում է «Հոիփսիմեանց» մանկապարտեզը: 1927 թվականին Հայ Կապույտ խաչի նախաձեռնությամբ ստեղծվեց «Զավարյան» ակումբ-վարժարանը Գոկինիա շրջանում: 1928-1929 ուսումնական տարում «Հոիփսիմեանց» մանկապարտեզը և «Զավարյան» վարժարանն ուներ 260 աշակերտ: Վարժարանի տնօրենը Սոս Վանին էր: 1937 թվականին վարժարանը ճանաչվում է Հունաստանի կառավարության կողմից, և վարժարանի շրջանավարտները կարող էին իրենց ուսումը շարունակել Հունաստանի պետական միջնակարգ վարժարաններում: Վարժարանը Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939-1945 թթ.) դադարեցրել է իր գործունեությունը (տե՛ս «Ազատ օր», Աթէնք, 1997, բացառիկ, էջ 27):

Հայաստանը պետք է խոսի ... (Թումանյանը և Անդրանիկը հայրենիքի համար ճակատագրական պահերին)

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հրապարակագիր

Այս հոդվածում դիտարկվում է 20-րդ դարասկզբի հայ երկու մեծագույն անհատների՝ Հովհաննես Թումանյանի և Զորավար Անդրանիկի սերտ համագործակցությունը հայրենիքի համար ճակատագրական ժամանակահատվածում: Իրենց ուսերին առնելով մեծագույն պատասխանատվություն՝ նրանք համատեղ հանդես եկան ժողովրդին համախմբելու և վտանգված հայրենիքը պաշտպանելու նվիրական առաքելությամբ:

Հայոց պատմության բախտորոշ ու դրամատիկ շրջան է 20-րդ դարի սկիզբը՝ 1900-ից 1920 թվականն ընկած ժամանակահատվածը, որը հագեցած է ինչպես խիզախ ու հերոսական, նույնպես և չարաբաստիկ ու ողբերգական բազում իրադարձություններով:

Թվում է, թե շրջադարձային, այս դարաշրջանում մեր ժողովուրդը պետք է տեր դառնար իր բախտին, ազատությանն ու պետականությանը կամ կորչեր ու կործանվեր աշխարհավեր ու արյունալից իրադարձությունների հորձանուտում:

Բարեբախտություն է, որ այդ դրամատիկ դարաշրջանում հայ հասարակական-քաղաքական (և ոչ միայն) մտքի ասպարեզում կողք-կողքի կամ ձեռք-ձեռքի տված գործել են այնպիսի վիթխարի ու փառահեղ անհատներ, որպիսիք են Հովհաննես Թումանյանն ու Զորավար Անդրանիկը: Ամենայն հայոց բանաստեղծն ու Ամենայն հայոց զորավարը միասնական անհատնում ջանքերի գնով փորձել են փրկել ավերակվող հայրենիքը և ցեղասպանությունից մազապուրծ եղած ժողովրդի վերջին բեկորները: Ճշմարիտ է նաև, որ Անդրանիկը սրի հերոս ու ռազմի հերոս լինելուց զատ ու այդ ամենին զուգահեռ խոսքի և ոգու մարդ էր:

Հայ ժողովրդին պատուհասած ճակատագրական փորձությունները շարունակվում էին նաև 1917 ու 1918 թվականներին: Հայությունն ու հայրենիքը գտնվում էին ողբերգական կացության մեջ, բայց, միաժամանակ, ճակատագիրը հույսեր էր ճառագում՝ ավերակված հայրենիքի վերածնության և անկախության վերականգնման երազանքի ճանապարհին:

Թումանյանն ու Անդրանիկը ծանոթ էին դարասկզբից, և այդ ծանոթությունը տեղի էր ունեցել իջևանցի անվանի հայդուկ Սևքարեցի Սաքոյի միջոցով՝ Լոռիում[1]: Այն ժամանակ՝ 1904 թ., Սասնո ապստամբության ճնշումից հետո Անդրանիկը մի պահ հանգրվանել էր Արևելյան Հայաստանում, որից հետո մեկնեց Եվրոպա:

Թումանյանի և Անդրանիկի մտերմությունը խորացավ և վերածվեց կայուն բարեկամության՝ 1916-1918 թթ., երբ նրանք նաև հաճախակի հանդիպելու առիթներ ու հնարավորություն ունեին:

Հայտնի է, որ 1914 թ. Անդրանիկը ժամանեց Կովկաս և Թիֆլիսում հանդիպեց ռուսական պետական և զինվորական գործիչների հետ, ապա գլխավորեց հայկական առաջին կամավորական գունդը, որն ամենախոշոր կամավորական զորամասն էր: Առաջին կամավորական գունդը փառավոր մարտական ուղի անցավ 1914 թ. աշնանային և ձմեռային մարտերից մինչև 1915 թվականի հաղթանակները: 1915 թ. փետրվարին Անդրանիկը սաստիկ հոդացավերի պատճառով կարճ ժամկետով եկավ Թիֆլիս՝ բուժվելու, բայց ընդամենը տասն օր անց նա ստիպված էր վերադառնալ ռազմաճակատ: 1915 թ. փետրվարի 20-ին Անդրանիկի ճակատ ուղևորվելու առիթով ողջերթի միջոցառում տեղի ունեցավ Թիֆլիսում, որտեղ ջերմաշունչ խոսքով հանդես եկավ Թումանյանը: Նա հաղթանակ ու քաջություն մաղթեց հայ կամավորներին, իսկ Անդրանիկին անվանեց «Հայոց աշխարհին ազատություն բերող Գարիբալդի»[2]:

Թումանյանի իմաստնությամբ արտահայտված վերոնշյալ բնութագրումը դիպուկ է և համապատասխանում է պատմական իրողություններին: Նույնիսկ կարելի է պնդել, որ Անդրանիկը մեզ համար շատ ավելին էր, քան Գարիբալդին Իտալիայի համար: 1916 թ. մարտին Անդրանիկը կրկին Թիֆլիսում էր, որտեղ պիտի մաքառեր հազարավոր արևմտահայ փախստականների տեղավորման ու ապահովության խնդիրների լուծման հարցերով: Արևմտահայ գաղթականների հոսքը Վրաստանի ապագա մայրաքաղաք,

Անդրանիկ զորավար

Հովհաննես Թումանյան

սոցիալական ծանր տագնապներից բացի ստեղծել էր նաև քաղաքական առումով լարված իրավիճակ: Վրացական շրջանակներում սկսել էին լուրեր շրջանառվել, թե հայերը նախապատրաստվում են Անդրանիկի գլխավորությամբ հարձակվել վրացիների վրա և տիրանալ Թիֆլիսին: Այս տրամադրությունները կանխելու և ճշմարտությունը տեղ հասցնելու նպատակով Թումանյանը մամուլում հանդես է գալիս «Ինչ են ասում» հոդվածով, որում խստորեն դատապարտում է նման քարոզչություն անողներին և տարածողներին: Բանաստեղծը հիմնավորում է, որ այդ կարգի լուրեր տարածողները սադրիչներ են, որոնք ձգտում են խաթարել հայ և վրացի ժողովուրդների բարեկամական ավանդույթները: Ըստ Թումանյանի դիտարկման՝ Անդրանիկը ոչ միայն վրացիների դեմ խմբեր կազմելու և գործելու նպատակներ չունի, այլև՝ «եթե խումբ կազմելու լինի, ոչ թե ձեր դեմ գալու համար կկազմի, այլ ձեզի օգնելու, եթե երբևիցե դուք էլ նեղության մեջ լինեք մի Էնվերի ձեռքից, ինչպես մեր ժողովուրդն է»[3]: Վերոհիշյալ հոդվածում Թումանյանը ներկայացնում է Անդրանիկին իր մարդկային, ազգային ու քաղաքացիական լավագույն գծերով ու հատկություններով: Նա մեջբերում է Զորավարի հետևյալ հայտնի խոսքը. «Երբ իրիկունը գլուխներդ բարձին կդնեք որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին: Այնուհետև մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թուրք լինի, վրացի լինի, ով կուզե լինի և բարի մտածեցեք»[4]:

Թումանյանի ու Անդրանիկի ճանապարհները հատվեցին ճակատագրական 1917 թվականին, երբ նրանք երկու անգամ համախորհուրդ ուղերձներով հանդես եկան հայոց հայրենիքի համար ծանր և ճակատագրական պահերին:

Առաջինը կապված է «Հայաստան» համահայկական պարբերականի հիմնադրության հետ: Առաջին համաշխարհային պատերազմի և հայոց ցեղասպանության հետևանքով նոր, աննախադեպ իրավիճակ էր առաջացել: Եղեռնից մազապուրծ հարյուրհազարավոր գաղթականներ էին դեգերում Արևելյան Հայաստանի ու Ռուսաստանի բազմաթիվ բնակավայրերում: Վերոնշյալ գաղթականների, որբերի, Արևմտյան Հայաստանի վերաշինության հիմնահարցերի արծարծման համար Զորավար Անդրանիկը որոշեց ստեղծել նոր պարբերական, որի հիմնադրության ակունքների մոտ կանգնած էր իր հավատարիմ բարեկամը՝ Հովհաննես Թումանյանը:

Ամենայն հայոց զորավարի ու Ամենայն հայոց բանաստեղծի ջանքերով ասպարեզ եկավ «Հայաստան» օրաթերթը, որը պիտի դառնար հայ դատի խոսափողը: Անդրանիկ համարում կողք-կողքի զետեղված էին երկու մեծագույն հայ անհատների՝ Հովի. Թումանյանի և Զորավար Անդրանիկի ուղենշային հրապարակումները: Այդ օրվանից անցել է մեկ դարից ավելի ժամանակ, սակայն վերոնշյալ հոդվածները չեն կորցրել իրենց հրատապությունն ու արդիականությունը: «Հայաստանը պետք է խոսի»,- այսպես էր վերնագրված Թումանյանի հոդվածը, որում նա նշում էր, թե Հայաստանի և հայկական հարցի շուրջ ինչեր ասես չեն կատարվել, սակայն «Հայաստանը, գրեթե միշտ ակամա դատապարտված է եղել լռության: Ոչ նրա ցավն ենք կարողացել ճշմարիտ իմանալ, ոչ էլ ցանկությունը: Հայաստանը պետք է խոսի վերջապես»[5]:

Նույնքան խորիմաստ ու ծրագրային էր Անդրանիկի ստորագրությամբ հոդվածը («Հայրենիքի վերաշինությունը»), որում հստակ ու վճռական նշված է հետևյալը. «Մեր արեան հարցը արդէն դրուած է ազատութեան և համաշխարհային խաղաղության համար պատերազմող պետութեանց դիվանագիտական սեղանի վրայ... Արեան հարցի հետ և այնքան խոշոր՝ դրված է մեր ժողովրդի առջև և վերաշինության հարցը, որուն պետք է լծուին մեր բոլոր ուժերը: Վերաշինության ծանրության տակ է, որ մենք բոլորս հավաքականորեն պետք է մեր ուսերը տանք և որուն մէջ ոչ ոք պետք է ինքզինքը դուրս հաշուէ»[6]: Ահա այսպես սկսեց իր առաքելությունը «Հայաստան» պարբերականը: «Հայաստանը» խոսեց ժամանակի երկու ամենանշանավոր անհատների շուրթերով և գործողությունների ծրագիր առաջարկեց:

Թումանյանը և Անդրանիկը համայն հայության առջև հանդես եկան նույն 1917 թվականին՝ ևս մեկ անգամ: Դա վերոնշյալ թվականի վերջերին էր, երբ արդեն զգացվում էր թուրքական մոտալուտ արշավանքի շունչը: Այդ օրերին Անդրանիկի կողմից ամեն ինչ արվում էր, որպեսզի շուտափույթ կազմավորվեն հայկական կանոնավոր զինված ուժերը և շտապ ուղևորվեն ռազմաճակատ:

1917 թ. դեկտեմբերի 22-ին «Հայաստան» օրաթերթում հրապարակվեց Անդրանիկի որքան խորիմաստ, նույնքան հուզախառով կոչը, որով ժողովրդական բոլոր ուժերին հորդորում էր պաշտպան կանգնել հայոց հայրենիքին. «Պաշտպանեք, չթողնեք, որ օսմանեան բանակը, օգտվելով պատեհութենէն, գրոհ տա մեր վաղվա մեծ շեմքի վրա»[7]:

Զորավարի խորին համոզումով՝ «…Մեր ժողովուրդը կամ կապրի իր վերջին օրերը և կամ կգտնվի վաղվան ազատութեան նախօրյակին: … Հասած է ժամը վերջին մարտնչումի: Գալիք ազատությունը կը պատկանի բոլորիս, թուրքից գրավված երեք նահանգներու ժողովուրդներին»[8]:

Զորավարի կոչը գերհուզական լիցքերով բեռնավորված ասելիք ուներ իր մեջ, որը պիտի ոգեշնչեր հայ հասարակության լայն շերտերին: Ահա վերոնշյալ կոչի ամենապաթետիկ հատվածը. «Եթէ հավաքական կերպով չպատասխանես այս կոչին, եթէ պայծառ գիտակցականութիւն չունենաս հայրենիքի եւ փախստական ժողովրդի, բզկտված մայրերու, բռնաբարած հայ կոյսերու ներկա սարսափելի կացութեան, եթէ դուն հասկացողութիւնը չունենաս ստեղծված ծանր բոպէի, այնժամ ետ առ ինձմէ հերոս անունը, զոր դուն ես տուած եւ իրաւունք մի ունենար իմ վրա արտասվելու»[9]:

Զորավարը բարոյական իրավունքը վաստակել էր այսպես՝ այս ոգով ու ոճով պահանջելու իր ժողովրդից. «Հասկացութեան, տրամաբանութեան, գործի և գործելակերպի ազգային մէկ ճակատ – ահա հրամայականը, ահա վերջին խօսքը»[10]:

Զորավարի սույն կոչ-հորդորանքին անմիջապես արձագանքում է Ամենայն հայոց բանաստեղծը: Մեկ օր անց՝ 1917 թ. դեկտեմբերի 23-ին տպագրվում է նրա նամակ-արձագանքը՝ ուղղված Անդրանիկին, որում նշում է, որ ահավոր վտանգի առջև յուրաքանչյուր մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի և կարող է՝ թե՛ վերահաս վտանգը կանխելու և թե՛ բաղձալի խաղաղությանը հասնելու համար: Բանաստեղծը հպարտությամբ է նշում. «Ես չորս տղա ունեմ, չորսն էլ երկրի կառավարութեան, Ազգային խորհրդի եւ քո տրամադրութեան տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կլինեն»[11]:

Բանաստեղծի անկեղծ խոստովանանքը չափազանց հուզիչ է հնչում Զորավարի և հայրենի ժողովրդի առջև. «Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայել, միայն թե կարողանաք բոլոր ազնիվ ժողովուրդների և ազատասեր հոգիների հետ ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը»[12]:

1917 թ. դեկտեմբերի 29-ին «Հայաստան» պարբերականում տպագրվեց պատասխան նամակ-արձագանքը՝ ուղղված Հովհ. Թումանյանին, որում դրվատանքի արժանի խոսքեր են հնչում բանաստեղծի հայրենասիրական վարք ու բարքի վերաբերյալ. «Ես հրճուանքով կարդացի նամակդ, հասած է ժամը, որ բոլոր նմանին քեզի՝ տրամադրելի ընելով իրենց զաւակները և դրամը հայրենիքի պաշտպանութեան գործին: Պետք է մոռանաք պահ մը գրիչը, փոխարինելով սուրին՝ ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մէջ միայն կը ծաղկի գեղարուեստի կեանքը»[13]:

Զորավարը հույս է հայտնում, որ հայ մտավորականությունը հետևելու է Թումանյանի օրինակին, որով պիտի դարբնվի հայոց սրբազան ազատությունը: Ահա այսպիսի վարքագիծ են դրսևորել հայոց մտքի և բազկի մեծանուն վարպետները՝ Թումանյանն ու Անդրանիկը հայրենիքի համար ճակատագրորեն ծանրագույն պահերին:

Եզրահանգում. Հովհաննես Թումանյանի և Զորավար Անդրանիկի մտերմությունը և համագործակցությունը հայ ազգային քաղաքական պատմության լուսավոր և հուզախառով էջերից են: Նրանց ազնվագույն համագործակցության օրինակը խիստ ուսանելի և արդիական է մեր ժամանակների համար, քանզի հայ ժողովուրդը 20-րդ և 21-րդ դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում մղեց հայրենական պատերազմներ, որոնց ժամանակ երևացին մեր արժեհամակարգային բացթողումները: Հայրենիքի պաշտպանությունը վերաբերվում է ոչ թե կամ ոչ միայն շարքային քաղաքացիներին, այլև բոլոր բարձր ու միջին պաշտոնյաներին և նրանց զավակներին:

Ահա թե ինչու սերունդների հիշողության մեջ մշտապես պետք է թարմ պահել, թե հայրենիքի պաշտպանության համար ինչպես են մաքառել Զորավար Անդրանիկը՝ իր զինվորներով և բանաստեղծ Թումանյանը՝ իր որդիներով և դուստրերով: Հայրենիքի համար դժնդակ պահերին նրանք հանդես են եկել միասին՝ իրենց ուսերին ստանձնելով վիթխարի պատասխանատվություն ներկա ու գալիք սերունդների առջև: Նրանց կյանքն ու գործը, թողած դասերն ու պատգամները հայրենիքին անմնացորդ ու մինչև վերջ նվիրվելու լավագույն օրինակ են:

Գրականություն

1. Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա.- Ե: «Կաիսա» հր., 1996, 230 էջ:
2. Այվազյան Հ., Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան.- Ե., «Հայկական հանրագիտարան» հր., 2004, էջ 13:
3. Թումանյան Հովհ., ԵԺ, հ.VI, Ե; 1959 թ., էջ 224:
4. Նույն տեղում, էջ 225:
5. «Հայաստան» (Թիֆլիս) 16 ապրիլի 1917, թիվ 1:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում, 22 դեկտեմբերի 1917:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում, 23 դեկտեմբերի 1917:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, 29 դեկտեմբերի 1917:

Սերգեյ Փարաջանովն ու իր կինոն

Արտաշես Շահբազյան

Դիմելով Պարույր Սևակի բնորոշմանը՝ կարելի է ասել, որ հայոց արգանդը սրբորեն բեղուն եղավ նաև 1924 թվականին, երբ Խորհրդային Հայաստանի Զանգեզուրի (հետագայում՝ Զանգակատուն) գյուղում ծնվեց հենց ինքը՝ Սևակը: Նույն թվականին Թիֆլիսում ծնվեց Սարգիս Փարաջանյանը, որը կինոռեժիսորական կրթություն ստացավ Մոսկվայում, որոշ ժամանակ անց մեկնեց Ուկրաինա և այնտեղ ձեռք բերեց համաշխարհային հռչակ: Իսկ երբ Սերգեյ Փարաջանովը վերադարձավ իր նախնիների հայրենիքը և ֆիլմ նկարահանեց միջնադարյան մեծ բանաստեղծ ու երգահան Սայաթ-Նովայի մասին, հայ ժողովուրդը սրտի դռները բացեց և Սևակի ու բազում այլ արժանավորների կողքին տեղ տվեց ինքնությունը չմոռացած իր զավակին, ինչի համար որ սիրտը բացեց նույն թվականին Փարիզում ծնված Շահնուր Ազնավուրյանի և Կահիրեում ծնված Գոհար Գասպարյանի (Խաչատուրյան) համար: Բազում այլ արժանավորների կարելի է հիշել նույն թվականին աշխարհ եկած հայորդիների շարքում, բայց այս դեպքում մեր ասելիքը նվիրվում է Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյանին, որի մասին հարկ ենք համարում հիշել, քանի դեռ 2024 թվականն իր իրավունքների մեջ է:

Ո՞վ է Սերգեյ Փարաջանովը, որտեղի՞ց է գալիս, ինչով է զարմացրել ժամանակակիցներին և ի՞նչ ժառանգություն է թողել ապագայի սերունդներին:

Թիֆլիսը (1937 թ. Թբիլիսի), որտեղ ծնվել է Սերգեյ Փարաջանովը, ընկած լինելով Ասիայից Եվրոպա տանող ճանապարհին և 5-րդ դարից դառնալով Վրաստանի մայրաքաղաքը, եղել է բազմազգ, բազմամշակութային ու բազմակրոն, խայտաբղետ ու գունեղ մի քաղաք, մի մեծ մեյդան (հրապարակ), որի բաց բեմի վրա ամեն օր ինքնաբուխ խաղարկվել են զարմանազան թամաշաներ (ներկայացումներ): 19-րդ դարասկզբին, մաս կազմելով Ռուսական կայսրությանը, Թիֆլիսը փաստացի դառնում է Կովկասի փոխարքայության մայրաքաղաքը, նրա քաղաքական, վարչական տնտեսական ու մշակութային կենտրոնը:

Թիֆլիսը (Տփղիսը) վաղ միջնադարից սկսած ձգել է հայությանը, որը, հատկապես հայոց պետականության բացակայության պայմաններում, ձգտում էր դեպի այս աշխույժ կենտրոն: Նշենք պարզապես, որ դարերի ընթացքում քաղաքը կառավարած 47 քաղաքապետերից 45-ը եղել են հայեր, իսկ մինչև խորհրդային ժամանակների սկզբնական տարիները Թիֆլիսի բազմազգ բնակչության մեծամասնությունը հայեր էին: Դեպի անցյալ դարեր հայացք նետելով բավական է ասել, որ այս քաղաքում է կայացել ու հռչակ ձեռք բերել միջնադարի նշանավոր բանաստեղծ ու երգահան Սայաթ-Նովան: Հիմնականում այստեղ է իր տաղանդը դրսևորել նկարիչ և երաժիշտ Հովնաթանյանների ընտանիքը: Թիֆլիսում է ծնվել

Լոռու մելիքական նշանավոր տոհմի ներկայացուցիչ Ռուսաստանի վարչապետ, ներքին գործոց նախարար, գեներալ Միքայել Լոռիս-Մելիքովը: Ինչպես Պոլիսը արևմտահայության համար, այնպես էլ Թիֆլիսը արևելահայությանը լիարժեքորեն իր ձիրքերը դրսևորելու հնարավորություն էր ընձեռում, և 19-րդ դարում ու 20-րդ դարի սկզբին այն հայության համար վարչաքաղաքական, հասարակական, առևտրամշակութային, կրթական, կենտրոն էր:

Հիշենք, որ այստեղ են հիմնվել և գործել 20-րդ դարի արևելահայության ազգային իշխանությունները՝ Ազգային Բյուրոն և Ազգային կենտրոնական խորհուրդը, այս քաղաքում է հիմնադրվել Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: Գործարարներ Մանթաշյանցի, Արամյանցի և ուրիշների ջանքերով են կառուցվել Թիֆլիսի շատ նշանավոր շինություններ, որոնց մեծ մասն այսօր ոչ միայն զարդարում է քաղաքը, այլև ծառայում է Վրաստանի վարչաքաղաքական բարձրագույն մարմիններին:

Թիֆլիսի իր տունն է Թումանյանը վերածել «Վերնատուն» կոչված մշակութային կենտրոնի, որի անդամներն ու հյուրերն են եղել Ղազարոս Աղայանը, Լևոն Շանթը, Դերենիկ Դեմիրճյանը, Ավետիք Իսահակյանը, Գևորգ Բաշինջաղյանը, Կոմիտասը և այլք: Այս քաղաքում կրթություն են ստացել Աբովյանն ու Թումանյանը, Աղբալյանն ու ՀՅԴ առաջնորդներ Քրիստափոր Միքայելյանն ու Ռոստոմը: Այստեղ ստեղծագործել են գրողներ Ռաֆֆին, Սունդուկյանն ու Մուրացանը, աշուղ Ջիվանին, պատմաբան Լեոն: Թիֆլիսի ծնունդ են Վիկտոր Համբարձումյանն ու Արամ Խաչատրյանը, Երվանդ Քոչարն ու Տիգրան Պետրոսյանը, ֆրանսահայ գրող Անրի Թրուայան, ամերիկահայ կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանն ու ուրիշ նշանավոր հայորդիներ՝ այն վարչաքաղաքական, գործարար ու մտավորական ընտրախավը, ներգաղթյալները, որոնց նախնիներն այստեղ էին հաստատվել Կիլիկիայից, Անիից ու Հայաստանի երկու

հատվածների այլ տարածքներից: Անդրկովկասյան հանրապետությունների հռչակումից և Խորհրդային Միության կազմավորումից հետո թիֆլիսահայության վարչաքաղաքական ու հասարակական դերի սահմանափակման, հայության կենտրոնի Երևան տեղափոխման հետ թեև դանդաղորեն անկում ապրեց Թիֆլիսի հայկական կյանքը, այնուամենայնիվ, մտավորականության ու մշակութային գործիչների մի հրաշալի փաղանգ դեռ պետք է ձևավորվեր այստեղ, որոնց մի մասը պետք է մնար տեղում, մի մասը հեռանար հատկապես դեպի Ռուսաստան, իսկ մի զգալի մասն էլ գար հարստացնելու ոտքի կանգնող Խորհրդային Հայաստանի մշակութային և ոչ միայն մշակութային կյանքը:

Մասնավորեցնելով ասելիքը՝ նշենք, որ Խորհրդային շրջանի վրացահայ կերպարվեստագետների փայլուն ներկայացուցիչները եղան Երվանդ Քոչարն ու Գևորգ Գրիգորյանը (հայ Ջոտտոն), Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանն ու նրա տաղանդավոր զավակներ Լավինիա, Ջուլեյկա, Վազգեն Բաժբեուկ-Մելիքյանները, Վաղարշակ Էլիբեկյանն ու նրա տաղանդավոր զավակներ Ռոբերտ և Հենրիկ Էլիբեկյանները, Հովսեփ Կարալյանը, Գայանե Խաչատրյանը և ուրիշներ:

Ինչո՞ւ կանգ առա հատկապես կերպարվեստագետների հանգամանքի վրա: Քանի որ մեր ասելիքը ծավալվելու է Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության շուրջ, կարելի է հաստատել, որ լինելով իր սերնդի և միջավայրի օժտված ներկայացուցիչներից մեկը, ակնհայտ է նրա տաղանդը հատկապես կերպարային արվեստի ասպարեզում: Այդ տաղանդն արտահայտված է նրա բազմաթիվ կոլաժների, ձեռքի այլ աշխատանքների ու նկարների մեջ և, իհարկե, նրա կինոֆիլմերում: Սարգիս Փարաջանյանի այս ձիրքը Թիֆլիսի հայկական մշակութային միջավայրի մեկ արգասիքը լինելուց առաջ ժառանգված է իր ծնողներից: Նրա հայրը՝ Հովսեփը, դեռևս նախախորհրդային շրջանից ունեցել է հնավաճառ իրերի խանութ, և Սարգիսը մանուկ հասակից առնչվել է ակնեղենի ու ոսկյա իրերի, գորգերի, կարպետների, շքեղ հագուստների, զանազան ձեռագործ իրերի հետ: Այդ ամենի նկատմամբ հետաքրքրությունն ու սերը նրա մոտ պահպանվեց ամբողջ կյանքում և նույնիսկ փրկարար նշանակություն ունեցավ բանտում, տանը մեկուսացվածության և աղքատության երկար ու ձիգ տարիներին, երբ նա դիմանալու և կյանքը շարունակելու համար ուժ էր ստանում իր անսպառ երևակայությունից երկնելով բազմաթիվ կինոսցենարներ, ինչպես և կոլաժներ, տիկնիկներ, ձեռագործ այլ աշխատանքներ:

Ինչպես վերն ակնարկեցի, Մոսկվայում կինոռեժիսորական կրթություն ստանալուց շատ չանցած, Փարաջանովը Կիևի Դովժենկոյի անվան կինոստուդիայում նկարահանում է ֆիլմեր:

1970 թվականին «Գարուն» ամսագրի համար արված մեկ «զրույցի» ժամանակ (այն ամբողջությամբ ներկայացված է «Դրօշակի» այս համարում) Փարաջանովն ասում է. «Ես ստեղծել եմ հինգ միջակ, գուցե նույնիսկ վատ նկար: Կային այնտեղ բռնկումներ թե ոչ, դա չէ կարևորը: Պատահեց մի բան ողբերգության հավասար, որ խթանեց իմ մտածողությունը... Խթանեց: Ես սկսեցի մտածել պլաստիկայով»:

Այստեղ ավելացնենք, որ երիտասարդ տարիքում Փարաջանովը սովորել է նաև Թբիլիսիի կոնսերվատորիայի վոկալի բաժնում, ինչպես նաև Օպերային կից բալետի ստուդիայում:

Որպես կինոպատկերի արտահայտչաձև տեսնելով պլաստիկ լուծումը, մասնավորապես մարմնի շարժումը, Փարաջանովը հայտնաբերում է իր համար նոր կինոլեզու: Արտահայտման արտաքին ձևի զգացողությունը խորանում է նրա մոտ՝ վերածվելով ասելիքի բուն բովանդակության բացահայտման միջոցի: Փարաջանովն այստեղ գտնում է ինքն իրեն, ինչպես ձուկը գտնում է իր ջուրը, որովհետև նրա համար ի սկզբանե հոգեհարազատ են երաժշտությունը, պարը, գեղանկարչությունը, ինչպես և սերը ժողովրդական ծեսի, ավանդույթի նկատմամբ:

Մարտիրոս Սարյանն ասել է. **«Փարաջանեանը հիմնական շեշտը դնում է «էկրան-կտաւ»ի վրայ եւ այն լուծում է մեծ տաղանդով, հասնելով խոր բովանդակութեան»[1]:**

Ի վերջո, ի՞նչ է նշանակում մեր ականջին շատ բան չասող «կինեմատոգրաֆ» բառը: Սփյուռքահայերը, բառն ամբողջովին թարգմանելով հայերենի, վաղուց գործածում են «շարժապատկեր» եզրը: Կինեմատոգրաֆը իր նախնական առաքելությամբ հենց շարժվող նկար է, ինչը լավագույնս արտահայտվել է կինոյի ոսկե շրջանում, երբ այն դեռ համր էր և «խոսում էր» շարժվող պատկերների լեզվով:

Ի դեպ, հայտնի է, որ խոսքի մուտքը կինո ժամանակի շատ ստեղծագործողներ, որոնց թվում և կինոարվեստի արքա Չառլի Չապլինը, խանդավառությամբ չընդունեցին, հասկանալով, որ պատկերի դերակատարությունը կարող է ստորադասվել, և այն կվերածվի խոսքին կամ գրականությանն ուղեկցող գործոնի:

Փարաջանովի կինոն, Կիևում նկարահանած «Մոռացված նախնիների ստվերները» (1964 թ.) ֆիլմով, այդուհետ վերածվում է կոմպոզիցիոն կառուցվածք ունեցող գեղարվեստական պատկերաշարի, որի երաժշտությունը, ձայնային ֆոնները և խոսքը, դառնում են պատկերի ասելիքը լրացնող միջոց:

Փարաջանովի պատկերները ոչ միայն դառնում են առանձին կտավներ, այլև հեղինակի պլաստիկ և երաժշտական մտածողության շնորհիվ օժտվում են ներքին ռիթմիկ կառուցվածքով ու երաժշտականությամբ: Հիմք ընդունելով պատկերի ասելիքն ու արտահայտչական, զգացական ուժը՝ Փարաջանովը սկսում է երկրորդական դեր վերապահել սյուժեին: Այս երևույթն ակնառու դրսևորվում է հատկապես աշխարհում շռնդալից հաջողություն ունեցած «Մոռացված նախնիներից» հետո 1968 թվականին Հայաստանում նկարահանած «Նռան գույնը» ֆիլմում:

Ֆիլմի աշխարհ գալուց հետո հայ ժողովուրդը թեև հպարտություն ապրեց ստեղծագործության և

Կադր «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմից

նրա հեղինակի համար, սակայն դժվարություն ունեցավ ընկալելու և ըմբռնելու շարժապատկերի ասելիքը: Թերևս ֆիլմը «հանգիստ», ճիշտ տեսանկյունից ընկալելուն խանգարեց (այսօր էլ շարունակում է խանգարել) այն թյուր կարծիքը, թե ժապավենի ենթատեքստում հակախորհրդային և ազգայնական ասելիք է: Այս մտայնության համար հիմք է ծառայել այն իրողությունը, որ Փարաջանովը, հակախորհրդային և առհասարակ քաղաքական գործունեությամբ երբեք չզբաղվելով, տարբեր առիթներով հախուռն կերպով և հրապարակայնորեն սուր և կոպիտ որակումներ է կատարել խորհրդային համակարգի և իշխանությունների հասցեին, ինչը պատճառ է դարձել (պաշտոնական մեղադրանքները բոլորովին այլ են եղել), որպեսզի Փարաջանովը ձերբակալվի երեք անգամ և բանտում անցկացնի ավելի քան 4 տարի:

Իրականում ֆիլմը գեղագիտական լեզվով ներկայացնում է Սայաթ-Նովա միջնադարյան պոետի աշխարհը, հույզերն ու տառապանքը: Ֆիլմի ասելիքի բացահայտման միջոց կարելի է համարել ենթավերնագրերը, որոնք կարծես ֆիլմը բաժանում են առանձին նովելների և տալիս են դրանցից յուրաքանչյուրի «վերծանման» բանալին: Ֆիլմի սկզբում գրվում և արտասանվում է հետևյալ «ենթավերնագիրը».

«Այս կինոերկը որևէ բանաստեղծի կյանքի պատումը չէ: Նկարի հեղինակները փորձում են վերարտադրել բանաստեղծի աշխարհը, նրա հոգու ելևէջները, կրքերն ու տառապանքը՝ լայնորեն օգտագործելով միջնադարյան հայ տաղերգուների սիմվոլներն ու այլաբանությունները»:

Սա նախ նշանակում է, որ կինոնկարում չպետք է այուժե փնտրել, թեև ակնհայտ է, որ այն նվիրված է Սայաթ-Նովային, ակնարկներ կան նրա կենսագրության հանգրվանների վերաբերյալ, ի վերջո հնչում են նրա երաժշտության և բանաստեղծական խոսքի պատառիկներ: Եթե որոշ այլաբանություններ ու խորհրդանշաններ կարող են դժվար ընկալելի լինել, որովհետև դրանք մեկ դեպքում հայ մշակույթի միջնադարյան խորհրդանիշներ են, իսկ մեկ այլ դեպքում Փարաջանովի անսահմանափակ երևակայության արգասիքը, ապա ֆիլմի ընդհանուր բովանդակությունը, պոետի կյանքի փուլերի մասին վերացարկված ակնարկներով անգամ, հասցեական է և բացատրելի:

Ինչպես ասվեց ֆիլմը միջնադարյան պոետի ու երգահանի հոգու ելևէջների, կրքերի ու տառապանքի մասին է, որն ավելի շատ ունի ընդհանրական բնույթ և ներկայացված է գեղարվեստականացված արտահայտչաձևերով:

Ահա ապագա բանաստեղծի մանկության շրջանը, երբ նա շրջապատված է հոգևորականներով, նրանց կենցաղով և գրքերի զարմանահրաշ աշխարհով: Պատանին թերթում է այդ գրքերը, դիտում հայկական միջնադարյան մշակութային մտածողությունն իր մեջ խտացրած մանրանկարչական պատկերները:

Կանայք կարպետ են լվանում և նրանց մերկ ոտնաթաթերի շարժումը պար է հիշեցնում: Գորգ հյուսող կանանց մատների ներքո սանրի թելերի ձայնը երաժշտություն է հիշեցնում: Դափի նվագ են հիշեցնում ջրի շիթի հարվածի ձայնը մետաղյա սկուտեղանման թասին և ապա նույն թասի վրա լվացած թելի խրձի շրմփոցը, երբ տղամարդիկ կրակի վրա եռացող պղինձներից փայտով դուրս են բերում թելի խրձերն ու նետում թասի վրա: Տղան մի կողմ է տանում բաղնիքի երդիկի պատուհանը ծածկող կարպետը և նայում է լողացող տղամարդկանց, ապա և կնոջ թաց մարմնին, որի վրայով ջուր է հոսում, իսկ կրծքին խխունջ է կպած (ի դեպ, խխունջը հայտնվում է նաև այլ դրվագներում: Մի դեպքում, օրինակ, այն Սայաթ-Նովայի կրծքին է: Առհասարակ խխունջն ականջին մոտեցնելիս թվում է, թե լսում ես ծովի հեռավոր խշշոցը: Արդյո՞ք Փարաջանովի մտահղացմամբ այն հերոսների իղձը, հեռավոր երազանքն է խորհրդանշում): Աշուղը քամանչան երկարում է պատանի Հարությունի կողմը: Կարծես թե դա նրա ճակատագիրն է, ձայների, գույների, խայտաբղետ այս իրականությունը ձևավորում է ապագա բանաստեղծին ու երգահանին, ով նեկտար հավաքող մեղվի նման այդ ամենը ընկալում և ամբարում է իր սրտում ու մտքում: Կարծում եմ՝ ասվածի մասին է վկայում համապատասխան հատվածի ենթավերնագիրը. **«Աշխարհի գույներից ու բույրերից իմ մանկությունն արարեց բանաստեղծի քնարն ու տվեց ինձ»:**

Եվ այսպես անցնում են կյանքի փուլերը, որոնց մասին վկայում է անընդհատ երկրորդ պլանում պտտվող տիկնիկ-ժամացույցը: Ֆիլմի տարբեր դրվագներում ցուցադրվում են միջնադարյան մանրանկարները, իսկ մյուս պատկերները, որոնք պոետի կյանքի արտացոլումն են, կարծես շարունակությունն են միջնադարյան այդ մանրանկարների՝ պատկերների, գույների հստակությամբ ու ջերմությամբ, որոշակի կոմպոզիցիոն կառուցվածքով: Բանաստեղծի գունեղ աշխարհի հետ Փարաջանովը ֆիլմում ազդանշանների պես հնչեցնում է նրա երաժշտությունը, նույնպես պայծառ, տաք միաժամանակ հեռու արևելյան մելամաղձոտությունից ու քաղցրաձորությունից: Փարաջանովը այս և իր մյուս ֆիլմերում ներկայացնում է նաև ճարտարապետությունը՝ եկեղեցիներ, ամրոցներ, պալատներ կամ տարբեր կառույցների մասեր, դրանք ընդգծելու համար երբեմն «հեռացնելով» միջավայրը,

ինչպես նկարն են մկրատով զատում թղթի ավելորդ մասերից: Ֆիլմի յուրատեսակ ենթավերնագրերը, որպես բանաստեղծականությամբ շնչող խոսքի յուրատեսակ պատառիկներ, նույնպես լրացնում են միջնադարյան մշակութային քարտեզի ամբողջականությունը: Փարաջանովն այսպես է բացատրում. **«Պիտի խօսիմ այս դարաշրջանին ու մարդոց մասին, իրենց զգացումներուն ու մտածումներուն մասին բարենորոգիչ լեզուով մը, ծայր աստիճան ընդհանրական լեզուով մը որ իրերուն լեզուն է: Զարդաքանդակները, մագաղաթները, ազգային տարազները, գորգերն ու կահկարասիները տարրերն են այդ լեզուին եւ անոնցմէ կը կազմուին իւրաքանչիւր դարու նիւթական, բայց զգալի ոգեկանութեամբ մը պարուրուած յատկութիւնները»[2]:**

Զարմանալի է թվում միջնադարի այդպիսի ճանաչողությունն ու զգացողությունը, ավանդույթի, ծեսի պատկերումը խորհրդանշանների սեղմ պատկերաշարի հետ: Դադարում ես, սակայն, զարմանալ, երբ հիշում ես, որ Փարաջանովի առաջին գլուխգործոցը ներկայացված է ըստ Ուկրաինայում ապրող գուցուլների ասքի՝ փոքրաքանակ այս ազգության ծեսերի, սովորույթների ու հավատալիքների խորապատկերի վրա: Նույն կերպ վրացական մշակույթն է ներկայացվում «Լեգենդ Սուրամի ամրոցի մասին» (1984 թ.) ֆիլմում, ինչպես և Իրանի տարածքում ապրող Ղաջարների մշակույթը՝ նրանց կյանքից վերցրած «Աշուղ Ղարիբ» (1989 թ.) կինոպատումում:

Փարաջանովն իր վերը բերված խոսքում ասում է, որ ֆիլմում պետք է խոսի իրերի լեզվով, որի տարրերն են զարդաքանդակները, մագաղաթները, ազգային տարազները, գորգերն ու կահ-կարասին: Իսկապես էլ նրա ֆիլմերում ներկայացված իրերն ու առարկաները, ճարտարապետական կառույցներն ու նրանց հատվածները ավելին են, քան գործողությունների ֆոնը, դրանք լրացնում են ասելիքը, ժամանակի և միջավայրի զգացողությունը. գեղեցիկ են, խոսուն, հաճախ խորհրդավոր՝ օժտված էմոցիոնալ ներուժով: Այդպիսի ընդհանրական, խորին խորհուրդների զգացողության են մղում անգամ ծեսերի ու կենցաղի կոնկրետ տեսարանները, ինչպիսիք են խաղող ճմռելը, ոչխար մորթելն ու մատաղ անելը և այլն: Փարաջանովի մատուցմամբ ընկալելի և գեղեցիկ են դառնում մանրանկարչությունը, ճարտարապետությունը, զանազան առարկաները, ակնեղենը, նոները, դաշույնները, ժապավենները, հագուստները, տիկնիկները, կենդանիները, գորգերն ու կարպետները:

Դատելով ոչ միայ ստեղծագործություններից, այլև Փարաջանովին ճանաչած և նրա հետ գործակցած անձանց վկայություններից՝ Փարաջանովը տաղանդավոր էր իր հորդուն ու անսպառ երևակայությամբ: Կյանքի ամեն վայրկյանը նա կարող էր վերածել կինոյի կամ թատրոնի՝ սովորական ամեն իրավիճակ կամ առարկա մատուցելով որպես ներկայացում, կամ արվեստի ստեղծագործություն: Սովորական առարկաները հանկարծ նրա ձեռքում դառնում էին խոսուն, մաս էին դառնում ինչ որ գեղեցիկ պատկերի:

Կադր «Նռան գույնը» ֆիլմից

Ահա Լոռվա գողտրիկ անկյունում եկեղեցու մեջ պետք է նկարահանվի «Նռան գույնը» ֆիլմից կաթողիկոսի մահվան հետ կապված էպիզոդը: Ըստ կինոֆիլմի երկրորդ ռեժիսորի պատմածի՝ զանգվածային տեսարանի համար տասնյակ մարդկանց հագցրել էին համապատասխան զգեստներ, և նրանք պետք է ցուցադրեին ժողովրդի վիշտը կաթողիկոսի մահվան առիթով: Փարաջանովը սովորականի պես նկարահանումից առաջ շիկացած ջղերով այս ու այն կողմ է վազվզում և հրահանգներ է տալիս: Հանկարծ մի պահ կանգ է առնում և նայում ձորի կողմը, իսկ ձորով ոչխարի հոտն է անցնում: Մի պահ նայելուց հետո Փարաջանովը կտրուկ հրահանգում է.«Մարդկանց չեմ ուզում նկարահանել, այս հոտը պիտի նկարահանեմ»:

Ո՞վ է կաթողիկոսը՝ հոտի հովիվը, և ահա ֆիլմում տեսնում ենք, թե ինչպես հոգևոր առաջնորդի մահվանից հետո մոլորված ոչխարները լցվում են եկեղեցի, խռնվում իրար գլխի՝ պատերի տակ չիմանալով անելիքները: Սա պահի մեջ ծնված տեսարան է, որը գեղարվեստորեն ավելի արտահայտիչ է, հուզիչ, բայց ոչ լալկան, իսկ ամենակարևորը, ներդաշնակ է ընդհանուր ֆիլմի այլաբանական մտածողության հետ, այնպես, ինչպես ֆիլմի պատումի եզրափակումը՝ մեծ երգահան-պոետի մահը: Սայաթ-Նովան պառկած է եկեղեցու հատակին: Նրա շուրջը վառվող հարյուրավոր մոմերը կարծես արտահայտում են հոգու թրթռուն լույսը: Տարբեր կողմերից սրահ են նետվում գլուխները կտրած հավեր, որոնք, թփրտոցով այս ու այն կողմ նետվելով, հանգցնում են մոմերը, իսկ հանդիսականը զգում է ինչպես թպրտոցով մարեցին պոետի հոգին ու նրա լույսը՝ մատուցված գեղարվեստորեն ներդաշնակ ողջ ֆիլմի ձեռագրին, գեղեցիկ, զգացական, առանց ավելորդ զեղումների ու ծեքծեքումների և փիլիսոփայական խորքով:

Փարաջանովն արվեստագետի իր տաք ու գունեղ մտածողությամբ իսկական արևելքցի է, կարծես հոգևոր պորտալարով կապված իր պես Թիֆլիսում ծնված ու կյանքի մեծ մասն ապրած Սայաթ-Նովայի հետ: Բայց մեծ նախորդի նման նա հայ մշակութային մտածողության կրողն է՝ ջերմ ու զգացմունքային և, միաժամանակ ռացիոնալ, տրամաբանված ու չափի



Սերգեյ Փարաջանովը և Անդրեյ Տարկովսկին

սահմաններում, առանց շիրոտ ու մելամաղձոտ մելիզմի, զգացմունքների չափազանցված ու արհեստականորեն սրված դրսևորումների: Սրանով այդ արևելքը նույնքան արևմտյան է և կարող է գերել ռացիոնալիզմի ու տրամաբանության վրա հիմնված աշխարհի կեսը, ինչպես որ կարողացել են գերել Նարեկացին, հայ մանրանկարիչները, Սայաթ-Նովան, Կոմիտասը:

Այս հատկություններով կինոռեժիսոր Փարաջանովն առանձնահատուկ էր, նման չէր և չէր կրկնում ոչ ոքու: Վերը նշեցի, որ Փարաջանովը քաղաքական մարդ չէր, սակայն և տոտալ գաղափարախոսության կաղապարները խորտակող նրա մտածողությունն արդեն իսկ քաղաքականություն էր, որը ազատ մտածողության ձգտումով կարող էր վարակել ուրիշների: Այդ իսկ պատճառով Սերգեյ Փարաջանովի մտածողությունը Անդրեյ Տարկովսկու մտածողության պես մարտահրավեր էր խորհրդային գաղափարական կաղապարներին՝ ազատության նոր հորիզոններ նվաճելու հատկությամբ, և ուրեմն համակարգը չէր կարող բարի աչքով նայել նրանց և նրանց նմաններին:

Փարաջանովն իրավացիորեն ափսոսում է իրենից գողացված ավելի քան 15 տարիների համար: Չորս տարվա դաժան կյանքից հետո նա բանտից դուրս է գալիս՝ հետն ունենալով 17 սցենար, շորի կտորներից, թղթերի պատառիկներից, մածունի կափարիչներից, փշալարերի կտորտանքից սարքված բազմաթիվ մեծ ու փոքր փորագրություններով, նկարներով և կոլաժներով: Տարբեր պահերի իր մտահղացումների շարքում եղել է նկարահանել «Սասունցի Դավիթ», «Արա Գեղեցիկ», «Կոմիտաս», «Նարեկացի» թեմաներով ֆիլմեր:

1989 թ. ռուսական «Կինոհամայնապատկեր» հաղորդաշարին տված հարցազրույցում Փարաջանովն ասում է, թե ռուսներն ու ուկրաինացիները հրավիրում են նկարահանելու «Ասք Իգորի գնդի մասին» պոեմը, ԱՄՆ-ից հրավիրում են նկարահանելու «Հայավաթի երգը», Միլանի կինոստուդիան ցանկանում է, որ նա իրենց մոտ նկարահանի «Փոքրիկ իշխանը», իտալացիները հրավիրում են «Աստվածային կատակերգության», իսկ գերմանացիները «Ֆաուստի» էկրանավորման: Կասկած չկա, որ այս թեմաներով յուրաքանչյուր էկրանավորում կհարստացներ համաշխարհային մշակույթը, մյուս կողմից՝ նույն այս հարցազրույցում Փարաջանովն ասում է, որ այդ պահին «Հայֆիլմ» կինոստուդիայում ինքը սկսել է «Խոստովանանք» ֆիլմի նկարահանման աշխատանքները, և այս ինքնակենսագրական ստեղծագործությունը հավանաբար կլինի իր վերջին ֆիլմը: Նա բացատրում է, որ արդեն տարիքն առել է (հավանաբար նաև հոգնած էր արդեն կամ զգում էր մոտալուտ մահը): Անաչառ լինելու համար ավելացնենք, որ 80-ականներին Հայաստանում նրա հետ խոսվել է «Սասունցի Դավիթը» կամ «Արա Գեղեցիկը» նկարահանելու մասին: Նա նաև ցանկություն էր հայտնել Էջմիածնի Մայր տաճարի գմբեթները նկարահանել, սակայն, շատ բանից հետո ինքն է հրաժարվել նախընտրելով նկարահանել «Խոստովանանքը», ինչի համար կինոստուդիան տրամադրել է բոլոր հնարավորությունները, սակայն անողոք հիվանդությունը կասեցրել է սկսված աշխատանքների ընթացքը:

Խոստովանենք, որ շատ դեպքերում մենք, կամ մեր իշխանություններն ազգային նախանձախնդրություն չենք դրսևորել մեր մեծերի և նրանց ժառանգության հարցում: Սերգեյ Փարաջանովի պարագան կարելի է բացառություններից համարել, քանի որ Խորհրդային Հայաստանի իշխանությունը նախաձեռնեց նրա թանգարանի կառուցումը, որը միաժամանակ կդառնար մեծատաղանդ հայորդու տունը:

Բնականաբար, Փարաջանովը շատ գոհ էր այս նախաձեռնությունից, և նրա ստեղծագործական նյութական ժառանգությունը տեղափոխվեց Հայաստան: Ցավոք, անբուժելի հիվանդությունը թույլ չտվեց, որ Փարաջանովը ինչ որ չափով երջանկացած զգար իրեն իր տուն-թանգարանը վայելելով:

Այդ թանգարանն այսօր հարստացնում է Երևանի գրոսաշրջային քարտեզը: Մինչև վերջին շրջանը Հայաստանի ղեկավարներն այս զարմանահրաշ տանն այցելություններ ու ընթրիքներ էին կազմակերպում պետական բարձրաստիճան հյուրերի համար:

Իհարկե, մեծերը հարստացնում են սեփական ժողովուրդների կենսագրությունը, և նրանց հոգևոր ու ֆիզիկական գանձարանը: Առանց այս կամ այն կողմ չափն անցնելու արձանագրենք, որ Սերգեյ Փարաջանովը իր, թեկուզ մեկ խաղարկային ֆիլմով հարստացրեց հայ մշակույթը և այսօր էլ սովորեցնում է, որ մենք տգետ, օտարի առջև ծնկած ապրելու կոչված գետնաքարշ ազգ չենք, և պոկվելով մեզ կպած կեղտից պիտի բարձրանանք դեպի մաքուրն ու վեհը, հզորների հետ չափվենք մեր ունեցածով և արևի տակ արժանապատվորեն ապահովենք մեր շարունակականությունը՝ ունեցած հզոր ժառանգության շնորհիվ:

Հղումներ

[1] Նոան գոյնը, Լիբանան, «Գառնի» մատենաշար 1985 թ., էջ 27:
[2] Նույն տեղում, էջ 2:

Սարգիս Փարաջանեան
«Մեր ժամանակի ամենահանճարեղ բեմադրիչը...»

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Սիրելի Ընթերցող՝

Այս հոդվածի խորագրի վերագրումը մերը չէ, այլ Փարիզ հրատարակուող «Le Figaro» մեծազդեցիկ օրաթերթին, որ Փարաջանովին ոչ միայն կը համարէ 1970-ական թուականներու «*Ամենահանճարեղ բեմադրիչը*», այլ նաեւ «*Գերհանճար*» կ'անուանէ զայն: Թէեւ բացառուած չէ, որ այս չափազանց բարձր բնութագրման մէջ իր դերը կատարած ըլլայ նաեւ, այդ օրերու հակախորհրդային քաղաքական գործօնը... ինչպէս ոմանք կ'ենթադրեն: Այնուամենայնիւ, եթէ Փարաջանովի արուեստը բացառիկ արժէք չներկայացնէր ֆիլմարուեստի մէջ, դժուար թէ միջազգային այլ թերթեր («Le Monde», «The Sauday Times», «Politic Ebdo», «Los Agelos Times»...) եւս նմանօրինակ բարձր գնահատանքներ արձանագրէին իր հասցէին: Նկատի առէք նաեւ՝ անոր միայն մէկ ստեղծագործութիւնը՝ «Հրեղէն Ձիեր»ը (Մոռցուած նախնիներու ստուերները) երկու տարուայ ընթացքին, արժանացաւ քսանչորս միջազգային մրցանակներու: Թէեւ այս քանքարի ծնունդեան 100-ամեակը պաշտօնապէս նշուեցաւ հայրենիքի մէջ, սակայն ըլլայ հայրենիքի թէ յատկապէս Սփիւռքի պարագային, դեռեւս ան ոչ ճանչցուած է եւ ոչ ալ գնահատուած՝ ըստ արժանուոյն... յատկապէս՝ նոր սերունդի մօտ:

Երեւան, Բաղրամեան պողոտայ, 1980, ուշ Օգոստոս

Իմ հաւատարիմ ընթերցող՝

Օրը Շաբաթ էր, հաւաքուած էինք Վարուժան Խտըշեանի գետնայարկ բնակարանը (ներկայ էին «Գեղարուեստաթատերական բարձ. հիմնարկ»ի ուսանող՝ Ժան Ֆարրան եւ մարմնակրթանքի ուսանողներ՝ Պօղոս Գասպարեանն ու Մարտիկ Պոյաճեանը) եւ կը զրուցէինք յաջորդ օրուայ մեր որսորդական ծրագրի մասին: Յանկարծ փոթորիկի պէս ներս մտաւ մէկը (դուռը բաց էր, որովհետեւ ամառ էր եւ տաք), պայուսակ մը ուսին եւ քանի մը լուսանկարչատուփ վիզէն կախած: Ճանչցայ... Գալուստ Պապեանն էր, որուն հանդիպած էի Պէյրութի մէջ: Ծանօթացման եւ յաւուր պատշաճի զրոյցէ մը ետք, Վարուժանը Գալուստին հրաւիրեց մեր շաբաթական «որսորդական խնճոյքին» աւելցնելով որ «*կրնաս նաեւ՝ հետդ բերել գանապահայ ընկերներդ*»: Իսկ Գալուստը դառնալով ինծի ըսաւ.

- *Քեզ կը փնտռէի, ըսին որ կրնամ գտնել քեզ Վարուժան Խտըշեանի մօտ, որուն բնակարանը Սփիւռքահայ ուսանողներու ու արուեստագէտներու հաւաքավայր մըն է:*

- *Ճիշդ ըսած են քեզի, որովհետեւ ասիկա մեր ակումբն է, ուր կը բնակին նաեւ՝ Ժանոն եւ Մարտիկը, սակայն ակումբի վերակացուն Վարուժն է, որովհետեւ թէ տարիքով մեծ է մեզմէ եւ թէ գիտէ՝ բեմադրիչ է:*

- *Վերակացո՞ւ , ի՞նչ վերակացու: Չհասկացայ...*

- *Այսինքն ակումբի հայրիկի պէս բան մը...*

Երբ նշմարեցի որ Վարուժը մոռայլուեցաւ ու յօնքերը կիտեց, անմիջապէս աւելցուցի

- *Ըսել կ'ուզեմ ակումբի տնօրէնը...*

Իսկ Վարուժանը, որուն հետ միշտ նմանօրինակ քաշքշուքներու մէջ էինք... իբրեւ թէ կատակի սահմաններու մէջ, ըսաւ.

- *Գալուստ, այս «Այնճարցին» գաւառէն եկած մարդ է... իբրեւ թէ կը սրամտէ, ի՞նչ գործ ունիս ասոր հետը...*

Իմ հեքրքրասէր ընթերցող՝

Թէեւ շարունակութիւնը աւելի հետաքրքրական է, սակայն եկուր համաձայնաբար յետաձգենք այն այլ առիթի ու անցնինք բուն նիւթին:

Գալուստը ցած ձայնով ականջիս ըսաւ.

- *Մովսէս, պէտք է որ առանձին խօսինք...:*

- *Գալուստ ջան՝ նախ գիտեմ որ ինչ պիտի ըսես եւ յետոյ այս տղաքը՝ բոլորն ալ մեր լաւ ու վստահելի ընկերներն են, կրնանք իրենց ներկայութեան ազատօրէն խօսիլ:*

- *Բայց ուրիշ գիտես որ ի՞նչի մասին պիտի ըսեմ:*

- *Այն անձնատրութիւնը որ քեզմէ խնդրած է, որ երթաս եւ լուսանկարես որոշ գրողներու եւ մտաւորականներու, նոյն անձը ինծի լուր ղրկած է որ օգնեմ քեզի:*

- *Ճիշդ ես, ինծի ըսաւ որ կ'երթաս Մովսէսին քով, ան բոլորին ալ կը ճանչնայ եւ ինք կ'ուղեկցի քեզի....:*

- *Նայիր քանի որ ժամանակ կարճ է, այսօրուընէ սկսեալ նպատինք ծրագրենք թէ ե՞րբ, որուն քով պիտի երթանք:*

Այս անգամ աւելի ցած ձայնով ականջիս փսփսաց.

Փարաջանով (Գալուստ Պապեանի լուսանկարներեն)

- Մենք՝ Գանապահայերու այս խումբով Թիֆլիս ալ պիտի այցելենք, Պողոսը ըսաւ որ «Եթէ կրնաս գնա եւ Փարաջանովն ալ լուսանկարէ»:

- Հրաշալի գաղափար է, բայց նկարի առ որ այս մէկը «նուրբ» հարց մըն է... Ամենայն դէպս սպասէ... յետոյ կ'ըսեմ քեզի...

Գալուստին այդպէս ըսի, որովհետեւ այդ օրերուն Փարաջանով «անպաշտօն կերպով» տնային կալանքի ենթարկուած էր, եւ խիստ հսկողութեան տակ կը գտնուէր: Ոչ թէ չէր ուզեր, այլ չէր կրնար ոեւէ մէկը ընդունիլ իր մօտ... յատկապէս՝ արտասահմանցի մը: Ես անմիջապէս Ալիքին (Թոփչեան) հեռաձայնեցի եւ հարցը ներկայացուցի անոր, ընթացքին տուի նաեւ՝ Պողոսին անունը... որուն հանդէպ Ալիքը խիստ յարգանք ունէր... իբրեւ խմբագիր ու հրապարակախօս: Ան առանց պատասխանելու իմ հարցին, ընթրիքի հրաւիրեց: Գացի, իր տիկինն ալ հոն էր՝ Անահիտը... Իր կանացի հմայքով, երկար վարսերով ու գեղեցկութեամբ հանդերձ: Երկուքն ալ մօտիկ էին Փարաջանովին: Ալիքը իր ընկերներուն՝ Հենրիկ Իգիտեանի, Հենրիկ Էդոյեանի, Արտեմ Յարութիւնեանի եւ այլոց հետ, դեր ստանձնած էր «Նռան Գոյնը» ժապաւէնին մէջ: Իսկ Անահիտը աւելի մօտիկութիւն ունէր անոր հետ, որովհետեւ Փարաջանով բարձր գնահատելէ ետք Անահիտի դերասանական արուեստը, կը մտածէր իր մէկ ժապաւէնին մէջ, գլխաւոր դերը վստահիլ անոր: Անոնք՝ տէր եւ տիկին Թոփչեանները, կապ պահեցին Փարաջանովի հետ, եւ քանի մը օր ետք Ալիքը տեղեկացուց.

-Թող գնայ, ընդունելու է... բայց որովհետեւ ամէն մարդու դիմաց չի կարելի դուռը բանալ... ի հարկին դրսից թող ձէն տայ...: Իսկ ապահով լինելու համար, կարիք չկայ Գալուստին տեղեակ պահելու, միջնորդների եւ առհասարակ միջնորդութեան մասին... :

Օրեր ետք, երբ Վարուժանի տան մէջ (ներկայութեամբ՝ Սօս Սարգսեանի, Մուշեղ Գալշոյեանի, դերասանուհի Յասմիկ Տէր Կարապետեանի, ինչպէս նաեւ՝ Գանատահայ Սիմոն եւ Լեւոն Հասըրճեան եղբայրներու եւ երկու տիկիններու (Սօսի եւ Սոնա), այս հարցը արծարծուեցաւ, մեր հերթական որսորդական հաւաքի ընթացքին, կողմնակիօրէն Գալուստին ըսի.

- Իմ ունեցած տեղեկութիւններու համաձայն, Փարաջանովը դուռը բանալու սովորութիւն չունի... յատկապէս՝ երբ ներսը զբաղուած ըլլայ: Լաւ կ'ըլլայ, որ ի հարկին փողոցէն կանչես անոր, եւ ըսէս որ դուն դուրսէն եկած «ժուրնալիստ» ես:

Իմ բծախնդիր ու իրատես ընթերցող՝

Այս դէպքին մասին թէեւ ակնարկած եմ այլ առիթներով, սակայն այս բաժինը այս մանրամասնութեամբ չեմ ներկայացուցած: Այդ պատճառով ալ, յուշագրութիւններուս մէջ նմանօրինակ դէպքեր կը պատահին, եւ յաճախ նոյն դրուագը կրնայ ունենալ իր տարբերակները, որոնք սակայն իմաստային առումով զիրար չեն հակասեր: Գալուստը այդպէս ալ ըրաւ ու... յաջողեցաւ: Ան դժուարութեամբ գտած էր Փարաջանովի բնակարանը, եւ երբ դուռերը փակ գտած էր իր առջեւ, սկսած էր փողոցէն կանչել անոր անունը: Յանկարծ պատուհան մը կը բացուի, ու Փարաջանով ներս կը հրաւիրէ զինք: Թիֆլիս մեկնող Գանատահայ զբօսաշրջիկներէն՝ Գալուստի ընկերներէն մէկը՝ Լեւոն Հասըրճեան հետեւեալ ձեւով կը նկարագրէ անոր վերադարձը հիւրանոց:

- Գալուստը ուրախ տրամադրութեամբ վերադարձաւ Փարաջանովի մօտէն, կարծէք թէ մեծ յաղթանակ մը տարած ըլլար: Ան իր խանդավառութեամբ վարակեց նաեւ՝ մեզ: Զարմացած էր Փարաջանովի ջերմ ընդունելութեան ու լուսանկարուելու պատրաստակամութեան համար: Կ'ըսէր. «Եղբայր հազիւ ծանօթացած, սկսաւ տէղէ մը հին ծաղկաման մը հանել ու երկու ձեռքով ցուցադրել, ուրիշ տեղէ մը հին գորգ մը բերել եւ ուսին նետել, եւ կամ իր նախշած մէկ սիւնը գրկած լուսանկարուելու դիրք բռնել... իսկ ես անընդհատ կը նկարէի ... ու կը նկարէի»: Այդ օր Գալուստին համար ուրախութեան եւ տօնական օր էր: Աշխուժութիւն մը եկած էր վրան...:

Իմ համբերատար ընթերցող՝

Այն տարիներուն, Մոնթրէալի ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկեան» կեդրոնէն ներս գործող Հայագիտական ամպիոնը կը վարէր բանաստեղծ եւ գրականագէտ՝ Մանուէլ Քէօսէյեանը, որուն մահէն (2007) ետք ամպիոնը մնած եւ մկրտուեցաւ «Մանուէլ Քէօսէյեան» անունով ու շարունակեց գործել ղեկավարութեամբ Շահէ Թանաշեանի: Այլոց շարքին Շահէն առիթով մը իբրեւ (արուեստագէտ լուսանկարիչ) հրաւիրած էր նաեւ Գալուստ Պապեանին, որուն ներկայացնելու «պարտականութիւնը» վերապահուած էր ինծի: Գալուստը իր խօսքին մէջ լայնօրէն անդրադարձաւ Փարաջանովեան թեմային, ու ընթացքին պատմեց նաեւ Լեւոնի պատմածը գրեթէ նոյնութեամբ աւելցնելով.

Փարաջանովի կոլաժներեն

- Կարծէք թէ Փարաջանովը սկիզբէն նախապատրաստուած էր ու բեմադրած թէ տան որ մէկ անկիւնը, ինչ առարկաներու հետ, ի՞նչպիսի կեցուածք պիտի ընդունի:

Հակառակ անոր, որ ատկէ առաջ ես Գալուստին հանդիպած էի Թորոնթօ՝ իրենց տունը, սակայն առիթ չէր եղած այս մասին զրուցելու: Պահը յարմար համարելով, ես ալ իմ հերթին բացայայտեցի Ալիքի եւ Անահիտի հետ կապուած վերոյիշեալ պատմութիւնը:

Գալուստը դառնալով ինծի ըսաւ.

- Հիմա կը հասկնամ...

Իմ արդարամիտ եւ իրատես ընթերցող՝ ստիպուած եմ անգամ մը եւս համեստութիւնս մէկ կողմ դնելու, որովհետեւ պէտք է տեղեկացնեմ քեզի, որ մինչ այդ 1985-ին, ես հրատարակած էի արդէն Փարաջանովի մասին լոյս տեսած առաջին գիրքը՝ «Նռան Գոյնը» (COULEUR DE LA GRANADE), Պէյրութի մէջ: Որուն մէջ հրատարակած եմ երկու տասնեակ լուսանկարներ Գալուստէն, որուն լուսանկարչական արուեստը, շնորհիւ փարաջանովեան շարքի, աւելի ճանաչում ստացաւ ու գնահատուեցաւ... նոյնի՛սկ որոշ արտահայկական հարթակներու վրայ:

Այս գիրքի մէջ լոյս տեսած յօդուածները, տպաւորութիւններն ու կարծիքները հաւաքելու եւ խմբագրելու ընթացքին, հնարաւորութիւն ունեցայ հանգամանօրէն ուսումնասիրելու, եւ առաւել եւս խորանալու Փարաջանովի ստեղծագործական կեանքին եւ անոր արուեստին մէջ: Եւ որովհետեւ մինչ այդ տեսած էի Փարաջանովի գործընկերոջ՝ ռուս բեմադրիչ՝ Տարկովսկիի «Հայելին» Երեւանի մէջ 1974-ին եւ «Հրեղէն Ձիերը» Ճարտարապետութեան արուեստարան՝ Անի Թոթոյեանի ընկերակցութեամբ եւ մեկնաբանութեամբ, Փարիզի մէջ 1977-ին: Ինծի համար համեմատաբար աւելի դիւրին էր ընկալել բազմաշերտ, բազմիմաստ եւ բազմաբովանդակ «Նռան Գոյնը», զոր քսանէ աւելի անգամներ առիթ ունեցած եմ ցուցադրելու, վերլուծելու եւ մեկնաբանելու... տարբեր քաղաքներու մէջ: Մի զարմանաք եթէ խոստովանիմ, որ իւրաքանչիւր ցուցադրութեան ընթացքին միշտ տարբեր բնոյթի, նոր տարածականութիւններ յայտնաբերած եմ ֆիլմին մէջ ու փորձած՝ տեղուոյն վրայ լուսաբանել ու մեկնաբանել:

Այս բոլորէն ետք անզուսպ ցանկութիւն մը ունէի հանդիպելու Փարաջանովին:

Ոչ միայն «Նռան Գոյնը», այլեւ ողջ փարաջանովեան ֆիլմարուեստը իր իւրայատուկ ոճով ու «խորհուրդ Խորին» ծալքերով, մէկ կողմէ կ՚իջնէ մինչեւ մարդկութեան ներաշխարհի ոգեղէն յատակներ, եւ միւս կողմէ կը բարձրանայ մինչեւ անջրպետեան անհուն ու անվերջ լուսեղէն տարածքներ...:

Փարաջանովը իր տուն-թանգարանին առջեւ

Պէյրութ, «Նոազ Արք» Ցուցասրահ, 1988, Յունուարի վերջը

Ցուցասրահի մուտքին նստած կ'աշխատէի, երբ յանկարծ ուրախ տրամադրութեամբ ներս մտաւ Ճաքին (Թադեւոսեա՞ն) եւ անմիջապէս տեղեկացուց որ Հոլանտա պիտի մեկնի, ներկայ ըլլալու համար նաեւ՝ Ռոտերդամի միջազգային ֆիլմարուեստի փառատօնին, ուր պիտի ցուցադրուին աշխարհի քսան լաւագոյն ֆիլմերը, որոնց շարքին նաեւ՝ Փարաջանովի «Սուրամի Ամրոցը» ժապաւենը: Եւ աւելցուց.

- Իմ ունեցած տեղեկութիւններու համաձայն, հոն անձամբ ներկայ պիտի ըլլայ նաեւ՝ Սերկէյ Փարաջանովը: Եթէ քու հրատարակած «Նոան Գոյնը» գիրքէն քանի մը օրինակ տրամադրես ինծի, մէկ կամ երկու օրինակ կը նուիրեմ անոր, եւ այդ կապով կը փորձեմ հարցազրոյց մը յաջողցնել իր հետ...:

Ինչ մեղքս պահեմ, ես իրմէ աւելի ուրախացայ եւ խնդրեցի Ճէքիէն որ Փարաջանովին հարց տայ թէ *«Ո՞ր եւ ինչպէ՞ս կարելի է հանդիպիլ անոր»:*

Սակայն, իմ հետաքրքրասէր ընթերցող, որպէսզի ճիշդ ընկալէք այս դրուագի իմաստն ու կարեւորութիւնը, շարունակելէ առաջ հարկաւոր է բացատրեմ թէ Ճէքին ո՞վ էր: Ան սլացիկ հասակով, կենսալից, ուշիմ, կիրթ ու գեղեցիկ պարմանուհի մըն էր: Շատ մօտիկ բարեկամը մեր ցուցասրահին: Իր արուեստասիրութիւնն ու արուեստի իմացութիւնը, այնքան թրծուած ու զարգացած էր իր մէջ, որ ոչ միայն վերածուած էր կիրքի (passion), այլ նաեւ զարմանալիօրէն մասնագէտ արուեստաբանի տպաւորութիւն կը ձգէր, երբ կը վերլուծէր ու կը մեկնաբանէր արուեստը: Հայրը՝ Յովակիմը հնատիպ գորգերու խանութ ունէր Պուրճ Համուտի մէջ, եւ հնատիպ արուեստի գործերու հաւաքորդ էր միաժամանակ: Իսկ մայրը՝ գերմանուհի էր, եւ այդ օրերուն սկսած էր ուսումնասիրել հայ-գերմանական պատմամշակութային փոխ յարաբերութիւնները: Այնպէս որ Ճէքին պատահական մէկը չէր:

Ան Ռոտերդամեն վերադարձաւ քիչ մը յուսախաբ, որովհետեւ չէր կրցած իր ծրագրած հարցազրոյցը իրագործել, սակայն հնարաւորութիւն ունեցած էր քիչ մը զրուցելու իր հետ, «Նոան Գոյնը» գիրքը յանձնած էր անոր ու հարց տուած թէ գիրքի հեղինակը կ'ուզէ գիտնալ թէ *«Ո՞ր եւ ինչպէս կրնայ հանդիպիլ ձեզ հետ»:* Փարաջանով թեթեւ մը գիրքը թերթատելէ ետք, կտոր մը թուղթ կը գտնէ եւ ռուսերէնով նախադասութիւն մը գրէ անոր վրայ, փշաթելերով կ'երիզէ զայն, ու կը յանձնէ Ճէքիին... գիրքի հեղինակին համար: Ապա նմանօրինակ ուրիշ թուղթ մըն կը պատրաստէ ու կը նուիրէ իրեն: Յետագային այդ նախադասութիւնը թարգմանեց ինծի Մկոն (Քանդակագործ՝ Մկրտիչ Մազմանեանը), ուր կը՝սուէր. ***«Իմ բնակարանս Մնջրպետն է»:*** Փարաջանով «Նոան Գոյնը» ֆիլմին մէջ եւս օգտագործած էր այս նախադասութիւնը, որուն մեկնաբանութիւնը բազմիմաստ է եւ խոր: Դժբախտաբար փարաջանովեան այդ մասունքը Այնճար արխիւներուս մէջ է, իսկ ես այս տողերը կը գրեմ Երեւանէն: Այնպէս որ կը խոստանամ այլ առիթով մը հրապարակել այն:

Փարաջանեան իր տուն թանգարանը ունի Երեւանի մէջ, որ արուեստասէրներու (յատկապէս օտարներու) ամենասիրուած ու ամենափնտռուած վայրերէն մէկն է: Այս տուն թանգարանը, գիտահետազօտական բնոյթ ունի, որովհետեւ ոչ միայն հոն մեկտեղուած են Փարաջանովի իրագործած, եւ իր մասին վաւերագրական բոլոր ժապաւէնները, գիրքերն ու պատկերագիրքերը, ինչպէս նաեւ՝ մենագրութիւններ ու բազմաթիւ թեր ու դէմ յօդուածներ. այլ նաեւ ցուցադրութեան դրուած են իր փակցանկարները (collage), որոնք իրենց գեղեցկութեամբ, արտայայտչականութեամբ ու ինքնատիպութեամբ, ուրոյն տեղ ու նշանակութիւն ունին կերպարուեստի պատմութեան մէջ: Այս «Տուն-Թանգարանը» անհրաժեշտ հնարաւորութիւնները կրնայ ընձեռել այն բոլոր մասնագէտներուն, որոնք ակադեմական մակարդակով կ'ուզեն ուսումնասիրել, վերլուծել ու մեկնաբանել Սարգիս Փարաջանեանի ստեղծագործական կեանքը: Իսկ 2010-ին Լոս Անճելոսի մէջ ստեղծուեցաւ նաեւ՝ «Փարաջանեան-Վարդանեան» հիմնարկը, ուր եւս կարելի է ուսումնասիրել Փարաջանովի ստեղծագործական վաստակը:

Մեր բոլորի (ըլլայ ազգային թէ համամարդկային) պարտականութիւնն է, նմանօրինակ մեր մեծերը *(Ինչպէս. Արշիլ Կորքին, Ռուբէն Նաքեանը, Երուանդ Քոչարը, Գրիգոր Չիլթեանը, Լեւոն Թիւթիւնճեանը, Եագուլովը, Մուրատովն ու շատ-շատեր)* նախ՝ ճանչնալ, արժեւորել ու մեծարել մեր մէջ, եւ ապա միջազգային հարթակներու վրայ եւս ներկայացնել, որովհետեւ ասոնք համամարդկային արժէքներ են ազգային ըլլալէ առաջ ու ետք...: ■

Ես գրեցի սցենարը, ես ջանացի նկարել այն...

Սերգեյ Փարաջանով

Կինեմատոգրաֆը բռնկումների արվեստ է, յուրատեսակ էքստազ: Պրոկոֆևի «Ռոմեո Ջուլիետը» ... Ոչ ոք չէր ուզում լսել Ռոմեոյի տառապանքը: Բոլորի մեջ հակակրանքն էր խոսում: Մեռավ հանճարը...

Այսօր հանկարծ Պրոկոֆևն արդեն ապրված է... Պրոկոֆև գիտեն բոլորը: Նրան ընկալում են իբրև երաժշտության պլաստիկ լուծում:

Եթե «Սայաթ-Նովան» այսօր որևէ մեկի հակակրանքն է շարժում, դա գուցեն նշանակում է... Չշտապենք:

Ի դեպ, ես արվեստագետ եմ բարձրագույն կրթությամբ, ես ջանում եմ ինչ որ բան արտահայտել:

Ես ստեղծել եմ հինգ միջակ, գուցե նույնիսկ վատ նկար: Կային այնտեղ բռնկումներ թե ոչ, դա չէ կարևորը: Պատահեց մի բան ողբերգության հավասար, որ խթանեց իմ մտածողությունը... Խթանեց: Ես սկսեցի մտածել պլաստիկայով: Նորից վերադառնալ խաղարկման կինեմատոգրաֆ ես չեմ կարող... ոչ մի ժանրի մեջ: Ես չեմ կարող նույնիսկ սովորական նամակ գրել, ես բոլորովին այլ կերպ եմ զգում:

Ինձ առաջարկում են «Անուշ» նկարել: Դա հիշեցնում է իմ նախորդ աշխատանքը՝ «Նախնիները», հիշեցնում է ծիսական պոեզիա: Բայց եթե անգամ նկարեի «Անուշը», սցենարը չէի գրի... դիալոգներ և այլն:

Այսօրվա օրը շատ ավելի բարդ է...հարյուրապատիկ ավելի պատկերավոր:

Ինչ անել: Ես գիտեմ, դժվար կլինի նշանավոր օպերատոր Սուրեն Շահբազյանին նորից ապարատը ձեռքն առնել ու նկարահանել ընդհանուր պլաններ, մարդիկ՝ մրջյունների նման:

Երբ Ֆելինին դիմում է «Սատիրիկոնին», «Քաղցր կյանքին», դա ինձ չի հրապուրում, «Ջուլիետի և ոգիների», «Ութ և կեսի» աշխարհը ինձ՝ իբրև արվեստագետի, հետաքրքրում է... ռեժիսորի ասոցիացիաներով: Այն, ինչ նա է անում, հիմա «Սատիրիկոնով» ծիծաղելի է՝ (ինձ գոնե այդպես է թվում) այժմեականություն, պատմական զգեստներ, և սատիրա: Սա ավելի մանր է, քան «Blow up»ը՝ նկար այլ փիլիսոփայությամբ (չնայած ես չեմ տեսել Անտոնիոնիի այդ նկարը): Ես չեմ կարդացել Ֆելինիի մասին գիրքը, ինչ որ չեմ ուզում կարդալ, թե նա ինչ է մտածում, ինչ է ասում: Ես այնքան եմ ցնցված նրա մտածողությամբ: Ես մտածողությամբ հարազատանում եմ նրան: Բայց իմ մանկությունը ավելի ուժեղ է նրանից: Պետք է տեսնել իմ տունը: Դա զարմանալի տուն է: Պետք է տեսնել իմ մորը: Այսօր, 73 տարեկան, նա արտիստիկ է:

Ամերիկյան այսօրվա կինեմատոգրաֆը զվարճալիից և գիգանտից այն կողմ չի անցնում (իմ տպավորությամբ), նա չի կարող ստեղծել վառ հոգեբանական մտածելակերպ: Այդ անում են Ֆրանսիան, Իտալիան, Անգլիան...

Պետք է վստահել մարդկանց. ինչո՞ւ չվստահել: Դա նշանակում է չվստահել ինքդ քեզ:

Ես գրեցի «Սայաթ-Նովա», սցենարը, ես ջանացի նկարել այն: Ես գրել եմ «Խոստովանանքը» սցենարը, նկարել «Հովնաթանյան» նկարը: Ինչպիսին կլինի իմ վաղվա օրը՝ ես չգիտեմ: ■

Գարուն 1970 թ. 1-ին համար, էջ 80-81:
Գրի է առել Գ. Յանովսկայա-Միսակյանը:

https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Garun1967/1970/1970(1)_ocr.pdf

Գնահատականներ և կարծիքներ Փարաջանովի մասին

Փարաջանովը«**Նռան գույնը**»ֆիլմով մի քանի տասնամյակ առաջ մղեց կինոն»:

Ֆեդերիկո Ֆելինի

Կինոյի տաճարում կան պատկերներ, լույս և իրականություն: Այդ տաճարի վարպետը Սերգեյ Փարաջանովն է:

Ժան-Լյուկ Գոդար

«Կինոյի աշխարհը մի հրաշագործ կորցրեց: Փարաջանովի երևակայությունը հավերժ կդյութի և ուրախություն կպարգևի աշխարհի ժողովուրդներին»:

Ֆեդերիկո Ֆելինի, Տոնինո Գուերա, Ջուլիետա Մազինա, Ալբերտո Մորավիա, Մարչելո Մաստրոյանի, Բեռնարդո Բերտոլուչի:

(Վարպետի մահվան առիթով Երևան հղված հեռագիրը)

««Մոռցուած նախնիներու ստվերները» ժապաւէնով Փարաճանով կը ստեղծէ արուեստի գլուխ-գործոց մը, որ առանձինն պիտի բաւէր դասելու համար զինք շարժապատկերի պատմութեան կարեւորագոյն դէմքերու շարքին:

«Մոռցուած նախնիներու ստուերները» ամբողջութեամբ ու կատարեալ գործ մըն է անկատար մարդուն մասին, կը կրէ կեանքը իսկ ինք կը խօսի մահուան մասին, մեզի կը շնորհէ շատ բան, ու մեզմէ կը խլէ միայն մէկ ժամ ու երեսունըհինգ վայրկեան:

Անիկա մեր բոլորին հպարտութիւն առթող երեւոյթներէն մեկն է»»:

Սամիր Ֆարիպ «Ալ-Շարարա»

Փարաճանովի ժապավէնը ոչ աւելի եւ ոչ ալ նուազ դժուարիմաց է, քան հարուստ եւ բարդ բանաստեղծութիւն մը, որ անշուշտ, ժապաւէն-բանաստեղծութիւն մըն է, իրագործուած անսանձ զգայապաշտի մը կողմէ: Ասկէ զատ ուղղակի դիպաշար եւս չկայ հոս, այլ կայ նոր ոճով ձայն եւ երաժշտութիւն, սակայն երբեք՝ խօսակցութիւն:

«Նռան գոյնը» շքեղ եւ ինքնատիպ ժապաւէն մըն է, կընճռոտ, վիճելի եւ խորհրդանշական, այնքան որ հայկական մշակոյթը կը ցոլացնէ:

Շէյլա Պենսըն
«Լոս Անճելիս Թայմզ»
Յունուար - 10 - 1981



1985 թ. մարտին Մովսես Հերկելյանի (Ծիրանի) խմբագրությամբ, որպես «Գառնի» մատենաշարի թիվ 1 հրատարակություն լույս է տեսել «ՆՌԱՆ ԳՈՅՆԸ» ամսագրային ձևաչափով գիրքը: Այս հրատարակությունը խմբագրի հոդվածների կողքին այլ հոդվածների ու նյութերի ժողովածու է, որոնք բարեխղճորեն հավաքված են հայաստանյան և համաշխարհային մամուլից և ամբողջովին նվիրված են Սերգեյ Փարաջանովին (Սարգիս Փարաջանյան) և նրա մեծատաղանդ կինոստեղծագործություններին:

«Դրօշակի» սույն համարում Փարաջանովին նվիրված նյութերում Արեւմտահայերեն և Մաշտոցյան ուղղագրությամբ կատարված բոլոր մեջբերումները, ինչպես և Գալուստ Պապյանի լուսանկարները վերցված են այս ամսագրից:

Այս նյութի հետ դրված լուսանկարը հիշյալ «գրքի» շապիկն է՝ Փարաջանովի հետ արված Գալուստ Պապյանի լուսանկարների շարքից:

Պիտակաւորումներէն անդին

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

– Ծայրայեղական՞ ես, – հարց տուաւ ինծի զիս ճանչցող երէց ազգական մը, որ գիտէր, թէ կուսակցական եմ:

Ծայրայեղական՞: Այո՛, այդպէս էր, եւ դաշնակցական ըլլալը շատերու համար կը նշանակէր ծայրայեղական ըլլալ: Եթէ կ'ուզէք՝ որեւէ քաղաքական յանձնառութիւն վերցնելը ծայրայեղական կրնար նկատուիլ, անկախ անկէ, թէ ո՞ր կուսակցութեան կը պատկանէիր:

Երիտասարդութեանս օրերուն վերաբերող այս դրուագին մասին գրած եմ ասկէ առաջ, զայն վերապատմել չէ նպատակս: Եթէ դա՛ռնեալ յիշեցի, պատճառը այն է, որ վերջերս այդ պիտակաւորումներուն մասին կարդացի հետաքրքրական յօդուած մը՝ գրուած 18 տարեկան քեպէկուհիի մը՝ Léa Lacroix-ի կողմէ, Մոնթրէալի Le Devoir օրաթերթի 2024 նոյեմբեր 4-ի թիւին մէջ՝ «Réflexions sur l'engagement politique et l'étiquette militante» («Խոհեր քաղաքական յանձնառութեան եւ մարտնչողի պիտակին մասին», որ ցոյց կու տայ, թէ միայն մեզի յատուկ երեւոյթ մը չէ այդ):

Աւելցնեմ անմիջապէս, թէ պիտակաւորման ախտը երկար ատեն գոյութիւն ունեցած է իրարու հետ անհաշտ, զիրար չհանդուրժող մեր ներքին հատուածներուն միջեւ, բայց բարեբախտաբար այդ ժամանակները անցած են, եւ ներկայիս մեր աւանդական կուսակցութիւններու պատկանողները իրարու հանդէպ աւելի յարգալից են, կը գործակցին ու ազգային կենսական հարցերու առնչութեամբ աչք ծակող տարակարծութիւններ չունին: Գիտենք, որ թշնամիները երկար ատեն օգտագործեցին մեր այդ թերութիւնը մեզ իրարմէ հեռացնելու եւ իրարու հակադրելու համար: Այդ թշնամիները կը շարունակեն փորձել նոյնը ընել այսօր (վկայ՝ Սփիւռքի ու Հայրենիքի միջեւ պատեր ստեղծելու ճիգերը), բայց կը յուսամ, որ մեր ժողովուրդը աւելի հասուն կը գտնուի ու կ'ընդդիմանայ նման ազգակործան փորձերու: Տեսնենք, սակայն, թէ ի՞նչ կ'ըսէ այս երիտասարդուհին, որ կը հաւաստիացնէ, թէ ինք քաղաքական կուսակցութեան մը մարտիկներէն է չորս տարիէ ի վեր եւ կ'անդրադառնայ, թէ «կարգախօսներէն եւ համոզումներէն անդին», որքան բարդ է քաղաքական յանձնառութիւնը: «Վայրկեանական կը պիտակաւորուինք, իբր «մէկուն դաշնակիցը» եւ «միւսին հակառակորդը»: Այդ պիտակաւորումները, կ'ըսէ ան, «փոխանակումները կը դարձնեն սահմանափակող արգելքներ՝ խուցեր, որոնք մեզ կ'արգելափակեն՝ առանց առիթ տալու, որ կարենանք գոյութիւն ունենալ կանխակալ կարծիքներէ անդին»:

Ան չի հերքեր գաղափարական ու արժէքներ ունենալու կարիքը, նոյնիսկ կը դրուատէ մարտնչողի պիտակ ունենալը, բայց կ'ըսէ, կը նկատեմ, որ «շատ յաճախ այդ պիտակները կը սառեցնեն փոխյարաբերութիւններն ու կ'արգիլեն աւելի բաց երկխօսութիւնները»: Էֆա ինքն ալ սկիզբը հարց տուած է, թէ ինչպէ՛ս տարբեր տեսականներ ունեցող մարդիկ կրնային ի մի բերել իրենց ուժերը քաղաքական դաշտին մէջ: «Բայց, ժամանակի ընթացքին, բացայայտեցի, թէ իրենց տարակարծութիւններէն անդին, անոնք կը բաժնէին անկեղծ շահագրգռութիւններ, խորապէս հիմնուած արժէքներ, թանկագին գաղափարներ, որոնց համար իւրաքանչիւրը յանձնառու կը դառնար»: [...] «Եւ համոզուած եմ, որ իրենց պիտակներէն անդին, կրնայինք այդ անձերուն միջեւ գտնել աւելի բազմաթիւ հասարակաց կէտեր, զորս կ'ենթադրէինք: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ մենք զմեզ միմիայն մեր տարակարծութիւններով սահմանելու փոխարէն, որոշէինք մեզ միացնող կէտերով գործել: Եթէ, թէկուզ պահ մը միայն, մէկ կողմ դնելով կուսակցական հակամարտութիւնները, ընդունէինք մարդկայնութեան ու անկեղծութեան բաժինը, որ քաղաքական իւրաքանչիւր յանձնառութան մէջ առկայ է»: Ցնորքներ չունի գրողը, «հեքիաթներու աշխարհին մէջ չենք ապրիր»,– կ'ըսէ ան,– բայց ինչ որ չի հասկնար «այն ատելութիւնն է եւ անվստահութիւնը, որ մէկ կուսակցութենէն միւսը կը փոխանցուին, յաճախ առանց հիմնաւորման: Այս թշնամանքը զիս կը սպառէ, երբեմն կը յուսահատեցնէ»:

Յօդուածագիրը կը ցանկայ, որ տարբերութիւնները ընդունինք որպէս հարստութիւններ, որովհետեւ, «հիմնականին մէջ, մարտնչիլ առաջին հերթին կը նշանակէ ունենալ ապագայի տեսլական մը, ներդրում մը՝ ի խնդիր հասարակաց ծրագրի մը: Բայց եթէ մարտնչողի մեր պիտակները մեզ այն աստիճան բաժնեն իրարմէ, որ մեզ մեկուսացնեն, կրնանք կորսնցնել մեր կարողութիւնը գաղափարները հաւաքական արարքներու վերածելու»: Ան կ' աւարտէ իր այս կոչ-յօդուածը, հրաւիրելով, որ մարտնչողները թոյլ չտան, որ «պիտակները որոշեն մեր յարաբերութիւնները եւ ամեն առիթ օգտագործեն կամուրջներ կերտելու հոն, ուր մինչեւ հիմա պատեր կառուցուած են»:

Ահա կոչ մը, որուն կրնան ընդառաջել, պէ՛տք է, որ ընդառաջեն ամենէն փոքր հաւաքականութիւններէն մինչեւ ամենէն մեծերը՝ պետութիւնները, ազգերը՝ իրենց անմիջական միջավայրը թէ աշխարհը դարձնելու համար մարդուն արժանավայել կեցավայրը:■

Գողցան

Պարգև Աւագեան
Աւարտած է Հալէպի պետ. համալսարանի Երկրաչաբական բաժնի Էլեքդրոն ճիւղը:
Վարած է ուսուցիչի և դաստիարակի պաշտօններ: Հրապարակած է յօդուածներ Գանձասար շաբաթաթերթին մէջ:

Գողցան՝ ժպիտը մեր դէմքէն, քունը մեր աչքէն, նոյնիսկ մեր ամենափոքր երազը իր ակունքէն: Յուսահատութիւն սփռելու համար չէ. յոռետեսութեան հրաւէր չէ. այլ դառն իրականութիւններ իրենց մերկութեամբ տեսնելու հրաւէր: 25 Յուլիս 2024 կրկին հասած եմ Երեւան: Առաջին գործը որ ուզեցի իրականացնել՝ կեցութիւնս օրինականացնելն էր: Գրանցում: Ազնիւ պաշտօնեաներ հանդարտ ու մեղմ ժպիտով դիմաւորեցին, ու գործարքը կատարեցի: 15 օր ետք ստացայ գրանցումս: Չեմ գիտեր ինչպէ՞ս բացատրել՝ Սուրիան է առաջին, թէ՛ Հայաստանն է երկրորդ հայրենիք: Գրանցումովս արդէն դարձած էի թիւ, սակայն ես իրենց ու իրենք զիս չէին ճանչնար:

Տիեզերագնաց մը կ'ըսէ ետ նայեցայ տեսայ երկրագունդը կէտ մըն էր՝ անջրպետի մէջ ու մենք վերածուած ենք այդ կէտին մէջ, կէտ մը աննշան ու այլամերժ: Երկրագունդը ղեկավարող անցեալին կ'ըսէին ոսկեայ երկու միլիոնը, բայց մեր օրերուն դարձած են ադամանդեայ երկու միլիոնը, որոնք յանձն առած են մեր փոխարէն մտածելն ու նոյնիսկ մեր հաշւոյն որոշումներ կայացնելը: Կը մտածեմ արդեօք նեղացած եմ. Ո՛չ չեմ նեղացած այլ դառնացած՝ դառնացած եմ՝ դառնութիւններէն, անյայտ կորած ուրախութիւններէն, իր էութենէն պարպուած մարդկութենէն: Կեանքի փորձառութեան մէջ սուղ գին վճարած բանիմաց ծերունին օր մը ըսաւ.

- Գալիք օրերը աւելի վատ պիտի ըլլան, ով ուր կը ծնի հոն պիտի մեռնի, որովհետեւ ադամանդեաները ստեղծեցին երկու բեւեռով աշխարհ մը, որուն երկու հենասիւներն են՝ առաջինը գործակալ ու անողնաշար քաղաքական ղեկավարները, երկրորդը անգութ ու անաստուած դրամատէրեր ու գործարարներ:

Այս երկուքը իրենք կ'որոշեն թէ մարդ կերպարին որն է պիտանի եւ որը ո՛չ. Երբ բախտը կ'ունենաս պիտանի կոչումին, կը ստանաս կեանքդ գոյատեւելու իրաւունքը՝ «վեզան». Ոչ թէ կեանքդ վայելելու այլ իրենց ծառայութիւն մատուցելու: Վերոնշեալ աշխարհը ղեկավարող 2 միլիոնին շնորհիւ, փուլ եկած են բոլոր այն ինչ որ սրբութիւններ էին:

Սրբութիւնը միայն սրբազան ու եկեղեցի չէ. սրբութիւն էին լեզուն, հայրենիքը, հողը, մշակոյթը, ընտանիքը եւ վերջապէս նոյն ինքը մարդը: Մեծ խաբկանք ու համատարած սարսափ. Սարսափ անցեալէն ու սարսափ ներկայէն: Հասած է ժամը ահազանգի, լսելու կանչը սրտի զարկի, շօշափելու բազկերակը ազգի եւ հասկնալու թէ արժէքը որակին մէջ է եւ ոչ քանակին: Ազգային ինքնութեան կիզակէտը պէտք է ըլլայ ամբողջական հաւատքը գալիքին: Աշխատանք ծաւալենք ու դառնանք ճառագայթող ու չվերածուինք իրենց իսկ չափերով խրտուիլակի:

Անցեալի ու ներկայի կամրջումի անհրաժեշտութիւնը պէտք չէ ըլլայ սակարկելի եւ ոչ ալ քննարկելի. սակայն միշտ ընդգծելով ոչ անցեալը կլանիչ եւ ոչ ալ ապագան խանգարիչ:

Պատմութիւնը կազմող երրորդութիւնն է՝ անցեալ, ներկայ ու ապագայ: Միշտ զուգահեռներ արձանագրելով՝ բայց սորվելու միտումով, լաւը հաստատելու ու սխալը սրբագրելու. ներկան արդար գնահատելու ու ապագան նախատեսելու ու ըստ այնմ ծրագրելու:

Ղեկավարի յատկութիւնը այսօրը տնօրինելու մէջ չէ, այլ վաղը նախատեսելու եւ հաւաքականութիւնը անոր լոյսին տակ առաջնորդելու: Մեծ է թիւը իշխանաւորներու ու շատ սակաւ ղեկավարներու: Հոս ընդգծումով պէտք է մատնանշենք ժողովուրդի ու մասսայի դերակատարութիւնը վերոյիշեալ խնդրին մէջ:

Պարտաւոր է մասսան հասկնալ անվտանգային համակարգի կառուցուածքը, գործառութային դերաբաշխումը, դաւանաբանական արժէքաբանական առանձնայատկութիւնները, իրաւաքաղաքական, խորքային հիմնադիրները, ռազմաքաղաքացիական յարաբերութիւններու մակարդակներն ու հիմնախնդիրները:

Եթէ մենք պիտի մեղադրենք ժողովուրդը այս արժէչափային «սթանտարտներով» միշտ հաւաքականութիւնը պիտի մեղադրենք որպէս ոչ գիտակից եւ խեղճ: Սակայն այն օղակը որ ինքզինքին վերապահած է գիտակից ըլլալ եւ նախատեսել շնորհքով օժտուած ըլլալու իրաւունքը պարտաւոր է ժողովրդականացնելու այն բոլոր նախադրեալները, որոնք կը ծառայեն ժողովուրդի յարաբերաբար աւելի ճիշդ եւ կամ այլ բացատրութեամբ նուազագոյն սխալին կողմնորոշուելու: Միշտ պահպանելով այն հիմնական սկզբունքը, որ պէտք է պայքարիլ ժողովուրդներու ընդհանուր հարստութեան (հոգեմտաւոր) կործանարար աղքատացումին դէմ:

Աւելի ջլապինդ, եւ աւելի անտեղիտալի ոյժով մը չվստահելով ոչ խորաններու մաղթանքներուն, եւ ոչ ալ բեմերէ արտասանուած ցանկութիւններուն:

ՄԱՆԻՖԵՍՏ Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
1890 թ.

ՀԱՅԵՐ,

Այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում: Դարերից ի վեր ստրուկ Թիւրքա-Հայաստանը ազատութիւն է պահանջում:

Հայը, որ դեռ երէկ շլինքը ծռած Եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզվելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

Դարերով ճնշվել է Հայ ժողովուրդը թուրք բռնապետների լծի տակ: Դարերի ընթացքում ցանել է, բայց պտուղը երբէք չի վայելել. աւազակ տիրողը յափշտակել է: Դարերի ընթացքում անարգել են նրա սրբութիւնները. բայց հայը կրել է այս բոլորը, կրել է համբերութեամբ. շարունակելով ողողել հայրենիքի հողը իր քրտինքով... Դարերի ընթացքում հայը կարծէք թէ կամեցաւ ապացուցանել մարդկութեանը թէ կարելի է ազատութիւն ձեռք բերել կուլտուրական ճանապարհով: Քաղաքակիրթ Եւրոպան խոստացաւ վերջ տալ թուրքերի բարբարոսութիւններին Հայաստանում: Սակայն անցան տարիներ տարիների յետևից և հայերի դրութիւնը իրանց հայրենիքում ոչ թէ միայն չլաւացաւ, այլ աւելի ծանրացաւ և այժմ միանգամայն անտանելի, դժոխային է դարձել: Հայի պէս համբերող ազգն անգամ անկարող է շարունակել իր գոյութիւնը այդպիսի երկրում:

Բայց համբերութիւնն էլ ունի իր սահմանը: Գաղաթնակէտին հասցրած հալածանքները վերջապէս սթափեցրին հային. այսօր նա վճռել է կամ մեռնել կամ ազատուել: Եւ ահա Էրզրումը և ապա Կ. Պոլիսը աներկիւղ բողոքում են անիրաւութիւնների դէմ. հայը այլ ևս չի խնդրում, այլ պահանջում է, և պահանջում է զէնքը ձեռքին:

Սուլթանը սարսափահար է. թուրք կառավարութիւնը գլուխը կորցրել է:

Այսօր Եւրոպան իր առաջ տեսնում է մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները:

Այդ ժողովուրդը հասկացել է, որ իր ոյժը իր մէջ է. երէկուայ ստրուկ, համբերող հայաստանցին այսօր յեղափոխական է դարձել:

Հայոց հարցի վճռի յետաձգելը այլ ևս անկարելի է: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամեն մի լուրջ հայրենասէրի այդ բոլոր յեղափոխական ոյժերի միութեան և դաշնակցութեան հարցն է:

Այդ յեղափոխական գաղափարի դրօշակիրն է «Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը», որ սրտանով դիմում է բոլոր հայերին և հրաւիրում է կանգնել մի դրօշակի տակ:

«Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը» թէև նոր է հանդէս գալիս իբրև կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւնն է. խմբերի, որոնք նոյն իսկ հայ ժողովուրդի ձգտումների ծնունդն են: «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ոյժերը, կապելով իր հետ բոլոր կենդրոնները: Նպատակ դնելով թիւրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչև արեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար:

Միանանք ամենքս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը. նա, ով այսօր երեսը կը դարձնի ժողովրդից և չի հետևիլ նրան, նա այդ ժողովրդի հակառակորդն է, նրա թշնամին է...

Ուրեմն, եղբայրներ, միանանք յանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ:

Եւ դուք, երիտասարդներ, միշտ և ամեն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ, միացէ՛ք ժողովրդի հետ:

Եւ դուք, ալեզարդ ծերունիներ, ոգևորեցէ՛ք ձեր որդոց և օգնեցէք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

Եւ դուք հարուստներ, բաց արէք ձեր քսակները, զէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ:

Եւ դու հայ կին, ոգի ներշնչիր սուրբ գործի մէջ:

Եւ դու հայ հոգևորական, օրհնիր ազատութեան զինուորներին...

Սպասելու ժամանակ չէ...

Համախմբուենք, հայեր, և քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը:

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»

1989 թվականի դեկտեմբերի 1-ին Երևանում կայացած
Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ Ազգային Խորհրդի միացյալ նիստում
ընդունվեց պատմական որոշում՝
Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին:

ԴՐՕՇԱԿ